

510422

ԵՓՐԵՄ

ԽՈՒՐԻ

ԳԻՐՔ
ԱՂՕԹԻՑ

ԱՍԱՑԵԱԼ

ՍՐԲՈՑՆ ԵՓՐԵՄԻ ԽՈՒՐԻՆ
ԱՍՈՐԻՈՑ

Զ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
1933

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԽՈՐԵՆԱՑ Ս.

ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԹՈՐԳՈՄԱՑ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՑ

Տ. ՄԵՍՐՈՊԱՑ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ




ՉԵԿՈՒՑՈՒՄՆ

ՊԱՏԻՒ մեծապատիւ վարկանի զուգադասական՝ ո՛րչափ ցածագոյն եւ ստորակ ոք իցէ, եթէ ըստ դիպաց խօսակից լինել հասանիցէ նմա իչխանի կամ թագաւորի՝ եւ արդ՝ ԱՂՕԹՔՆ ԽՕՍՔ Է ՀՆՈՒԹԻՒՆ, խնդրուածք բարեաց ի նմանէ, դեղ բժշկութեան, արգել մեղաց, եւ մեծ պէն ընդդէմ վորձութեանց՝ ապա քանի՛օն վառս վառաց եւ բարձրութեան գրելի է ղլինել ընդ Աստուածոյ խօսակից։

ՔԱՆզի յորժամ զաստուածային գիրս ընթեռնումք, Աստուած խօսի ընդ մեզ՝ ցուցանելով մեզ զիւր սուրբ կամս. եւ յորժամ յաղօթս կամք, մեք համարձակեալ խօսիմք ընդ Աստուածոյ։ եւ յայնժամ «զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա՝ լսէ մեզ». Ա. Յովհ. Ե. 14. եթէ իցեն մեր իղձք որպէս

սրբոցն, զի հաճոյք և փառքն Աստուածոյ կատարեսցին յաղօթս. կամ զոր խնդրեմք՝ իցէ յօգուտ փրկութեան մերոյ և այլոց. ուր և վասն այլոց յաղօթելն, զնոցա աղօթսն եւս անձին չահիմք։

Այսմ դէտակն ուշ ունելով աստուածմաց Հարքն սուրբք, յօրինեցին եւ նոքա ըստ սուրբ Գրոցն լուսաւոր աւանդից՝ մատեանս խրատականս և աղօթականս։ Մի է յայնոցիկ և առաջիկայս մատենիկ աղօթից սրբոյն Աբբայ Եփրեմի խուրին՝ այսինքն վերծանողի Ասորւոյ՝ աշակերտի սրբոյն Յակոբայ Մծբնացւոյ ի չորրորդ դարուս. զոր վեցերորդ տպագրութեամբս աստի յերուսաղեմէ՝ տամք եւ մեք եւ որ ինչ այլ էին նորա աղօթք ի գրչագիրս, հանդերձ յաւելուածովք օրական աղօթից եօթնեկին ի վերջէ։



Եւ նստաւ ընդ աջմէ Հօր։

և ամենայն ընտրելոց սրբոց դասուց։

Մեղա՛յ եւ սուրբ մարմնոյն Քրիստոսի եւ պաշտելի արեանն, յիմանալիսն և ի ըզգալիսս՝ անդէպ մտածութեամբ, աներեւոյթ սխալանօք, անճառ խաւարային այլանդակ խորհրդով։

Մեղա՛յ, մեղայ հոգւովս եւ մարմնովս և մտօքս, և բանիւ և գործով, և գիտութեամբ և անգիտութեամբ, կամաւ և ակամայ, և ամենայն մարմնովս՝ երեք հարիւր վաթսուն և հինգ յօդուածովքս, երկոտասան անդամօքս, հինգ զգայութեամբս, աչօքս յայ-

բատ հայելով, եւ զամենայն գեղեցկութիւն նկարացն զընտնելով, եւ զվատթարսն տեսանելով. ականջօքս՝ չարին ունկն դնելով եւ ամենայն քաղցրաձայնութեան. հոտոտելեօքս՝ զմեղաց հոտն առնելով եւ զամենայն անուշահոտութիւնս. բերանովս՝ զհամադամ քաղցրութիւնսն ճաշակելով եւ զխաոնակ եւ զանսուրբսն՝ անպիտութեամբ ձեռօքս՝ բազում մեղս շօշափելով. ոտիւքս՝ յանպատշաճ տեղիս գնալով։

Մեղա՛յ Աստուծոյ, մեղայ եւ վեց չարժամբս, ի վեր՝ հպարտութեամբ, ի վայր՝ տրտմութեամբ, յառաջ՝ յանդգնութեամբ, յետուստ՝ սրտմտութեամբ. յաջ՝ հոգեկան մեղօք, ի ձախ՝ մարմնական մեղօք։

Մեղա՛յ եւ տասն պատգամացն Աստուծոյ, յանձնառականին եւ հրաժարականին. զյանձնառականն չեմ կատարեալ, եւ զհրաժարականն եմ արարեալ։

Մեղուցեալ եմ Աստուծոյ եւ հոգեւորական կրիւքս, հասարակ զգայութեամբս եւ մըտօքս, եւ ամենայն չփոթմանց հետեւելով, եւ ամբոխելով զիս՝ ի յաստուածահաճոյ հանդարտութենէն հեռացեալ եմ։

Եւ այսպէս խաւարամած լինելով՝ եօթն մահու չափ մեղօք մոլորեալ եմ. հպարտութեամբ, ամբարտաւանութեամբ, ամբարհաւաճութեամբ, գոռոզութեամբ, սնոտիաւուրթեամբ, փառասիրութեամբ, պատուասիրութեամբ, զգեստասիրութեամբ, պճնելով, անձնահաճելով, կեղծաւորելով, սուտ առաքինի ձեւանալով, զաղօթս ի ցոյցս մարդկան առնելով, անարժանութեամբ յեկեղեցի մտանելով, ի խաչ և ի բուրվառ և յաւետարան մերձենալով և կարգալով։

Մեղա՛յ Աստուծոյ՝ եւ թիւր

խոստովանելով, եւ զմեղս պատճառելով. խեթիւ և ատելութեամբ եւ անմաքուր վարուք և անսուրբ հոգւով զԲրիստոս պատարագելով, զԱստուած Հայր հայհոյելով, զՈրդին Աստուծոյ արհամարհելով, և զսուրբ Հոգին թշնամանելով, և զանբարկանալին Աստուած ի բարկութիւն չարժելով ի վերայ աշխարհի և մարդկան։

Ո՜հ, որ յերեւելիս աստուածապաշտ և աղօթող և պահեցող, և ի ծածուկ թերահաւատ և ծոյլ՝ և յամենայն բարեաց ունայն, յերեւելիս կուսան, և ի ծածուկ վաւա-

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐ

չոտ. յերեւելիս ժիր, և ի ծա-
ծուկ թռոյլ. յերեւելիս սուրբ,
և ի ծածուկ պիղծ. յերեւե-
լիս պարկեշտ, և ի ծածուկ
ագահ. յերեւելիս ողորմած,
և ի ծածուկ անողորմ. յերե-
ւելիս աղքատասէր, և ի ծա-
ծուկ աղքատատեաց. յերե-
ւելիս առաքինի, և ի ծածուկ
պղերգ. յերեւելիս գովելի՝
և ի ծածուկ պարսաւելի:

Արդ, զո՞րս ասացից եւ կամ
զո՞րս թուեցից, երբ ոչ եղեր
կայ և ոչ թիւ: Մեղուցեալ
եմ կարգիս՝ զանձն իմ ընդ
արդարս համարելով և զայլս
քամահելով, զսուտս սրբոց
ոչ մեծարելով: Եւ հայհոյու-

թեամբ մեղուցեալ եմ Աս-
տուծոյ. զանուն միայն ունիմ
քահանայի և ոչ զգործն, զօ-
րինակն ունիմ և ոչ զճշմար-
տութիւնն. քանզի ամենայն
անպատրաստութեամբ և ան-
կարգութեամբ կալով՝ զմա-
հուն օրն եւ զանաչառ դա-
տաստանն Աստուծոյ և զդժո-
խոց ահն և զարքայութեան
սէրն մոռացայ կամապաշտե-
լով, հակառակելով, անհնա-
զանդ լինելով ի հեզութենէ,
և ի խոնարհութենէ փախչե-
լով, զծերսն չպատուելով,
զծնողսն չսիրելով, ստահա-
կութեամբ չերջելով մեղու-
ցեալ եմ:

Մեղա՛յ Աստուծոյ և բարկացու-
ղութեամբ, ցասմամբ, սըրտ-
մըտուխթեամբ, զազանաբար
յարձակելով, և զեզբարս խա-
ծանելով, կազ եւ կռիւ առ-
նելով, եւ չիշոցք տալով. ի
չար կարծիս դատելով, խռով
կալով, սուտ հաչտութիւն
առնելով, և զհոգիս իմ կորու-
սանելով, և բարս գազանի ու-
նելով, և զանբան անասունս
անխնայ հալկանելով, իմարդ-
կան սիրոյն որոշելով. պատակ-
տումն առնելով, բանսարկե-
լով, խարդախելով, խորամանկ-
կելով, երկմտելով, թերահա-
ւատելով, բազում տրտունջ
և նզովք հանելով, զուր և ա-

նիրաւ զրպարտելով, քրթմընդ-
ջելով, չոգմոգելով։
Մեղա՛յ, մեղա՛յ, մեղայ և նա-
խանձ ունելով, մախալով,
դիմադարձելով, ոխակալու-
թեամբ, ատելութեամբ,
քինահանութեամբ, չարու-
թեամբ, նենգելով, քամահե-
լով, զչարելով, սուտ վկայելով,
բամբասելով, արհամարհելով
և զառաջնորդս եկեղեցւոյ և
զվարդապետս և զծերս և զը-
տղայս. և զայլոց իրաւն սուտ
առնելով, և զիմ սուտն իրաւ.
զայլոց փոքր մեղան մեծ հա-
մարելով, եւ զիմ բազումս
ծածկելով. զայլոց չիւղն գե-
րան կարծելով, և զիմ գերանն՝

չիւղ, զայլոց բարին չար ասե-
լով, եւ զիմ չարն բարի. զայ-
լոց լոյսն խաւար տեսանելով,
և զիմ խաւարն լոյս. զայլոց
առաքինութիւնն մարդահա-
ճութիւն դատելով, եւ զիմ
մարդահաճութիւնն՝ առաքի-
նութիւն. և յանդուգն լինե-
լով, ի մէջ բանից անկանելով.
լրբելով, ի խրատուց երես
դարձուցանելով, եւ առաջի
ծերոց լռութեամբ ոչ կալով.
և հրամանաց և բանից նոցա
ոչ լսելով: Ուխտ դնելով, եւ
ոչ կատարելով, և անյուսու-
թեամբ ի խորս տրտմութեան
անկանելով. զպատուիրանս
Աստուծոյ արհամարհելով,

Սուրբ Գրոց ունկն չդնելով, ի
սուրբ հրեշտակէն իմմէ չակ-
նածելով, և ի բարեաց թա-
փուր լինելով, ընդ չարսն
խնդալով, զբարեկամսն ատե-
լով, զթշնամիսն չսիրելով, զա-
տելիսն Աստուծոյ չատելով:
Ո՛, թէ զորքանութիւնն ո՛ր-
պէս կարացից ի յայտ բերել,
որ բազում են քան զաւազ ծո-
վու. քանզի մեղուցեալ եմ
Աստուծոյ ագահութեամբ և
արծաթասիրութեամբ, խաբե-
լով, աւելի առնլով եւ պա-
կաս տալով, վաճառասիրելով,
կծծելով, գաղտ գողանալով,
յայտնի յափշտակելով և զրկե-
լով. աւելի ստանալով, աղքա-

տին չողորմելով, առ օտարսն
չգթալով, զեղբարս չսիրելով,
զկարօտեալսն չգարմանելով,
զհիւանդն չտեսանելով, տկա-
րին չսպասաւորելով, զաղ-
քատս արհամարհելով, զհա-
րուստսն գովելով, յաջողելոցն
ծառայելով, ունեւորացն սուտ
հաճութիւն առնելով, աչա-
ռելով և մարդահաճոյ լինե-
լով, սուտ երդնլով, և զԱս-
տուած ի բարկութիւն շար-
ժելով։

Մեղա՛յ, մեղա՛յ և քան զհող
երկրի ծանրագոյն մեղայ.
քանզի մեղայ Աստուծոյ որկ-
րամոլութեամբ, ի կերակուրս
և յըմպելիս ցանկանալով. ա-

ւելի առնլով, եւ անյագ ու-
տելով, զորովայնս խճողելով,
առանց ժամու և ժամանակի
ճաշակելով, զպահան արհա-
մարհելով, առանց մեծի հի-
ւանդութեան զգինին սիրե-
լով, զմարմնոյս դարմանն հո-
գալով, զորովայնս պաշտելով,
եւ խաչին Քրիստոսի թշնամի
անուանելով։

Մեղուցեալ եմ իմ սուրբ կար-
գիս՝ ծուլութեամբ եւ հեղ-
գութեամբ, անժուժկալ լի-
նելով, տգիտանալով, զու-
սումն ատելով, դատարկ կե-
նալով, զսուրբ գիրս ոչ կար-
դալով, քնով դանդաղելով,
և ի ժամատեղն ծանրանալով,

արթուն ոչ կալով, և պատմութեան սրբոց միտ ոչ դնելով, բազմախօսութիւն առնելով, սաղմոսի ականջ ոչ դնելով, եւ կամ ձեռագործով յապաղելով, յօրանջելով, ձգտելով, ձանձրանալով, յԱստուածոյ ոչ երկնչելով, ի հրապարակս նստելով, չատախօս լինելով, ի թաւերս եւ ի ծաղրս լկտեաց հեչտանալով, և ծաղր ածելով։

Մեղա՛յ Աստուածոյ, մեղա՛յ, մեղայ և պոռնկական խորհրդով, գիճութեամբ, աղտեղութեամբ, քղջախոհութեամբ, վաւաչոտ ցանկութեամբ, զանազան և զպիր խորհրդով,

ի գիշերի եւ ի տունջեան պէսպէս կերպարանօք, քնով և արթնութեամբ. և յայրատ հայելով, կատակերգելով, անամօթ լինելով, լրբելով, ցոփ խօսելով, և տափակամարմնաշարժութեամբ զմիտս աղտեղելով. առ իգականս և առ արուականս, առ անասնականն ապականեալ խորհրդով մեղանչելով, և առ ամենայն մոլորական պատրանս երազական փորձութեանց քնոյ և արթնութեան, որ ի ժամու և տարաժամու, անկեալ է ի վերայ տառապեալ հոգւոյս, զոր չարին յօժարութեամբ մեղուցեալ եմ Աստուծոյ։

Եւ արդ, ահա յայտնեալ հրա-
պարակեցի զորպիսութիւն մե-
ղաց իմոց առաջի Տեառն, և
ապաշաւեալ զղջացեալ եմ
յամենայնէ, և եկեալ ի խըն-
դիր թողութեան սխալանաց
իմոց: Եւ դու, հա՛յր մեր և
սուրբ տէր, հայեցեա՛ զգթու-
թիւնն Աստուծոյ, և չնորհեա՛
քաւութիւն ինձ յԱստուծոյ,
հրամանաւն՝ զոր ունիս իբրև
տոսէ Աստուծոյ. որում փառք,
գոհութիւն և պատիւ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:

Աղօթք արձակման արարեալ մեծի ռա-
բունապետին Գրիգորի Տաթեւացւոյ:

Ողորմեացի քեզ մարդա-
սէրն Աստուած, եւ թողու-
թիւն չնորհեացէ ամենայն
յանցանաց քոց, խոստովանա-
ցելոցն և մոռացելոցն, և ես
կարգաւս քահանայական իշ-
խանութեան և հրամանաւն
աստուածայնի, թէ զոր ար-
ձակիցէք յերկրի եղիցի ար-
ձակեալ յերկինս, նովին բա-
նիւն արձակեմ զքեզ յամե-
նայն մասնակցութենէ մե-
ղաց քոց, ի խորհրդոց, ի բա-
նից և ի գործոց, յանուն Հօր
և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ, զի զոր լինչ գործիցես բարիս՝ եղիցի քեզ ի բարեգործութիւնն և ի փառս հանդերձեալ կենացն. ամէն։

Աղօթք դարձելոցն ապաշխարութեան։

Անհկիզըն Աստուած եւ անհասանելի, բա՛ց զաչս սրտի իմոյ բանիւ գիտութեան քոյ, բաւական լինիլ զոհանալ զանուանէդ քումմէ, գովել և փառաւորել զքեզ և արժանապէս գնալ ի ճանապարհս քո։ Դատաւոր արդար, երկայնամտեա՛ առ իս բազմամեղս քոյով մարդասիրութեամբդ,

զի եղկելի եմ մեղօք. զեղխեալ անօրէնութեամբ եւ զապիր գիջութեամբ գմարմինս իմ ապականեցի։ Որ էիր յառաջ էականութեամբ Աստուած ընդ Հօր, ընդ մեզ հաճեցար բնակել ընդ հողեղինացս, և ընդ մարդկան չըրջեցար ընդ մեղաւորացս. թո՛ղ Տէր զմեղս իմ եւ թեթեւացո՛ զծանրաբեռնեալս, ժառելով հայցեմ ի քէն, զի ժամանակ է ապաշխարութեան։

Ի քէն հայցեմ բազումողորմ տէր, աղբիւր կենաց, լուսաւորեա՛ զաչս սրտի իմոյ լուսով գիտութեան քոյ. յոյս աշ-

խարհի Քրիստոս, ծագումն անճառելոյ լուսոյ, կեանք՝ որոց սիրեն զքեզ, կերակուր անսպառելի, կենդանութիւն յաւիտենից:

Հրով հոգւոյդ սրբոյ հալեա՛ զպաղումն ամենացեալ սրտի իմոյ, որ ձուլեալ է եղկելի գործովք անօրէնութեան: Ուղղեա՛ զո աստուածայլին զօրութեամբդ զանուղղայ խորհուրդս իմ չար ուղեկանին ասի կենացս:

Ճրագ ճշմարտութեան և ճառագայթատու, մերկեա՛ յինէն զխաւար մթացեալ մեղացս: Զեղկելիս մեղօք յիչեա՛ զո աստուածութեամբդ յա-

հագին աւուրն յայնմիկ ահեղ մեծի դատաստանին:

Ալէկոծելոց նաւահանգիստ, եւ լուսթիւն ունայնացելոցս յարդարութենէ եւ ունողիս զանօրէնութիւն չար գործովք: Ի չարիս չարչարեալ է անձն իմ. զի՞նչ արարից մեղուցեալ անձամբս. պէսպէս ախտիւք պղծեցայ յանառակութեան, զրկեցայ ի հայրենական լուսոյն, չնչեցի զձեռագիր որդեգրութեան կենաց. ջեռուցի զհուր յաւիտենական:

Սուրբ սրտիս կարգամ առքեզ, ամենասուրբդ Աստուած. վտանգելոյս օգնական, վիրաւորելոյս բժիշկ, տեղի տարա-

կուսելոյս, կորուսելոյս խընդ-
րող, մոլորելոյս եւ գերելոյս
դարձուցիչ, ապաւէն ամե-
նեցուն որք կարգան առ քեզ:
Տուր տառապելոյս և տարա-
կուսելոյս, գերելոյս ի սատա-
նայէ, զմեծ քո զողորմութիւն:
Ահա հասեալ եմ ի դուռն
մահու չարաչար գործովք ի-
մովք, զաչս իմ ի վեր համ-
բառնամ առ բարձրեալ Տէրդ
և բարերար, հայցեմ ի քէն՝
բաց զդուռն ողորմութեան
մեղուցեալ հոգւոյ իմոյ, որ-
պէս բացեր աւազակին զդ-
դուռն դրախտին քոյ. եւ մի՛
ամօթալից դարձուցաներ զիս
ի քո առաջ ողորմութենէ,

զի գիտեմ սուրբ արեան քոյ.
յիշեա զիս եւ ողորմեա ինձ,

Աստուած:

Որ անեղ եւ անսկիզբն ես,
անստեղծ և արարիչ ամենայն
արարածոց, որ ոչ աչխարհս
տանիլ զքեզ կարէ, և ոչ եր-
կինք բովանդակել կարեն, ի
վեր ես քան զերկինս և անբաւ
քան զծագս, երեւելիք և ա-
ներեւոյթք բովանդակեալ են
առաջի քո:
Դու տիրես ամենեցուն եւ
հրամանաւ քո կառավարին
ամենայն արարածք: Դու աղ-
քատացուցանես, և դու մե-
ծացուցանես, դու սպանանես,
հարկանես եւ բժշկես: Դու

ես Աստուած իմ, եւ փրկիչ
վտանգելոյս ի սատանայէ, ա-
ռողջացուցիչ հիւանդիս մե-
ղօք, ընդունող աղօթից և կա-
տարիչ խնդրուածոց, նայեա,
տէր, ի պաղատանս իմ, և ըն-
կալ զիս մարդասիրութեամբ
քով։

Մի՛ բարկութեամբ քով խրա-
տեր զիս, եւ մի՛ սրտմտու-
թեամբ քով յանդիմաններ
զիս. զի դու ես տէր և ա-
րարիչ, հայր և ստեղծիչ. և
ես առ ո՞վ երթիցեմ, զի օգ-
նութիւն իմ ի քէն է։ Հա-
յեաց ի պաղատանս իմ, և ըն-
կալ զիս մարդասիրութեամբ
քո. զի քեզ մեղայ, և զքեզ

աղաչեմ, եւ զքեզ խոստո-
վանիմ։

Մեղայ յերկինս և առաջի քո.
մի՛ ընդ դատեալսն տանջեր
զիս, և մի՛ ընդ դատապար-
տեալսն պատուհասեր, այլ
ընդ կամարարս կամաց քոց
ընկալեցիս, եւ ընդ պահողս
պատուիրանաց քոց պահեա
զիս. զի թէ առանց ներելոյ
զբազում յանցանս իմ քննես,
ապա ընդունայն է ինձ խոս-
տումն յարութեան եւ հուր
գեհենին է ինձ ժառանգու-
թիւն. եւ եթէ զդատար-
կաբանութիւնս իմ եւ զան-
դէպ զայլ անօրէնութիւնս իմ
խնդրեսցես յինէն, ապա ե-

բանեմ չեղելոցն յորովայնէ։
Հայեա՛, տէր, ի պաղատանս
իմ և ընկա՛լ զիս մարգասի-

րութեամբ քով։
Ողորմեա՛ ինձ որպէս քանա-
նացւոյն, որպէս պոռնկին,
որպէս մաքսաւորին. և զթա՛
յիս որպէս յանառակ որդին,
և որպէս աւազակին չնորհեա՛
բազում յանցանաց իմոց ըզ-
թողութիւն։ Ընկա՛լ զիս որ-
պէս զհայհոյիչն եւ զհալա-
ծիչն. փարատեցո՛ զխաւար


մեղաց յաչաց իմոց։
Բա՛ց զաչս իմ զլցեալս երկ-
րային ցանկութեամբ՝ երկ-
նային լուսովդ, եւ քաջկեա՛
զվիրաւորեալ լեզուս իմ ի

բամբասանաց։ Սրբեա՛ զսիրտ
իմ ի չար և ի պիղծ խորհրդ-
ոց, վասնզի քեզ ցանկամ
տեառնդ իմոյ բարերարի և
բազմագութ իմոյ արարչիդ։
Մի՛ յաւիտենական ամօթոյն
ամաչեցուցաներ զիս, եւ մի՛
ահեղ դատաստանաւն դո-
ղացուցաներ. մի՛ տիեզերա-
կան հրապարակաւն զիս յան-
դիմաներ, եւ մի՛ աննեղելի

տանջանացն մատներ։
Մի՛ սոսկալի հրոյն պատու-
հասեր. այլ փրկեա՛ զիս ի
հրացեալ հնոցէն, ի հրահո-
սեալ գետոյն եւ յորդանցն
չարաթունից, ի հանապազորդ
նեղութենէն և ի կրճտելոյ ա-

տամանցն: Եւ բնակեցո՛ զիս ընդ կամարարս կամաց քոց յանանցական կեանսն: Զի ընդ նոսին արժանի եղէց գո-հանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ. ամէն:





Գառն Աստուծոյ՝ բառնող մեղաց։

ԱՂՕԹՔ ՋՕՐԱՒՈՐ

ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ԵՓՐԵՄԻ

ԽՈՒՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

ԱՍԱՑԵԱԼ

1. ՏԵՍ, տէր, զտառապանս իմ եւ զցաւս հոգւոյ իմոյ բազմամեղիս. դարձ, ներեա՛ և ի քեզ առաջնորդեա՛, որ ասացեր՝ դարձարուք առ իս, և ես դառնամ առ ձեզ։ Ինձ լքելոյս ողորմեա՛, ինձ եղկելոյս օգնեա՛, ինձ խաւար-

ըելոյս ճառագայթեա՛, լինձ մոլորելոյս առաջնորդեա՛, որ լի եմ մեղօք և անբաւ յանցանօք, և ի յորձանս անօրէնութեան տարաբերեալ ծփիմ, եւ առ քեզ ապաւինիմ, որպէս Պետրոսին՝ ձեռնարկեա լինձ: Գոչեմ որպէս զմաքսաւորն՝ արդարանալ, չընորհեա՛ զյանցանս իմ որպէս զաւազակին, բա՛ց և լինձ ըզդուռն կենաց ճանապարհին, եւ մա՛յծ զիս յարքունական առագաստին:

2. Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան, փրկեա՛ զըմբռնեալս՝ որ ի խոպս մեղաց ծովուն անկեալ եմ, զերծո՛ և զօրացո՛ զիս առնել զկամս քո, սգալ և լալ անդադար ի տուէ և ի գիշերի զամենայն անօրէնութիւն եւ ըզհեզգութիւնս իմ:

3. Աղբիւրդ կենդանութեան եւ անմահութեան, արբո՛ զծարաւեալ հոգի իմ յառատաբուղխ վտակէ քումմէ, որ պասքեալ տոչորիմ ի բազում անօրէնութեանց իմոց. խթեա՛ ի քարացեալ սիրտ իմ, և հա՛ն լինձ արտասուս ապաշխարութեան:

4. Գանձդ ամենայն բարութեանց, չնորհեա՛ լինձ դանկի միոյ չափ ի քո բազում առատ բարեացդ, որ չարա-

չարս եմ աղքատացեալ եւ քաղցեալ. զգեցո՛ եւ կերա-
կրեա զիս արտասուօք ապաշ-
խարութեան:

5. Լոյս ճշմարիտ Քրիստոս՝ որ լուսաւորես զամենայն մարդ, լուսաւորեա՛ զիս զխա-
ւարեալս մեղօք, բա՛ց զաչս սրտի իմոյ, եւ հաստատեա յերկիւղ եւ ի սէր պատուի-
րանաց քոց:

6. Մի՛ դատեր եւ մի՛ դա-
տապարտեր զիս, տէր, ըստ ան-
բաւ զազիր գործոց իմոց, եւ մի՛ կացուսցես զիս ընդ այլն որք զայրացուցին զքեզ. այլ ընդ փառաւորեալսն փառա-
ւորեա՛, եւ ընդ պսակեալսն

պսակեա՛, և ընդ բերկրեալսն ուրախացո՛:

7. Շատ է լինճ տէր, բայց յուսամ յողորմութիւնդ քո, զի և չունք կերակրին ի փչրա-
նաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց. չուն կոչ-
եա զիս, տէր, զի գայցեմ զկնի քո:

Հովիւ բարի, խնդրեա՛ զիս զմո-
լորեալս՝ նաւապետ բարի ճի-
սուս, փրկեա՛ զիս ի բազմու-
թենէ ալեաց մեղաց իմոց, և տո՛ւր լինճ նաւահանդիստ խա-
ղաղութեան:

8. Տո՛ւր լինճ, տէր, սուգ և արտասուս, կարողացո՛ զմար-
մինս իմ, կակղացո՛ զքարա-

ցեալ սիրտ իմ, եւ ժողովեա՛ զմիտս իմ ի քեզ։ Ջնջեա՛ զբազմութիւն յանցանաց իմոց, և չնորհեա՛ ինձ զօգուտն իմ. ընկա՛լ և մի՛ անտես առներ զհառաչանս սրտի իմոյ։

9. Տո՛ւր ինձ լմաստութիւն, և տնկեա՛, տէր, զմահ և զերկիւղ քո ի սրտի իմում, լուսաւորեա՛ զխորհուրդս իմ. կարողացո՛ զարմինս իմ, ժուժկալութեամբ կա՛լ ի պատուիրանի քումմ յամենայն ժամ։

10. Բա՛ց, տէր, զաչս սրտի իմոյ և լուսաւորեա՛ հոգւովդ սրբով, պարգեւեա՛ ինձ առողջ խորհուրդս և առաքինի վարս, ողբալ հանապազ, ա-

հիւ և դողութեամբ կալ առաջի քո յամենայն ժամ անընդդատ։

11. Ո՛վ բարերար և մարդասէր տէր, առանց չարչարանաց և ժուժկալութեանց զի՞րդ ազատեցայց ի բազմութենէ մեղաց իմոց, զի մարմնովս տկար եմ և հոգւովս խաւար. ողորմեա՛, տէր, և որպէս կամիս օգնեա՛ ինձ։

12. Անոխակալ տէր, մի՛ վասն բազում չարեաց իմոց անտես առներ զիս, այլ դարձիր յիս, և դարձո՛ զամենայն ցանկութիւնս իմ ի քեզ, սիրել զքեզ միայն ի բոլոր սրտէ իմմէ, ի նուազ և յանպա-

ճոյճ կերակրոց ամբողջ պահեա՛ զմարմին իմ։

13. Պատկերացո՛, տէր, զանհրաժեշտ գալուստ քո առաջի աչաց իմոց, եւ դողացո՛ զմարմին իմ սգալ և լալ անդադար յերկիւղէ ահեղ դատաստանաց քոց, և մի՛ վհակեր զգուխ արարչական սիրոյ քոյ ի ստեղծուածոյս քո, որ մեղօքս եմ մեռեալ։

14. Սէեցո՛, տէր, զբարիս գործել ինձ յամենայն ժամ, և խափանեա՛ զամենայն չարիս ի չար մտաց իմոց, ի պիղծ և յանուղղայ գնացից, և ի չար սովորութենէ դադարեցո՛ զիս, և հաստատեա՛ յերկիւղ

և ի սէր պատուիրանաց քոց։

15. Սրեզակն արդարութեան փրկիչ իմ և ազատիչդ Ցիսուս Քրիստոս, ի լոյս քո ապաւինիմ, լուսաւորեա՛ և ջերմացո՛ զսիրտ իմ, հրակիզեա՛ զչար խորհուրդս իմ, և հալեա՛ զառնամանիս մեղաց իմոց։ Շնորհեա՛, տէր, զգաստուն հոգւոյ իմոյ, ծաղկիլ եւ պտղաբերել զարդարութեան պտուղն։

16. Ազատիչդ Քրիստոս, ազատեա՛ զիս ի դառնաչունչ օդոց մեղաց ձմերայնոյ, զխաւարեալ և զսառուցեալ հոգի իմ պայծառացո՛ և ջերմացո՛, և ցօղեա՛ զցօղ չնորհի ջերմու-

թեան քոյ ի յանդաստանս
մտաց սրտի իմոյ։

17. Շնչեա՛, տէր, զհարաւ
քաղցրաչունչ հոգւոյդ սրբոյ
ի խստացեալ եւ ի թանձրա-
ցեալ սիրտ իմ, և զարթո՛ որո-
տընդոստ փայլատակմամբ քով
զսառնացեալ և զցամաքեալ
միտս իմ։

18. Բա՛ց, տէր, զփակեալ
դուռն սրտի իմոյ, և ծագեա՛
ի ներքս զլոյս արդարութեան
ճառագայթից քոց։ Սրբեա՛
և զաղտ մեղաց իմոց, և զվէրս
հոգւոյ իմոյ բժշկեա՛, և ամրա-
ցո՛ երկիւղիւ քով, և զօրացո՛
առնել զարդարութիւն յա-
մենայն ժամ։

19. Աղբերացո՛, տէր, ըզ-
գլուխ իմ ի բղխումն արտա-
սուաց, լուա՛ զթարախ հոգւոյ
իմոյ, սրբեա՛ զզգայարանս իմ.
և զգործողս չարեաց փոխար-
կեա՛ ի զղջումն ջերմութեան
սիրոյ քոյ, զգաստ մարմնով
կեալ ի պատուիրանս քո։

20. Զգեա՛, տէր, զձեռն քո
ի նաւաբեկեալս՝ որ ընկղմեա-
լըս եմ ի խորս չարեաց, եւ
փրկեա՛ զիս ի սաստիկ ծովա-
ծուփ բռնութենէ ալեաց մե-
ղաց իմոց։ Սանձեա՛, տէր, եւ
կարկեա՛ զխստերախ միտս իմ
ի զբաղմանց ունայնութեանց
կենցաղոյս։

21. Սրբո՛, տէր, զծարաւ

հոգւոյ իմոյ յառաւտաբուխ
չնորհաց քոց, և մի՛ անտես
առներ զտուչորումն սրտի ի-
մոյ, որ պապակիմ ի տապոյ
աստի չարեաց իմոց, զովացո՛
և լուա՛ զապականեալ և ըզ-
հոտեալ չրթունս իմ ջրով ո-
ղորմութեան քոյ։

22. Ծագեա՛, տէր, զլուսա-
ւորութիւն եւ զխաղաղու-
թիւն չնորհաց քոց ի սրտի
իմում, և զցաւագին զիչեր
մեղաց ի մտաց իմոց հալա-
ծեա՛, և մարմնոյ իմոյ չնորհեա՛
զարիական վարս՝ առաքինու-
թեամբ կեալ ի հաճոյս կամաց
քոց յամենայն ժամ։

23. Հա՛ն, տէր, զփուչ մե-

ղաց ի սրտէ իմմէ, զի զհոգի
իմ հանապազ խոցոտէ և վի-
րաւորէ, և սերմանեա՛ սերմն
բարի ի սրտի իմում՝ աճե-
ցուցանել եւ պտղաբերել
զարդարութեան պտուղն։

24. Հալածեա՛, տէր, զխա-
ւար ի հոգւոյ իմմէ, և զգեցո՛
զլոյս արդարութեան ճառա-
գայթից քոց, զարդարեա՛ ե-
կիւղիս եւ զղջմամբ արտա-
սուաց զսիրտ իմ երկնչիլ ի
դատաստանաց քոց, և պա-
հել զամենայն պատուիրանս
քո։

25. Զարթո՛, զիս տէր, յա-
հագին խորութենէ քնոյ մե-
ղաց իմոց, և զտարակուսեալ

մարմին իմ զգաստացո՛ յամենայն գործս բարիս խորհել միշտ, մեծաւ երկիւղիւ առնել զհաճոյս քո յամենայն ժամ։

26. Ազատեա՛ զիս, տէր, ի ծառայութենէ մեղաց եւ խառնեա՛ զիս ի թիւս ծառայից քոց, որք սիրեցին զքեզ և զպատուիրանս քո պահեցին, տո՛ւր զերկիւղ նոցա ի սրտի իմում, և ուսո՛ զիս գնալ ի շաւիղս գնացից նոցա։

27. Թեթեւացո՛, տէր, զկարիս մարմնոյ իմոյ, և յաճախեա՛ յիս զշնորհս հոգւոյդ սրբոյ՝ լինել տաճար եւ բնակարան աստուածային կամաց

քոց. և անյագ սիրով սիրել զքեզ եւ ատել զամենայն ցանկութիւն եւ զսէր աշխարհիս այսորիկ, որով եղեւ կորուստ եւ յանցումն հոգւոյ իմոյ։

28. Ողորմեա՛, տէր, բնակիս զիս յանբնակ անապատիս, և ի ձեռն սորին արժանաւորեա՛ զիս խառնել ընդ առաջին սուրբք հարանցն՝ արի և ըզգաստ ժուժկալութեամբ ժառանգել զխոստացեալ պարգեւն։

29. Առաջնորդեա՛ ինձ, տէր, ի նեղ եւ ի նուրբ ճանապարհն, որպէս առաջնորդեցեր սրբոց քոց, եւ զօրացո՛

զտկարութիւնս իմ՝ ժուժկալութեամբ և համբերութեամբ գնալ ի ճանապարհս քո ջերմեռանդն սրտիւ։

30. Նայեա՛, տէր, ի նեխեալ և ի թարախեալ հոգի իմ, եւ լուա՛ աստուածային ջրով քով, եւ հոգեւոր աղիւդ համեմեա՛, և անուշահոտ իւղովդ սրբով օծեա՛, և կատարեալ առողջութիւն ընծեռեա՛։

31. Անօսրացո՛, տէր, զքունն աչաց իմոց, եւ թօթափեա՛ զնիւրհուն ի գլխոյ իմոյ, զի ծանրացեալ դանդաղանօք պաշարէ զմարմին իմ, արա՛ զիս, տէր, արթուն և պատ-

րաստ յամենայն ժամ, զի զգաստութեամբ եւ արդարութեամբ վարեցից զկեանս իմ։

32. Տե՛ս, տէր, զլքուն ողորմայնի իմոյ, որ զօրացեալ է ի վերայ իմ, և հանապազ յանկայ կերակրոց և ըմպելեաց և համեղութեան խորտկաց. այլ դու, տէր, յամենայնի կարող, կարեա՛ զյանկուրթիւն մարմնոյս տենչանաց։

33. Եւ քանզի մխիթար իմ ցնդեալ, պղտորեալ, բանդագուշեալ չրջի ի հոսանս երկրաւոր կենցաղոյս, այլ դու, տէր, լուսաւորեա՛ զաչս հոգ-

ւոյս, առանց զքաղմանց եւ երկմտութեանց՝ արի և լզգաստ ամենայորդոր փուլթով գալ ինձ հետ աստուածայինն սիրոյ քոյ։

34. Հալածեա՛, տէր, զամենայն չար մտածմունս յերկրաքարշ խորհրդոց մտաց իմոց, արմատ բարեաց տնկեա՛ հաստատութեամբ ի սրտի իմում, եւ պտուղ չնորհաց ի հոգի իմ նկարեա՛։

35. Աղաչեմ, բարերար և ողորմած տէր, արթունս և զբաարթունս պատրաստեա զիս. ուսո՛ ինձ գնալ ի ճանապարհս քո բարիս, զի արժանի եղէց մեծի փառաց քոց։

36. Եւ քանզի ցանկութիւն ճաշակման ամենայնիւ զբաղեցուցեալ զմիտս իմ խոտվէ, արդ, հալածեա՛ զորկորտութիւն յինէն՝ յորմէ խաբեցայ միշտ. և կերակրեա՛ զիս երկիւղիւդ քով սրբով։

37. Առաքեա՛, տէր, զմի ի սերովբէից քոց, զի բերելով զկայծակն հրոյ մերձեցուսցէ ի չրթունս իմ, և հանցէ ի բաց զանօրէնութիւնս, եւ զմեղս իմ սրբեսցէ, և զխորհուրդս իմ մաքրեսցէ, եւ չնչեսցէ զանօրէնութիւն եւ զաղտեղութիւնս իմ, և լուսաւորեսցէ զմիտս իմ ժառանգել նովաւ զկեանսն յաւիտենից։

38. Առաքեա՛, տէր, զբաժակ ուրախարար Հոգւոյդ սրբոյ ի յեղկելիս՝ որ ծարաւիմս առ քեզ, արբո՛ և զուարթացո՛ զեռանդն սիրոյ քոյ ի սրտի իմում. լո՛յծ և ի բաց ջնջեա՛ զմրուր դառնութեան յանցանաց իմոց։

39. Առաքեա՛, տէր, զլոյս քո, լուսաւորեա զմիտս իմ և զխորհուրդս իմ լուսով գիտութեան քոյ. զխաւար մեղաց մտաց իմոց հալածեա՛, և զտկարութիւն անձին իմոյ կարողացո՛ ի ջանս և ի վաստակս հոգւոյ իմոյ։

40. Առաքեա՛, տէր, զհրեշտակ խաղաղութեան քո՝ վերակացու և պահապան անձին իմոյ. եւ որպէս ետուր իշխանութիւն գնալ ի վերայ լժի և քարբի և կոխել զամենայն զօրութիւնս թշնամւոյն, աներկիւղս արասցես զմեզ յամենայն մեքենայից նորա, և զիս պահեա՛ որպէս բիբ ականն ընդ հովանեաւ թեւոց քոց։

41. Ցորժամ երթայցեմ, տէր, ի ճանապարհս, մի՛ թողուր զիս միայն. այլ առաքեա՛ զօգնականութիւն քո զհետ իմ՝ պահել զիս յամենայն վտանգութեանց սատանայի ի տուէ և ի գիշերի. եւ մի՛ տալ թոյլ մեզանչել

մտաց իմոց, այլ կոծել զկոծ մեծ ի վերայ մեղաց և անօրէնութեանց իմոց։

42. Պահեա՛ զիս, տէր, ի բանից և ի գործոց, ի տեսութեանց և ի զերիվ խորհրդոց, և զերկիւղ դատաստանի քոյ տպաւորեա ի սրտի իմում՝ անզբաղ յօժարութեամբ մտօք փութալ և պահել զպատուիրանս քո։

43. Փակեա՛, տէր, զդուռն մեղաց իմոց, եւ բա՛ց ինձ զդուռն լուսոյ և արդարութեան. զի երկիւղալից սիրով եկից զհետ կոչողիդ իմոյ արարչիդ, որ ասացեր՝ «Եկայք առ իս, ամենայն աչխատեալք և ծանրաբեռնեալք, և ես հանգուցից զձեզ»։ Եւ դարձեալ թէ՝ «Որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բաղխէ՝ բացցի նմա»։

44. Նայեա՛, տէր, ի մերկութիւն անձին իմոյ զոր կողոպտեաց թշնամին, և այժմ խայտառակ եւ ամօթալից կամ առաջի քո աստուածային գթութեանդ, մարդասիրեա՛ և զգեցո՛ ինձ զհանդերձ հարսանեաց, և մո՛ւյծ և ուրախացո՛ զիս ի կոչումն բազմելոց քոց։

45. Զգեցո՛ ինձ, տէր, զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք իմովք. ցո՛յց

զանօխակալութիւնդ քո յիս, և լուսափայլ ողորմութեամբ քո զարդարեա՛ զմերկութիւնս իմ։

46. Լո՛ւր, տէր, աղաղակի անառակիս, որ ամօթով կամ առաջի քո. զգանձն հայրենի վատնեալ՝ սովամահ կորնչիմ. կերակրիլ հաւասար եղէ խոզից անասնոց անբանից, եւ նմանեցայ նոցա։

47. Մի՛ մերժեր զիս, տէր, ի հայրական գթոյ քոյ. համարձակիմ ի խնամս սիրոյ քոյ. ի ծնողէդ վերջացայ և զորդիութիւն իմ ուրացայ։ Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո, չեմ արժանի կոչիլ որդի քո,

արա՛ զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց։

49. Դադարեցո՛ զիս, տէր, մեծաւ երկիւղիս քո. և դարձո՛ յանառակութենէ յարդարութիւն, յաղտեղութենէ ի սրբութիւն, ի ծուլութենէ ի զգաստութիւն. ժուժկալութեամբ եւ համբերութեամբ գնալ ի ճանապարհս քո ուղիղս։

49. Դադարեցո՛ զիս, տէր, ի չարաչար խորհրդոց իմոց եւ յառնելոյ զկամս մտաց իմոց եւ մարմնոյ իմոյ. զահագին օր գալստեան քո նկարեա՛ առաջի աչաց իմոց՝ դողալ եւ սարսիլ ի դատաստանաց քոց.

50. Պայծառացո՛, տէր, ըզ-
լապտեր հոգւոյ իմոյ որպէս
զիմաստուն կուսանացն. եւ
չնորհեա՛ պատրաստիլ արթ-
նութեամբ ընդ առաջ ելա-
նել երկնաւոր փեսայիդ, զի մի
մնացից արտաքս որպէս զյի-
մար կուսանանն:

51. Ծանո՛ւ ինձ, տէր, զճա-
նապարհս քո, եւ ուսո՛ւ ինձ
զարդարութիւնս քո. հեռացո՛
տէր, զմարմինս իմ ի խորհրդ-
դոց չարեաց, և հաստատեա՛
յերկիւղ բարեաց՝ սուրբ և
անարատ կալ առաջի քո յա-
մենայն ժամ:

52. Զանօրէնութիւնս իմ
ջնջեա՛, տէր. ի յոյս բարեաց

և յերկիւղ քո զմիտս իմ բե-
ւեռեա՛, լցեալ սիրով և հաս-
տատուն հաւատով սպասել
եւ ակն ունել մեծի գալըս-
տեան քոյ:

53. Զօրացո՛ զիս, տէր, ի
սէր պատուիրանաց քոց, ան-
սալ երկիւղիւ հրամանաց քոց,
սարսիլ և դողալ ի դատաս-
տանաց քոց, խնդրել զարդա-
րութիւն և զիրաւունս երե-
սաց քոց, և առնուլ զպար-
գեւս չնորհաց քոց:

54. Սրճակեա՛ զիս, տէր, ի
կապանաց մեղաց իմոց, եւ
զհնացեալս մեղօք՝ վերստին
նորոգեա՛. եւ զխաւարեալս
ի ցանկութենէ մարմնոյս,

լուսաւորեա՛ զնալ ի ճանա-
պարհս խաղաղութեան , զի
տեսցեն աչք իմ զփրկու-
թիւն քո , զոր պատրաստեցեր
սրբոց քոց :

55. Բժշկեա՛ , տէր , զանբըժ-
շկելի հիւանդութիւնս իմ՝
որ կարկամեալ զնիմ ի մա-
հիճս մեղաց իմոց , և դեգե-
րեալ կամ ի դուռն երկրորդ
Սելովմայ՝ սպասել և ակն ու-
նել մեծի գալստեան քոյ :

56. Հրամայեա՛ ինձ , տէր ,
որպէս անդամալուծին՝ առող-
ջանալ , խորտակել զանկողինս
ցաւոց իմոց , չբջիլ ընդ կա-
մարարս քո ի տան Տեառն ,
և ի գաւիթս Աստուծոյ ծաղ-

կիլ և ոչ մեղանչել :

57. Խորտակեա՛ , տէր , ըզ-
բռնութիւն սատանայի , հա՛տ
և ի բաց ընկեա՛ զզօրութիւն
նորա . արգե՛լ զյարձակումն
նորա ի վերայ իմ , զի մի՛ տա-
րապարհակ վարեալ զմարմին
իմ տանիցի յընդարձակու-
թիւն ճանապարհի , որ տանի
ի կորուստ եւ յապականու-
թիւն :

58. Ցիչեցո՛ , տէր , զբաղեալ
և մոռացեալ մտաց իմոց զա-
հաւոր և զսոսկալի գալուստ
քո և զդատաստանն անաչառ ,
զպատիւ եւ զփառսն արդա-
րոց , և զանհերելի տանջանսն
մեղաւորաց , և նոքօք զար-

հուբեալ դողացո՛ զմարմին իմ տեսանել զմահ հանապազ առաջի աչաց իմոց։

59. Բեւեռեա՛, տէր, զմարմին իմ ընդ երկիւղ քո, եւ ընդ սէր պատուիրանաց քոց զհոգի իմ, և զհրամայեալսն ի նմա՝ երկիւղիւ լսել, և առանց ձանձրութեան կատարել միշտ. և մերկանալ ի մեղաց և ի ցանկութեանց կենցաղոյս, և պայծառանալ վարուք առաքինութեան։

60. Փրկեա՛ զիս, տէր, ի գաղտաձիզ նետից սատանայէ, որ բազում մեքենայիւք պատեալ պաշարէ զիս. աւար առեալ զմիտս իմ՝ վարէ ի

դերութիւն ցանկութեան մեղաց, առնելով ծաղր եւ այպն կատականաց թշնամեաց իմոց։

61. Ամրացո՛ զիս, տէր, յերկիւղ քո, և զօրացո՛ զտկարացեալս զօրութեամբ քով. ըզհիւանդութիւն հոգւոյ իմոյ առողջացո՛, զցաւս մարմնոյս բժշկեա՛, և զչերմութիւն սիրոյ քո հաստատեա՛ ի սրտի իմում՝ չարչարակից վինել սրբոց քոց։

62. Դարձո՛, տէր, զդերեալս ի սատանայէ, և զմեղօք վաճառեալս յեզիպտական և ի խիստ տանջանացն. փրկեա՛ ի բռնակալ չար սպասաւորաց

զիւացն . եւ յեղեգնակոխ կաւոյ մեղացն հանցես եւ տարցես զիս յերկիրն աւետեաց ։

63. Ընկղմեա՛ , տէր , զթըշնամին իմ որպէս զզօրութիւն Փարաւոնի զի սպառնացեալ ի վերայ իմ խրոխտայ , հետամուտ եղեալ զկնի իմ դարձուցանէ զիս յառաջին յանցանն ընդ իշխանութեամբ իւրով՝ ծառայել մեղաց եւ անօրէնութեանց ։

64. Խաղաղացո՛ զիս , տէր , ի ծփանաց ալեաց խռովութեանց խորհրդոց , և զբազմութեան յորձանս մեղաց իմոց ցածո՛ , եւ կառավարեա՛

զմիտս իմ ժամանել յանքոյթ և ի խաղաղ նաւահանգիստն Հոգւոյդ սրբոյ ։

65. Ջերծո՛ զիս , տէր , ի լերինս քարանձաւի կամ ի տեղի անապատի , ուր և ողորմութիւն քո առաջնորդեսցէ ինձ՝ հանդիպել մեծի վառաց անուան քոյ . տո՛ւր ինձ զթեւս աղաւնակերպ Հոգւոյդ սրբոյ՝ թռչիլ եւ վերանալ , խառնիլ յերամս արդարոց ։

66. Ժամանեցո՛ զիս , տէր , յօթեւանս արդարոց քոց , և զհանգիստ աշխատութեան սուրբ հարցն պարգեւեա՛ ինձ . անտես արա՛ զյանցանս իմ , և դասաւորեալ պայծառացո՛

ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան քոյ։

67. Հաստատեա՛, տէր, զընթաղաղութիւն եւ զպայծառութիւն լուսոյ կենաց անձին իմոյ, զի մի՛ խոտորիցիմ յայլ կամ յահեակ, և դատապարտիմ յաւուր գալստեան քոյ պահանջելով զյետին նաքարակիսն մինչ խաչառ։

68. Մի՛ մերժեր զիս ի բազմագութ ողորմութեանց քոց. զպատրինեալս ի քեզ՝ ամրացո՛ և աներկիւղ պահեա՛ յամենայն որոգայթից սատանայի, զի մի՛ գերի վարեալ տանիցէ զմիտս իմ ի զբաղումն և ի չար ծառայութիւն։

69. Ուսո՛ զիս, տէր, առնել զարդարութիւն, խօսել զճշմարտութիւն, սիրել զսբրբութիւն եւ ատել զպղտեղութիւն, խոտորիլ ի չարեաց և գնալ ի ճանապարհս բարեաց։

70. Ապրեցո՛ զիս, տէր, յորսողացն այնոցիկ որք գան ի վերայ իմ՝ ըմբռնել զիս ի մեղս եւ ի ծուլութիւն անժուժկալութեան, մոռացումն առնել յանցանաց իմոց, եւ ոչ տալ յիշել զօր հատուցման և զսարսափելի պատասխանին՝ որ ասէ. «Երթա՛յք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից»։

71. Կանգնեա՛ զիս, տէր, ի գլորմանէս, և ի բազմամեղ անդնդայնի խորութենէս վե՛ր բացո՛ և բարձրացո՛ թեւօք Հոգւոյդ սրբոյ ի պարապումն աղօթից և ի խնդրուածս հաճոյից, ի ջնջումն մեղաց, ի նորոգումն կենաց, և ի լուսաւորութիւն մտաց, եւ ի կատարումն սուրբ պատուիրանաց քոց։

72. Խնդրեա՛, տէր, զեղծեալ և զկորուսեալ քո պատկերս, որ ի մէջ աղբի և տղմի մեղաց թաւալեալ կամ, գի՛տ ածեալ աւելաւ չնորհի քո, և գի՛ր ի գանձանակն անմեղութեան՝ յորմէ անկաւ։

73. Ե՛կ, տէր, ի տեսութիւն հիւանդացեալ հոգւոյ իմոյ, գի՛ր զձեռն քո ի վերայ իմ, և բժշկեա՛ ասելով՝ զօրացի՛ր, առ զմահիճս քո, եւ ե՛րթ ի ճանապարհն կենաց արդարութեան։

74. Ե՛կ, տէր, ի խնդիր մոլորելոյս, որ յածեալ չըջիմ արտաքոյ հօտի պատուիրանաց քոց. և գազանաբեկ եղեալ քարավէժ մեղօք կառափնատիմ ի դիւաց. ըմբռնեա՛ եւ ա՛ծ ի վարախն հայրենի, և խառնեա՛ ի գաւխթս հօտի քոյ։

75. Հետեւեա՛, տէր, զհետ ճողոպրելոյս ի քէն. արագա-

պէս փուլթացի՛ր, հա՛ս և ըմբռնեա՛ զապստամբեալս ի ձայնէ կոչման քոյ, և դի՛ր ի բանտ կապանաց անխզելի սիրոյ քոյ։

76. Մի՛ թողուր զիս, տէր, հեռանալ ի սիրոյ պատուիրանաց քոց եւ ի վարուց առաքինութեանց. այլ յորդորեա՛ առաւելուլ յամենայն գործս արդարութեան՝ առանց մեղաց և առանց խրխիք խափանուածոց պաշտել զքեզ սրբութեամբ եւ արդարութեամբ առաջի քո զամենայն աւուրս կենաց իմոց։

77. Մի՛ մատներ զիս, տէր, ի ցանկութիւն մեղաց եւ ի

հեշտութիւն կամաց, ի քուն աչաց և ի ցանկութիւն մըտաց, այլ պարապեա՛ երկիւղիւ քով. եւ ապրեցո՛ յամենահնար չար դիւացն և յաշխարհական զբօսանաց։

78. Մի՛ յապաղեր, տէր, տալ ինձ զփրկութիւն հոգւոյ եւ զչերմութիւն սրտի, զպարկեշտութիւն կերակրոյ և զժուժկալութիւն մարմնոյ, զբղխումն արտասուաց, զանդադար աղօթս, զհնազանդութիւն, զխոնարհութիւն և զհամբերութիւն յուսոյ։

79. Յաղթեա՛, տէր, հակառակամարտին իմոյ, և զօրացո՛ զիս ընդդիմակաց լինել

պատերազմողին ի վերայ իմ. և զգեցո՛ զինձ զզրահն հաւատոյ՝ պահօք և աղօթիւք սրբբել զախտս ցանկական և զխորհուրդս մարմնական, եւ առնուլ զչնորհս փրկական։

80. Տո՛ւր ինձ, տէր, տեղի ապաչխարութեան, աշխատութեան հանգիստ, խաղաղութեան հոգի եւ արդարոթեան ճանապարհ, ամբուռթեան զէն և պահապան փրկութեան, հաստատութեան յոյս եւ պնդութեան երկիւղ։

81. Անցո՛ զիս, տէր, ընդ հուն անցից մեղաց խորաթբռիչ ծովահեղձ ցանկական կենցաղոյս՝ ի լոյս աչաց և ի տեսութիւն մտաց. ի հանգիստ կենաց և ի հանգիստուն չնորհաց, և ի չաւիղս ճանապարհացն արդարութեան։

82. Շնորհեա՛ ինձ, տէր, լալ աչաց, արտասուաց հոսուն, մեղաց սուգ, մտաց սրտի երկիւղ, ոսկերաց իմոց սարսափուն և դողուն վասն տանջանաց, կենաց ճանապարհ, և անդադար պաղատանս։

83. Սրբեացո՛ զիս, տէր, ի պատուիրանաց պահպանութիւն, ի յորովայնի ժուժկալութիւն. ի մարտ պատերազմի բանսարկուին յաղթութիւն, ի մարմնի մեռա-

նիլ եւ պայծառանալ ի հանդիսի։

84. Լցո՛ զիս, տէր, երկիւղիւ քո եւ զղջմամբ, արտասուօք եւ հառաչանօք, սիրով եւ սրբութեամբ, չնորհօք եւ ճշմարտութեամբ, վիտութեամբ եւ ամենայն առաքինութեամբ

85. Ջնջեա՛, տէր, զբաղմութիւն մեղաց իմոց, եւ թօթափեա՛ զմրուր գառնութեան յանցանացս. եւ պարարեա՛ զսիրտ իմ արբմամբ սուրբ հոգւոյդ. եւ զփչաբեր մարմին իմ լցո՛ չնորհօք, զարգացո՛ եւ ի պտղաբերութիւն վոխարկեա՛։

86. Երեւեցո՛, տէր, զչնորհս քո ի ծառայս քո, զգութ եւ զողորմութիւն քո ի պաշտօնեայս քո. եւ տաճարացո՛ զիս քնակարան լինել ամենասուրբ հոգւոյդ՝ մի՛ եւս ծառայել մեղաց եւ ապականութեանց։

87. Բժչկեա՛ զիս, տէր, ի հպարտութենէ եւ յամբարտաւանութենէ, ի սնափառութենէ եւ ի փառասիրութենէ, ի մարգահաճութենէ եւ ի կեղծաւորութենէ եւ յոխակալութենէ, ի բարկութենէ եւ ի սրտմտութենէ, ի նախանձուէ եւ ի յատելութենէ եւ ի դառնելոյ զոք եւ ի չարութենէ եւ յամենայն մեղաց։

88. Փրկեա՛ զիս, տէր, ի մարդկային զովեստից ի վա-
ռաց և ի մեծարանաց. զխա-
ւարս լոյո կարծելով՝ համբա-
ւեն ի վերայ իմ բարի, զեղ-
կելիս երանելի, զողորմելիս
առաքինի, և ես եմ արատա-
սուելի և անթիւ մեղօք լի:

89. Ծածկեա՛ զիս, տէր, ի
լուսոյ սուտ զովութեանց եւ
յերանութեանց, զի ոչ զի-
տեն զմեզս իմ եւ կոչեն զիս
սուրբ, զի երեւիմ սրբու-
թեամբ, և լի եմ ազատեղու-
թեամբ. կերպարանիմ առա-
քինութեամբ, եւ կեամ ա-
նառակութեամբ, փայլիմ
երկիւղածութեամբ, եւ վա-

րիմ մարդահաճութեամբ, ճա-
նաչեմ զճշմարտութիւն, եւ
խօսիմ զստութիւն. զիտեմ
զարդարութիւն, և գործեմ
զանօրէնութիւն:

90. Ֆաւեա՛ զիս, տէր, ի
մեղաց եւ ի բամբասանաց,
ի մոռացեալ յանցանաց և յա-
մենայն սխալանաց. և թո՛ղ
լինձ զանժուժկալութիւն և ըզ-
ծուլութիւն զորկորստութիւն
և զդատարկաբանութիւն, ըզ-
յանկութիւն եւ զազատեղու-
թիւն, զհայհոյութիւն և զա-
մենայն բիծս չարեաց:

91. Կացո՛ զիս, տէր, հաս-
տատուն և անշարժ ի տեղի
փորձանաց պատերազմի՝ ա-

ռանց երկիւղի քալ եւ պինդ հաւատով և յորդորական սիրով զօրավիգն լինել ընդդէմ եկելոց դիւացն ի վերայ իմ. զինեա՛ զիս ամրակուռ զինուս քո՝ տալ պատերազմ և յաղթել թշնամւոյն հակառակամարաի, որ կամի խոպան զիս որսալ։

92. Զընկզմեալս, տէր, ի խորս մեղաց՝ հանցես և բերցես ի լոյս պատուիրանաց քոց. եւ առ քեզ կոչեսցես զհեռացեալս ի քէն, եւ թողցես զգործս իմ անառակութեան. զապաւինեալս ի քեզ ամրացուսցես, եւ զպաւանեալս ի քեզ մխիթարեսցես,

զարձակեալս ի կապոյ պատուիրանաց քոց՝ ըմբռնեսցես. եւ ընդ լուծ սիրոյ քոյ բեւեռեսցես։

93. Զգուշի սիրոյ քոյ, տէր, մխաւորեա՛ յիս, եւ զարգիւեալս ի բանտի կապանաց՝ արձակեա՛ և խզեա՛ զկապանս մեղաց իմոց. առաջնորդեա՛ ինձ ի ճանապարհ արդարութեան, և տեղի յարակից պատրաստեա՛, եւ պահակեա՛ ընդ սուրբս քո։

94. Հաղորդս արա՛ զիս, տէր, աստուածայինն սիրոյ քոյ, սիրել զպատուիրանս քո և գնալ ի ճանապարհս քո, չարչարիլ մինչեւ ցմահ վասն անուանդ

քո, մտանել ի փառս եւ դա-
սիլ ընդ սուրբս քո, և ուրա-
խանալ միշտ ընդ կամարարս
քո։

95. Գթա՛, տէր, ի մեղու-
ցեալ եւ յեղկելի անձն իմ.
խափանեա՛ զանառակ ցան-
կութիւնս իմ. սրբեա՛ զաղտե-
ղութիւն մեղաց իմոց, և քա-
ւեա՛ զանօրէնութիւնս իմ.
բժշկեա՛ զվիրաւորեալ հոգիս,
և առողջացո՛ զհիւանդացեալ
մարմին իմ. ցրուեա՛ զչարն
յինէն և ժողովեա՛ յիս զբա-
րիս, և լի՛ց զպակասութիւնս
իմ զօրութեամբ քո, տէր։

96. Սառչի քո անկանիմ
և խնդրեմ զթողութիւն մե-

ղաց իմոց. զպաղատանս իմ
ընկալ, և քաւիչ լե՛ր յանցա-
նաց իմոց. պայծառացո՛ եւ
լուսաւորեա՛ զխորհուրդս եւ
զմիտս իմ. կարողացո՛ զմար-
մին իմ անդադար կալ ի փա-
ռաբանութիւն անուանդ քում
սրբոյ։

97. Զանկեալս մեղօք կանգ-
նեա՛, տէր, եւ զխոցեալս ի
թշնամւոյն դեղապատեա՛.
բա՛րձ զցաւս մեղաց, և վե-
րացո՛ զկսկիծ յանցանաց. յա-
փշտակեա՛ ի դառն դահճաց,
և աղատեա՛ յանողորմ տան-
ջանացն, եւ ի մարմնական
յղփանաց հեռացո՛, և ի գաս
ճգնաւորացն դասեցո՛։

98. Լե՛ր վերակացու և պահապան անձին իմոյ, տէր իմ Յիսուս. պահեա՛ զիս ի դիւացից, և փրկեա՛ զիս ի մարդկային փորձանաց: Հակառակողաց յաղթեա՛, և կացո՛ զիս ի մէջ պատերազմողաց՝ քաջ և ընտիր լինել. գործակցեա՛ լինիլ լինել քաւարան մեղաց, և համբերել վշտաց առաքինական գործովք եւ հանդիպել քումմ աստուածային չըննորհաց:

99. Վա՛յ լինիմ, տէր, վա՛յ լինիմ, զի մեղօք կործանեցայ, և մտօք իմովք աղտեղացայ, ի բարեաց ունայնացայ, եւ ի սիրոյ ցամաքեցայ. ի լալոյ խաւարեցայ, և ի գնալոյ դադարեցայ: Ոչ ունիմ աչս լալոյ եւ արտասուաց, ծփիմ տարակուսեալ, զի յոյս և ակն բարւոյ ոչ ունիմ:

100. Կանգնեա՛, տէր, ըզտարաբերեալ անձն իմ, որ լի եմ մեղօք և անթիւ յանցանօք. և խարշեալ և տրոհեալ եմ ամենայն անդամօքս յոտից մինչեւ ցգլուխս ապականեալ, և չի՛ք հնար բժշկութեան՝ եթէ ոչ ի քէն տէ՛ր իմ Յիսուս. խնայարհեա՛ առ վիրաւորեալս դեղատուութեամբ, եւ մի՛ գարշիր ի չարահոտ ախտացելոյս մեղօք:

101. Հեռացո՛, տէր, զբեռան իմ ի բամբասելոյ, և ըզլեզու իմ ի չար խօսելոյ, զաչս իմ յայրատ հայելոյ, և զականջս իմ ի չար լուր լսելոյ, զձեռս իմ ի յափշտակելոյ, և զոտս իմ ի յանառակ գնացս երթալոյ, և զամենայն անդամս իմ պարսպեալ զգաստացո՛՝ մինչտ զհաճոյս քո կատարել:

102. Մեղա՛յ քեզ, տէր, մեղայ, զի յանցեայ զպատուիրանաւ քով. ի լուսոյ կենաց ելայ եւ մտի ի խաւար մեղաց. ցանկանալով աղտեղութեան՝ ի սիրոյ քոյ հեռացայ, ըմբռնեցայ ի չարէն՝ և եղէ որդի կորստեան, ողորմեա՛ լինձ բազմամեղիս բարերար, զի դու միայն ես մարդասէր:

103. Ի քեզ, տէր, ապաւինի՝ որ քաւարան ես մեղաւորաց, բարւոյ չտեմարան, և փախուցելոյս դարան, ըզթշնամին իմ արա՛ փախստական: Օգնական զայլ ոք ոչ ունիմ, բայց զքեզ միայն ունիմ պահապան անձին իմոյ. ի վտանգից փրկեա՛, ի յորգայթից ապրեցո՛, և արժանի արա՛ զիս լինել որդի լուսոյ քո յաւիտենից:

104. Ողորմեա՛ լինձ, տէր կենաց եւ քաւիչ մեղաց, կատարիչ խնդրուածոց և արա-

ձակիչ կապանաց, բաշխող պարգեւաց և տուիչ ամենայն չնորհաց:

105. Լո՛ւր, տէր, զաղաչանս իմ, և ընկա՛լ զպաղատանս իմ. քաւեա՛ զյանցանս իմ, և կատարեա՛ զխնդրուածս իմ. արձակեա՛ զկապանս իմ և բժշկեա՛ զհոգի իմ. առողջացո՛ զմարմինս իմ, և ուղեւ զնացս իմ. փութացո՛ զիս ժամանել յօթեւանս սրբոց քոց:

106. Հալածեա՛, տէր, զբազումս ախտաժէտութիւնս իմ, զցաւս ի մարմնոյս եւ զաղտ ի հոգւոյս, զքուն ի գլխոյս եւ զյագուժն յորկորոյ: Պահեա՛ զխորհուրդս իմ անընդբաղ, զսիրտ իմ սուրբ, եւ զմիտս իմ լուսաւոր և զգաստ, զցանկութիւնս իմ առ քեզ, եւ զյօժարութիւն յաղօթս ի տուէ և ի գիչերի:

107. Խղճեա՛, տէր, ի գլուխ իմ աղբիւր վտակաց, ողողեա՛ և զանդս մտաց իմոց, զաղտ յանցանաց իմոց լուա՛, եւ սրբեա՛ զթարախ վիրաց իմոց. զփուչ մեզաց իմոց խլեա՛ և տնկեա՛ զբոյս կենաց: Ա՛ճեցո՛, տէր, զարդարութիւն, եւ նուաստացո՛ զանօրէնութիւն. մեռո՛ զմարմնոյս ցանկութիւն, եւ նորոգեա՛ զհոգեւոյս կենդանութիւն:

108. Կոչեա՛, տէր, զմեղուցեալ անձն իմ ի քեզ, զի մերձենալ առ քեզ ոչ իշխեմ. պատկառիմ յամօթոյ, և զարհուրիմ ի գործոց իմոց. ոչ ունիմ առ քեզ համարձակութիւն, զի ես լինձէն եմ կորուսեալ. ի սուրբ պատուիրանաց քոց հեռացայ, և մերկացայ ի փառաց քոց, այլ դու, տէր, զթա՛ յիս և ողորմեա՛, զի ստեղծուած եմ անարատ ձեռաց քոց:

109. Ոչ իշխեմ, տէր, անյոյս լինել, զի ողորմած ես և զթած, և փառս անճառս խոստացար դարձելոց մեղաւորաց. այլ ես զարհուրիմ և դողամ,

և երկնչիմ ի բազում և յանթիւ մեղաց իմոց, զի պատրեալ խաբեցայ յորսողէն. եւ արդ զի՛նչ լինիմ եղկելիս՝ որ տարակուսեալ եմ ի կենաց և տարագրեալ:

110. Սրա՛ զիս, տէր, ի սուգ եւ յարտասուս վասն մեղաց իմոց, զի ծանրաբեռնեալ եմ անօրէնութեամբ եւ յագեալ աղտեղի խորհրդով. չատ նեղեցեր լինձ, զի ոչ խրատեցեր զիս ի մարմնի. արդ սարսեալ դողամ, զի ոչ ինձն լինձ այսպիսի չարիք: Սղաչեմ, բարեբար տէր, մի՛ կոչեր զիս յաւուրն, և տանջանաց մի՛ մատներ զիս. այլ փրկեա՛ ի հրոյ

գեհենին եւ ի վտանգից ապրեցո՛ եւ ողորմեա՛ ինձ, զի դու միայն ես մարգասէր։

111. Վա՛յ ինձ, տէր, զի ծփանք տարակուսանաց պատեն զիս, և զսիրտ իմ խռովեն. զոր աղօթեմ՝ ոչ գիտեմ, սաղմոսեմ՝ եւ ոչ իմանամ. չրթունք իմ բարբառի, եւ միտք իմ ճողոպրեալ յածի այսր և անդր՝ և զկայուն ոչ ունի, եւ ի պէտս իմ ոչ գըտանի, և ուր կամիմ զի իցէ, անդ ոչ դադարի. ոչ տեսանի արդեօք եւ ոչ ըմբռնի. զուր աշխատիմ եւ ոչ ինչ օգտիմ. որպէս ձայն հնձեալ պղնձի կամ ծնծղայի՝ թափուր և ունայն

դտանիմ, և անպտուղ լինիմ յամենայն բարեաց։

112. Ընկալ, տէր, զմոլորեալս՝ որ փախուցեալ կամ ի լերինս, որպէս ծառայ չար ի տեառնէ հալածեալ եմ վասն մեղաց։ Եւ ի սուրբ եղբարց հրաժարեալ եմ, ի սուրբ պաշտամանց հեռացեալ. զի սիրոյ էի մեզաց և նախատինք կրօնաւորաց, անյագ ի զրկանաց եւ խափանիչ սուրբ պատուիրանաց։ Անգութ էի աղքատաց, և հակառակ սպասաւորաց. անողորմ հիւանդաց էի եւ անմխիթար աշխատողաց. չէի խակ արժանի կեալ ի մէջ ճգնաւորաց։

113. Հանդո, տէր, զչնորհս հոգւոյդ սրբոյ ի վերայ իմ, որ միայն եմ ի պատերազմի առանց օգնականի. սրբեա՛, տէր, զտաճար հոգւոյ իմոյ, և առ իս լե՛ր ընդ երեկոյս. բա՛ց զաչս հոգւոյ իմոյ, եւ լուսաւորեա՛ զմիտս և զխորհուրդս իմ։ Տո՛ւր ինձ զօրութիւն, տէ՛ր իմ Յիսուս, և ընկա՛լ զօրհնաբանութիւն բերանոյ իմոյ. ի խոր քնոյ գիչերոյ զարթո՛ զիս գոհանալ և օրհնել զքեզ, որով զմեղս իմ քաւեցից. չնորհեա՛ ինձ սուգ և արտասուս լալոյ և սգալոյ և անդադար աղօթելոյ առա-

114. Դատեա՛, տէր, զդատապարտողն իմ՝ որ յանդգնի ի վերայ իմ, մարտ եղեալ ընդ իս ցանկութեամբ և անժուժկալութեամբ, ծուլութեամբ և ոսկորատութեամբ, փառասիրութեամբ եւ մարգահաճութեամբ, բարկութեամբ եւ սրտմտութեամբ, ատելութեամբ և չարաչար հայհոյութեամբ, անափառութեամբ եւ անապարծութեամբ, հպարտութեամբ եւ ամբարտաւանութեամբ, բանիւք եւ գործովք, և խորհրդովք զօրաժողով լինի ի վերայ իմ, եւ ընկղմէ զիս ի խորս չարեաց։

115. Սփռեա՛, տէր, զչնոր-

հըս քո ի վերայ մասանց անդամոց իմոց. լցո՛, տէր, ըզմարմին իմ արիութեամբ եւ ժուժկալութեամբ, եւ զհոգի իմ երկիւղիւ և դողութեամբ. զսիրտ իմ սիրով և արդարութեամբ քով, և զմիտս իմ լուսով եւ իմաստութեամբ քով. զխորհուրդս իմ հանճարով և գիտութեամբ, և զոտս իմ գընալ ի շաւիղս արդարութեան. զձեռս իմ չօշափելով ի գործս ապաշխարութեան, և զբերան իմ անդադար սաղմոսել քեզ գոհութեամբ. զաչս իմ յորդաբուղխ արտասուօք, և ըզհոտոտելիս իմ հոտոտել պատրաստես զհոտ գիտութեան ի

կեանսդ, զլսելիս իմ՝ լսելով զձայնն աւետեաց որ ասէ. «Թողեալ լիցին քեզ ամենայն մեղք քո». և թէ՝ «Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ»։

116. Մինչեւ յերբ, տէր, անսաս չարագործին՝ որ ոչ յագի իմով կորստեամբ, այլ հանապազ սկիզբն առնէ չարեաց, և ի բաց կորզեալ խափանէ զիս ի բարեաց եւ յաոաքինութեանց. և հեռացուցանէ զիս ի սրբութեանց, եւ ի յաւիտենից կենաց արտաքս հանէ զիս։ Խաւարեցուցանէ զլուսաւորութիւն աչացս, եւ ապականելով զերէկ զմիտս իմ

և վարէ զիս ի չար ծառայու-
թիւն յանցանաց. եւ ի ձեռս
անօրէն դահճաց մատնէ զիս,
և տանի ի տեղի չարչարանաց,
և արկանէ ի բանտ կապանաց
մահու, կացուցանէ ի մէջ խա-
ւարասէր սպասաւորաց, եւ
ի տոռուննս մեղաց կապէ զիս:
Եւ արդ ես եղկելիս զի՛նչ
լինիցիմ, եթէ ոչ դու, տէր,

օգնեսցես ինձ:

117. Տե՛ս, տէր, զլալիս և
զողբալիս, զպաղատելիս եւ
զեղկելիս, ինձ ողորմեա՛ անօ-
րինելոյս, եւ չնորհեա՛ յորդ
արտասուս ի գիշերի, և ծա-
գեա՛ գթութեամբ գնչոյլ չը-
նորհաց առաւօտու: Բա՛ց զբ-

խաւարեալ աչս սրտի իմոյ, և
բժշկեա՛ զհիւանդացեալ հոգի
իմ. ընկալ զդարձ մեղաւորիս,
և մի՛ բարկանար բազմամե-
ղիս, տէր իմ Յիսուս. և քան-
զի անթիւ ունիմ զչարիս, չըն-
չեա՛ յինէն և տո՛ւր ինձ զը-
չնորհս բարեաց:

118. Համարձակիմ, տէր,
աղօթել առ քեզ, բայց ոչ
գիտեմ գհաճոյսն քո. խընդ-
րեմ եւ ոչ իմանամ զօգտա-
կարն հոգւոյս. յայտնեա՛ ինձ,
ողորմած տէր, զկամս քո, և
ուսո՛ ինձ զպատուիրանս քո:
Զբարիս՝ զորս ոչ խնդրեմ եւ
իմանամ, տո՛ւր ինձ տէ՛ր. և
եթէ ոչ գործեմ զբարիս՝ բարի

արա՛ ինձ, տէր. եւ եթէ ոչ խնդրեմ զողորմութիւն, ո՛ զողորմութիւն չնորհեա՛ ինձ, և զհեռացեալս առ քեզ կոչեա՛. եւ եթէ ոչ կամիմ, բռնաւո՛ր եա՛ և ի քեզ կորզեա՛. և թէ կամիմ և եթէ ոչ կամիմ, դարձո՛ զիս. և եթէ ըմբռնիմ յոյժ եքէ, զերծո՛ զիս. եթէ յերկրաւորս զբաղեցայց, ի խորհուրդս հոգևորս զբաղեցո՛ զիս. եթէ այսր և անդր գնալ ցընդիմ, մի՛ թողուր զիս՝ մինչեւ ըմբռնեալ տարցես ի տեղի յարկի վառաց քոց։

119. Տէր իմ և Աստուած իմ Ցիսուս Քրիստոս, դու ես իմ օգնական, ի ձեռս քո եմ. դու

դիտես զօգուտն իմ, օգնեա՛ ինձ. մի՛ թողուր զիս մեղանչել քեզ, զի մոլորական եմ ի չար դիւաց. մի՛ թողուր զիս հետեւիլ կամաց իմոց, մի՛ թողուր զիս կորնչիլ ի մեղս իմ, այլ զթա՛ յիս ի ստեղծուածս ձեռաց քոց. մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց, և զՀոգիդ սուրբ մի՛ հաներ յինէն։

120. Առ քեզ ապաւինեցայ, բժշկեա՛ զանձն իմ զի մեղայ քեզ. առաջի քո ևն ամենայն նեղիչք իմ, եւ ոչ գոյ ինձ հանգիստ բաց ի քէն։ Տէ՛ր, կեցո՛ զիս վասն բազում ողորմութեան քոյ, քանզի ամենեքեան յարուցեալ են ի վե-

բայ իմ, որք խնդրեն զանձն
իմ՝ կորուսանել զնա. եւ զի
դու կարող ես եւ հզօր յամե-
նայնի, փրկեա՛ զիս:

121. Մի՛ հայիր, տէր, ի մեզ-
կեալ սիրտս եւ ի զազրասէր
մարմին իմ, զի հոգ եմ եւ
մոխիր. սիրեմ զերկրաւորս,
և ոչ փափագիմ նայել յերկ-
նայինն. այլ միշտ հեշտա-
նամ ի չարիս, և ոչ տեսանեմ
զանվախճան զփառսն. եւ ոչ
յիշեմ զառաջին սուրբ հարսն
զերանելիսն, այլ ընդ տիղմն
աշխարհիս թաւալիմ, եւ ոչ
մաքրեալ վերանամ դասիլ ընդ
առաքինիսն: Եւ զի մոռանամ
զերկիւղ դատաստանին, և ոչ

պողամ յահագին դառն տան-
ջանացն՝ որ կայ պահեալ մե-
ղաւորաց. և ես ծուլանամ ան-
հոգ լինելով ի փրկութենէ կե-
նաց. չնորհեա՛ լինձ, տէր, սուգ
և կսկիծ անհանգիստ և առատ
արտասուս ապաշաւանաց:

122. Մի՛ յանդիմաններ զիս,
տէր, յաւուրն մեծի ահեղին,
եւ մի՛ յատենի հրապարակին
կացուցաներ զիս ամօթալի, և
ի տեղի ատենին մի՛ խայտա-
ռակեր զիս, և մի՛ կշտամբեր
յատեան դատաստանին, և մի՛
թողուր լինձ լսել զոչ գիտեմն,
եւ զահաւոր բարբառն ահա-
բեկ՝ որ ասէ. Երթա՛յք յինէն
ի հուր գեհենին. և մի՛ ի բաց

մերժեր ընդ վատ և ընդ չար
ծառային. և ի ձեռն անողորմ
կապողի մի՛ մատներ զխս, և մի՛
տար կերակուր որդանց թունա-
ւորաց ի մէջ բորբոքեալ բոցոյ,
և մի՛ արկաներ զխս ի խաւար
սառնամանեաց տարտարոսին.
այլ փրկեա՛ զխս ի սաստիկ
կայծականց հրոյն, ի բոցեղէն
գետոց արշաւանացն, ի սաստիկ
լալագին և խիստ տանջանացն
և յողբոց տարակուսանաց, ի
կափկափելոյ ատամանցն, ի
տոչորմանէ խաւարայինն բոցոյն
եւ ի դժնդակ դառն աղէտից
խորովելոյն, ի բոցածաւալ և
ի չրջապատ հրոյն և ի կողկո-
ղաձայն և յանդադար վայոցն։

123. Բազմացաւ, տէր, ա-
նօրէնութիւն ի վերայ իմ իբ-
րեւ զբեռն ազի կամ կապա-
րի. բազում է ախտ ի հոգիս
իմ, եւ անխտիր եմ ի մեղս
մարմնոյ, և զանազան չարեօք
լցեալ եմ։ Բայց այլ ինչ ու-
նիմ վատթարագոյն՝ զանզըղ-
ջութիւն մարմնոյ իմոյ, որ քան
զամենայն չարիս է դառնա-
գոյն. և զի յաղօթելն իմում
ձանձրանամ, և ի սաղմոսելն
ոչ իմանամ. ի խնդրել զերա-
նութիւն պղերգանամ, և յեր-
կիւղէ չնորհաց դատարկանամ.
տկարանամ մարմնովս, և ար-
ձան ազի սիրտ իմ լինի. և ոչ
ծագէ ի ներս լոյսն անչիջա-

նելի, և յաւուրն չարի ոչ սար-
սեալ դողամ:

124. Շնորհեա՛ ինձ, տէր, երկիւղ սրբութեան և սգոյ, և յորդեա՛ առ իս աղբերս արտասուաց, և թեթեւացո՛ ըզծանրութիւն բեռանց իմոց, և աճեցո՛ առ իս զսուրբ աղօթս: Փութացի՛ր, տէր, եւ ե՛կ ի խնդիր մոլորելոյս, որ մերձեալ եմ ի վախճան կորստեան. վասն զի խաւարեցայ ի լուսոյ, և ի սիրոյ պատուիրանաց քոց խափանեցայ, ի չար թշնամւոյն յաղթեցայ, և նուաղեցայ յերկիւղէ քումմէ: Տապալեցայ ի չար խորհրդոց չարին, և ցամաքեցայ ի շնորհաց

արտասուաց սիրոյ քոյ. խաբեցայ յոնձայն բանից, եւ ի լուսաւորութենէ մտաց մոլորեցայ. աղտեղացայ ցանկութեամբ մեղաց և զօր վախճանին մոռացայ:

125. Տարակուսիմ անյոյս լինելով՝ որ ոչ գոյ հնար ապաչխարութեան. զի մարմնով տկարացայ՝ պակասեալ ի զօրութենէ, և ծերացեալ նուաղեցայ. սակայն ի քեզ ապաւինիմ, տէ՛ր իմ, հա՛ս յօգնութիւն ծանրաբեռնեալ ընկղմելոյս, և ազատեա՛ զիս ի չարեաց, որ ազատիչդ ես ի յանցանաց:

126. Ընկա՛լ, տէր, զդոյզն

և զչաղփաղփ աղօթս իմ, որ
կամ առաջի քո դատապար-
տեալ. յոյլ և ծոյլ ի զգաստու-
թենէ, մոլորեալ եմ ի մտաց
լուսաւորութենէ, և յերկիւղէ
ունայնացեալ եմ: Բերան իմ
այլ ընդ այլոյ բարբանջէ. աչք
իմ պչնու և միտք իմ զբաղ-
նու. ոչ անզբօս աղօթեմ, և
ոչ սրտի մտօք խնդրեմ. ոչ
հաւատով առ քեզ դոչեմ, և
ոչ երկիւղիւ կարգամ. ոչ ար-
տասուօք հայցեմ, և ոչ դո-
ղամ և սարսիմ վասն աւուրն
պատասխանատուութեանց: Եւ
արդ՝ տէ՛ր իմ, մի՛ անսար պը-
ղերգութեանս իմոյ, այլ փու-
թապէս ա՛րկ յապաշխարու-

թիւն և ի բովս մաքրութեան
հրոյ սրբեալ և ազատեալ ի մե-
ղաց: Մեծաւ ջեռամբ եռացո՛
եւ յորդորեա՛ յարտասուս և ի
պաղատանս և ի խնդրուածս,
եւ տպաւորեա՛ յիս զառաջինն
լուսաւորութեան կերպարանն:

127. Ողորմեա՛, տէր, մե-
ղաւորիս և յանցաւորիս ան-
թիւ բազմութեամբ, և դար-
ձո՛ յապաշխարութիւն զգերիս
վտարանդեալ, եւ մո՛յծ զիս
յարքունական փառսն. առաջ-
նորդեա՛ ինձ զվերինն ճանա-
պարհն գալ առ քեզ. զի եթէ
ոչ առաջնորդեացես՝ ոչ կարա-
ցից գալ, զի դու իսկ հրամա-
յեցեր՝ եթէ «Ոչ ոք գայ առ իս,

եթէ ոչ հայր իմ ձգեսցէ զնա»։ Եւ արդ, տէ՛ր իմ դթած, մի՛ յիշեր զմեզս իմ յաճախ լըր-
բութեանս, և մի՛ զանց առ-
ներ ի ծառայէս քումմէ. մի՛ թողուր զիս մնալ ի նոյն չա-
րիս, եւ ի կեանս աշխարհիս սպառիլ. այլ որպէս տէր ըն-
թացեալ զկնի ծառայի փա-
խուցելոյ՝ այսպէս դարձուցա-
նելով զիս թողցես զյանցանս
իմ, և արասցես հաղորդս սըր-
բոց կամարարաց քոց։

128. Դարձո՛, տէր, զցա-
սումն բարկութեան քոյ յի-
նէն, որ բազում մեղօք իմովք
տրտմեցուցի զքեզ. ողորմեա՛
ապստամբելոյս ի քէն, և զան-

հնարին դիպեալ կոյտս մեղաց
իմոց ցրուեա՛, և ընդ քաղցր
լծոյ ծառայութեան քոյ բե-
ւեռեա՛ զմիտս իմ։

129. Պարգեւեա՛ ինձ, տէր,
զլալուսն Դաւթի և զողբուսն
Երեմեայ, զհառաչուսն Պետ-
րոսի եւ զյորդառատ վտակս
արտասուաց կնոջ պոռնկին,
զի նստեալ լացից անդադար
ի տունջեան և ի զիչերի, զի
թերեւս արժանի եղէց սրբիլ
յաղտոյ և ի թարախոյ, և յորդ-
նալից վիրաց մեզաց զերծա-
նիլ, և ի բազմաբեռն չարեաց
թեթեւանալ և դասիլ ընդ սուրբս
քո ի փառս քո։

130. Ողորմել ինձ, տէր, մի՛

յամենար, զի առանց վաստա-
կելոյ քո յիս՝ ոչ երբէք գործի
առ իս բարի, և ոչ սերման-
եալն յանդս հոգւոյ իմոյ՝ բուս-
անի. զի սերմն քո բարի՝ որ
յիս սերմանեցաւ, ի չար թըշ-
նամւոյն քաղեցաւ. և բուս-
եալն՝ ոմն ի տապոյ չերմու-
թենէ չորացաւ, և ոմն ի մէջ
փշոցն անկեալ հեղձեալ ցա-
մաքեցաւ. մշակելով քո յիս,
տէր, լծեա՛ զերկուս աչս ե-
զանց՝ որ յիս, արտասուագոչ
ձայնիւ պաղատիլ առ քեզ յա-
բաժամ, զի արժանի գտայց
ողորմութեան քումմ։

131. Շնորհեա՛, տէր, զխա-
ղաղութիւն եկեղեցւոյ քումմ

սրբոյ, և ամենայն հաւատա-
ցելոց, թագաւորաց և իշխա-
նաց, զօրաց և զօրավարաց,
իճակատու պատերազմաց յաղ-
թել անօրէն բռնաւորաց։

132. Ողորմեա՛, տէր, ա-
ռաջնորդաց եկեղեցւոյ, հայ-
րապետաց և վարդապետաց,
երիցանց, սարկաւագաց, դպը-
րաց և ամենայն ուխտի ման-
կանց եկեղեցւոյ, առնել զի-
րաւունս և զարդարութիւն յա-
մենայն ժամ, հովուել զժողո-
վուրդս քո, և տքնիլ վասն
հոգւոց նոցա, ասելով. «Ահա-
ւասիկ ես և մանկունք իմ զոր
ետուր ցիս։

133. Ողորմեա՛, տէր, կա-

բօտելոց և տարակուսելոց, որ-
բոց եւ այրեաց եւ նեղելոց,
վտանգելոց և տանց հաւատա-
ցելոց, կենդանեաց և ննջեցե-
լոց, և որք ընծայաբերք են
եկեղեցւոյ. աղքատաց, կե-
րակրելոց, ողորմածաց, եր-
կիւղածաց, տնանկաց և հի-
ւանդաց, նաւորդաց և ճանա-
պարհորդաց, խոստովանողաց
և ապաչխարողաց, և անդարձ
մեղաւորաց, ողորմեա՛, տէր,
եւ դարձո՛ զնոսա յապաչխա-
րութիւն։

134. Ողորմեա՛, տէր, եղ-
բարց մերոց, ծնողաց և ամե-
նայն արեան մերձաւորաց,
կրօնաւորաց և միանձանց ճըգ-

նաւորաց, և որք ողորմութիւն
պարգեւեցին մեզ, և որք յան-
ձըն արարին զինքեանս յա-
ղօթս մեր յիշել։ Ողորմեա՛,
տէ՛ր բարերար, և ըստ իւրա-
քանչիւրոց պիտոյից բաշխեա՛
առատապէս զչնորհս հոգւոյդ
սրբոյ ի վերայ ամենեցուն սո-
ցա. զարդարեա՛ և մխացո՛ ի
սէր աստուածութեան քոյ։

135. Աղաչեմ, տէր, և ան-
կանիմ առաջի սրբոյ խաչի քոյ,
բարեխօսութեամբ սորա զա-
ղաչանս իմ ընկալ և զխընդ-
րուածս իմ կատարեա՛, եւ
զօրութեամբ սորա զօրացո՛
զիս ի կոչմանս յոր կոչեցայ,
և ի պատուիրանս քո յոր յոյ-

սացայ: Տո՛ւր ինձ, տէր, զսա
ի զօրութիւն և ի ժուժկալու-
թիւն, ի զգաստութիւն և յա-
ռողջութիւն՝ լինել պահապան
անձին իմոյ ի տունջեան և ի
գիշերի և յամենայն ժամու,
ի ննջել և ի յառնել, ի գնալ և
ի գադարիլ, ի գործել և ի վաս-
տակիլ, յաղօթել և ի պահել,
և զհաճոյս կամաց քոց կա-
տարել: Սա՛ եղիցի ինձ բերդ
ամուր, և աշտարակ հզօր յե-
րեսաց թշնամւոյն. զարդա-
րեա՛ զիս սովաւ ի զարդ հո-
գեվինի եւ ի լոյս լմանալի:
Եւ յաւուրն ահեղի բարբառոյ
Գաբրիէլի յերեւիլ սրբոյ խա-
չիդ՝ լուսաւորեա՛ զխաւարեալ

հոգիս, վերանալ լուսով ընդ
առաջ անմահ փեսայիդ՝ խառ-
նիլ յերամս հայրապետաց եւ
ի դասս մարտիրոսաց և ի գունդ
դրս հրեշտակացն:

136. Բարեխօսութեամբ սըր-
բուհւոյ Աստուածածնիդ՝ ա-
նարատ և միշտ կուսիդ և Յով-
հաննու կարապետին և սրբոյն
Ստեփանոսի առաջին մարտի-
րոսին, և սրբոյն Գրիգորի լու-
սաւորչին եւ ամենայն սրբոց
վկայից քոց՝ որք միացեալ ի
սէր աստուածութեանդ քոյ.
լո՛ւր ինձ եղկելոյս՝ և մեղու-
ցեալոյս ողորմեա՛. խնդիր արա՛
ինձ կորուսեալոյ, և գլորելոյս
ձեռնտու լե՛ր, և մոլորելոյս

առաջնորդեա՛, և ի խաւարէ
հանցես զիս ի լոյս, և հոգւոյ
իմոյ ազատութիւն շնորհեա՛։
Հաստատեա՛ ի սէր քո, և բե-
ւեռեա՛ յերկիւղ քո. զտաճար
հոգւոյ իմոյ մաքրեա՛, և առ
իս օթեւանեա՛։ Փակեա՛ ըզ-
դուռն մեղաց իմոց, և պա-
րըսպեա՛ չուրջանակի յոսոխէ
իմմէ, եւ ի մարդոյ չարէ եւ
յանիրաւէ փրկեա՛. եւ զար-
դարեա՛ զիս գործովք առա-
քինութեամբ, և պարգեւեա՛
ինձ զանճառ երանութիւն քո։
Կենդանեաց մերոց ողորմեա՛,
և զհոգիս ննջեցելոց մերոց լու-
սաւորեալ պայծառացո՛ յար-
քայութեանդ երկնից։

137. Բարեխօս առ քեզ ու-
նիմք զառաքեալսն և զմար-
գարէսն, և զամենայն սուրբ
մարտիրոսսն, զհայրապետսն
և զվարդապետսն, և լո՛ւր ա-
ղաչանաց նոցա, և ազատեա՛
զիս ի մեղաց իմոց. անկեա՛
յիս հոգի շնորհաց, եւ յար-
դարեա՛ զիս բարիս գործել։
Ի ծուլանալն իմում բռնաւո-
րեա՛, եւ ողորմութեամբդ ի
քեզ կոչեա՛. խափանեա՛ զիս
ի չար գործոց, և սերմանեա՛
յիս պտուղ բարեաց. քաջա-
լերեա՛ զիս ի նեղութեան ի-
մում, և ի վշտի իմում մխի-
թարեա՛։ Արժանի արա՛ զիս,
տէր, խաչակից լինել քեզ մին-

չեւ ցմահ, որպէս զի ի հեշտութենից աշխարհիս հրաժարեցայց, և եղէց երանելեացն դասակից, և աւազակին եղէց հաղորդ, և ի գրախտին վայելեցից զկեանս անմահս:

138. Յաւուրն իմոյ վախճանի հրեշտակ բարի ինձ առաքեա՛ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ. ընդ ուղիղ ճանապարհ առաջնորդեա՛, և ըզգազանն դարանակալ կործանեա՛. անցո՛ զիս անխռով ընդ օդս խաւարային, և զերծո՛ ի չարաժանի գազանէն. ապրեցո՛ և աներկիւղ պահեա՛, և ի կայանս սրբոցն հանգո՛ սպասել և ակն ունել գալստեան քո:

139. Յորժամ գաս, տէր, յերկնից ահեղ փառօք և անթիւ դասուք հրեշտակօք, եւ զարհուրեալ դողան առ հասարակ տարերք ամենայն՝ երկնայինք և երկրայինքս. յակնարկել քո զօրութեանդ՝ սարսին առ հասարակ տարերք ամենայն յահեղ փառաց դատաւորիդ եւ անճառ դատաստանիդ և աննկերելի պատուհասիդ: Յայնմ աւուր և զիս ընկալ, տէր, ընդ արդարս և ընդ կատարեալս քո, և կարգեա՛ ընդ աջմէ դասուն, և պսակեա՛ ընդ սուրբս քո. և չնորհեա՛ ինձ զկեանս յաւիտենից, եւ զանճառ բարիս

քո պարգեւեա՛ ինձ. և քեզ փառք արարողիդ և պարգեւողիդ լմոյ բարեաց:

140. Ցիչեա՛, տէր, զհոգիս ննջեցելոց մերոց յաւուր մեծի քումդ գալստեանդ՝ յորժամ գաս յերկինից անճառ փառօք, ահեղ և սոսկալի զօրօք, հրանիւթ և հոգեղէն զուարթնօք: Սհասուր հուր առաջի քո ընթացեալ տարածանի, կիզէ զլերինս՝ և հալէ զբլուրս, և զարարածս ամենայն առ հասարակ տապալէ. յայնմ աւուր ահեղին ողորմեա՛ ինձ, մարդասէր, զի դին սուրբ արեան քոյ եմ: Յորժամ զաղբիւրս յամաքեցուցանես, և զգնացս գետոց դադարեցուցանես, գծովու ջրոյն զանբաւութիւն սպառեցուցանես, զլուսաւորս խաւարեցուցանես, փողն ահագին ընդ ամենեսեան ամենայն հնչի և ըզմեռեալսն ամենայն զարթուցանէ և զաշխարհս ամենայն դողացուցանէ, եւ արարածք ամենայն յարուցեալ կան առաջի աստուածութեանդ քոյ: Յորժամ դնես զդատողական աթոռ քո, և ընդ քեզ բազմեցուցանես զերկոտասան առաքեալսն. անաչառ դատաստանաւ դատիս և յամենեցունց զարդարութիւն պահանջես, զկամարարս քո պատուես և զապստամբեալսն ի ձայնէ կոչ-

ման քոյ պատժես, եւ զար-
դարան փառաւորես. զմարտի-
րոսան և զսուրբ վկայն պսա-
կես. զխմաստուն սուրբ կու-
սանն զարդարես, և յիմար
կուսանացն զառագաստին դու-
ռըն փակես, և ի փառացն և
յերանութեանցն հալածես. զօ-
դիսն քո ընտրես, և զայծիսն
ի քէն ի բաց մերժես և ի գե-
հեանն առաքես՝ ուր լալումն
է աչաց, և դառնագոյն կըս-
կիծ ահեղ տանջանաց, հրե-
ղինացն՝ չար որդանցն թու-
նաւորաց կտտողացն զազանաց
և կճրտումն ատամանց:

Սրդ, գթա՛ և յիս յայնժամ,
մարդասէր տէ՛ր և բարերար

փրկիչդ իմ Յիսուս Քրիստոս.
և ողորմութեամբ քով գթաս-
ցիս ի հոգիս ննջեցելոց մերոց՝
որք հաւատով ի քեզ ննջեցին,
զորս յարուցեալ կացուցանես
առաջի ահաւոր քո մեծի դա-
տաստանիդ՝ յայնմ տիեզերա-
կան ահեղ հրապարակին: Ցոր-
ժամ յայտնին ամենայն գործք
բարւոյ և չարի անթագչելի ի
մէջ ատենին, յայնմ աւուր ա-
հեղի թողութիւն չնորհեա՛ յու-
սացելոց քոց, որք յանուն քո
սուրբ ննջեցին յերկրի, զորս
դնեցեր պատուական արեամբդ
քով: Ջննջեա՛ զձեռագիր ամե-
նայն մկրտելոցս ի քեզ, և թո՛ղ
զպարտիս յանցանաց ամենայն

հաւատացելոց՝ զկամայից եւ զակամայից. ընդ աչմէ քումմէ դասեա՛, եւ զերանական զձայնն ի լսելիս ամենայն հաւատացելոց աւետաբերեա՛ ասելով. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զյաւիտենից բարութիւնն։

141. Արդ, տէ՛ր բարեբար ողորմած և մարդասէր, ընկա՛լ զաղօթս և զխնդրուածս իմ, որ պաղատիմ և հայցեմ ի քէն վասն իմ և վասն ամենայն հաւատացելոց։ Մի՛ դարձուցաներ զերեսս քո ի ժառէս, այլ խոնարհեա՛ յաղաչանս իմ, և լո՛ր ինձ, մարդասէր տէր, և ցո՛յց յիս զսովորական քո մարդասիրութեանդ զողորմութիւնն, և խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս քո. և կարգեա՛ զիս ընդ աչմէ դասուն, և մի՛ կացուսցես ընդ ձախմէ ընդ ուլն՝ որք զայրացուցին զքեզ։ Եւ մի՛ պահանջեր յինէն զանհամար պարտիս յանցանաց իմոց, և մի՛ դատապարտեր զմեղաւորս յայնժամ. և մի՛ յայտնեսցին ծածուկ գործք ամբարչութեան իմոյ յանցանաց յանաչառ քո ատենին՝ առաջի հրեշտակացն և հրեշտակապետացն և ամենայն սրբոց քոց սիրողաց։ Այլ յաղթեալ ի քումմէ մարդասիրութենէդ՝ արասցես այցելութիւն և ո-

ղորմութիւն մեղուցեալ ծա-
ռայիս քո. եւ մի՛ ըստ չար
գործոց իմոց հատուսցես ինձ
եւ մի՛ հրամայեր կապեալ ո-
տիւք և կապեալ ձեռօք հա-
նել ի խաւարն արտաքին, ուր
լալ աչացն է և կրճտել ատա-
մանց. այլ ըստ քում գթու-
թեանդ եւ բարերարութեանդ
և անյիշաչարութեանդ ողոր-
մեա՛ ինձ բազմամեղիս: Ցայնմ
աւուր ընծո՛ զիս յամօթոյն
յաւիտենից, եւ փրկեա՛ զիս
յանվախճան տանջանացն, և
ապրեցո՛ զիս յաններելի պա-
տուհասիցն, և բա՛ց ինձ զդուռն
ողորմութեան քոյ, և մի՛ փա-
կեր զդուռն արքայութեան:

Տէր իմ տէր, Աստուած իմ
Աստուած, Յիսուս Քրիստոս,
արժանի արա՛ զիս զանարժանս
յաւուրն յայնմիկ երանութեան
պարգեւաց լուսոյ և անապատ
յաւիտենից ուրախութեանց և
բարեաց հատուցմանց սրբոցն
և արդարոցն, զիտաւս երանե-
լեացն վայելել միշտ, զի մտից
արժանապէս յառագաստ ան-
մահ փեսայիդ, և ժառանգե-
ցից զանապատ բարիսն ընդ ա-
մենայն սուրբս քո, մաքուր,
յատակ և սուրբ սրտիւ, հա-
մարձակ երեսօք անհատ տե-
սից զքեզ ընդ հրեշտակս, և
ընդ սուրբ սիրոյդս քո վայե-
լեցից զանհաս զանճառելիդ և

զանեզը լոյս երբորդութեանդ՝ զոհանալով։ և զուգահաւասար արասցես ընդ սուրբս քո յօրհնաբանութիւնս միշտ արժանապէս, հանապազ աստուածային անստուեր լուսով քով պայծառացայց, և անդադար երգով փառաւորեցից և բարերանեցից և վերօրհնեցից զամենասուրբ երրորդութիւնդ, այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք դարձեալ Նոյին արբոյն Եփրեմի

Տէր երկնի և երկրի, իշխան մահու եւ կենաց, դափաւոր կենդանեաց և մեռե-

լոց, Քրիստոս Աստուած, յոյս և ապաւէն հոգւոյ իմոյ. քեզ խոնարհեցուցանեմ զերկրպագութիւն և մատուցանեմ փառաբանութեամբ մաղթանս։ Լո՛ւր, պարգեւիչ հայցուածոյ իմոց, որ միայնդ ես առանց մեղաց, որ միայնդ ես սուրբ և ի սուրբս հանգուցեալ, որ միայնդ ես զթած և ողորմած։ Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, և ըստ բազում զթութեան, քոյոյ զանօրէնութիւնս իմ։ Ստեղծիչ իմ, ողորմեա՛ ինձ և օրհնեա՛ զիս, երեւեցո՛ զերեսս քո առ իս և հաշտեա՛ ընդ իս։ Ապրեցուցիչ իմ, դա՛րձ առ

իս, երեւեցո՛ զերեսս քո եւ յիշեա՛ զիս յարքայութեան քումմ։ Դա՛րձ առ իս, Աստուածդ փրկիչ իմ, և դարձո՛ զսըրտմտութիւնս քո յինէն. մի՛ յաւիտեան բարկանար լինձ, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. մի՛ բարկութեամբ խրատեր զիս, և մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. մի՛ յաւիտեան բարկանար լինձ, և մի՛ յիշեր զչարիս իմ, և մի՛ պարտաւորեր զիս ըստ իմում անօրէնութեանս. մի՛ յաւիտեան պահեր ոխս, եւ մի՛ ի սպառ բարկանար լինձ։ Մի՛ ըստ մեղաց իմոց առներ, և մի՛ ըստ անօրէնութեան իմում հատուցաներ լինձ։ Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց, և մի՛ խնդրեր զչիր յանցանաց իմոց. մի՛ դատապարտեր զիս, զի ես ինձէն գիտեմ զի անուղղայ եմ եւ յանցաւոր ի մանկութենէ իմմէ, և անպատասխանի յամենայնի։

Այլ գու, դատաւոր հզօր և անողոքակալ, որ զյանցանս մեզ թողեր զանառակ որդւոյն, թո՛ղ և լինձ զպարտիս մեզուցեալ եւ անարժան քո ծառայիս. քանզի զքո առատ բարերարութիւնդ յորժամ յիս ցուցցես, յայնժամ երեւեսցի բարեգթութիւն քո, որ արժանի եմ բիւր տանջանաց. զի

զամենայն զկեանս իմ անա-
ռակութեամբ անցուցի, և ոչ
կացի ի հրամանի քումմ: Այլ
քաղցրացի՛ր լինձ քաղցրու-
թեամբ, քաղցր և բարի թա-
գաւոր, և հաչտեա՛ ընդ բազ-
մամեղիս: Մի՛ հայիր յիմ ան-
հնազանդութիւնս և ի ծուլու-
թիւնս. մի՛ անարգեր զիս և
մի՛ թողուր զիս, և մի՛ ընդ
վայր հարկաներ զիս: Զի թէ-
պէտ ես զտաճար Հոգւոյդ սըր-
բոյ ապականեցի լիմով ծուլու-
թեամբս և անառակ գնացիւ-
քըս, այլ դու գթա՛ յիս, ստեղ-
ծիչ իմ ողորմած և անյիշա-
չար: Մի՛ ապականեր զհոգի
իմ զեհենաժառանգ այրմամբն

յաւիտենականաւ. այլ գթա-
ցեալ մարդասիրապէս՝ երկայ-
նամիտ լե՛ր առ իս, և ներեա՛
յանցանաց իմոց, և չնորհեա՛
լինձ ժամանակ զղջմամբ արտա-
սուաց եւ ապաչխարութեան:
Եւ տո՛ւր զօրութիւն և իմաս-
տութիւն խորհիլ զօրէնքս քո
ի տուէ և ի գիշերի, գործել
զբարի եւ առնել զարդարու-
թիւն առաջի երեսաց քոց:

Համբառնամ առ քեզ, տէր,
զաչս իմ բոլորով սրտիւ իմով.
կարդամ առ քեզ, Քրիստոս
Աստուած միածին Որդի Աս-
տուծոյ: Որ կամաւոր խոնար-
հեցար յանճառ փառաց, առեր
զկերպարանս ծառայի և ան-

պարտականդ յաղագս դատա-
պարտութեան մերոյ համբե-
րեցեր մինչեւ զչարչարանս
խաչի և մահու յանձն առեր
վասն փրկութեան ստեղծուա-
ծոց քոց: Արդ, որ այսպիսի
սէր ունիս առ ազգս մարդկան,
և կամիս զի ամենայն մարդ
կեցցէ և ի գիտութիւն ճշմար-
տութեան եկեսցէ, զթա՛ ի
բազմամեղս, զթած և մարդա-
սէր Տէր, և կամեա՛ց ընդ իմ
փրկութիւն, եւ արա՛ ողոր-
մութիւն ինձ եղկելոյս թըշ-
ուառականիս, որ առաւել վի-
բաւորեալ եմ և ողորմելի քան
զամենայն մարդիկ: Զի ոչ մի
օր սիրեցի զքեզ ի բոլոր սրտէ

իմմէ, և ոչ մի ժամ յամենայն
զօրութենէ իմմէ պահեցի զը-
պատուիրանս քո. այլ պղեր-
գութեամբ և զբօսանօք ան-
ցուցի զամենայն ժամանակս
իմ, և ապտեղի խորհրդովք
անցուցի զկեանս իմ: Աւուրք
իմ պակասեցան, և անօրէ-
նութիւնք իմ բարձրացան, և
ոչ գոյ ինձ յոյս փրկութեան և
տեղի ապաւինի. բայց միայն
յուսացեալ եմ և ապաւինեալ
յառատ ողորմութիւն քո, Ած-

բիտոս Աստուած:

Եւ արդ, անկեալ բղխմամբ
արտասուաց աղաչեմ զքեզ,
և հառաչմամբ սրտի առ քեզ
պաղատիմ. մինչչև եմ կորու-

սեալ և մինչչեւ է ժամանակ
դարձի իմոյ հասեալ՝ չնորհեա՛
ինձ ժամանակ ապաչխարու-
թեան, և յառաջ քան զվախ-
ճանն արձակեա՛ զիս ի կապա-
նաց մեղաց իմոց, և անտես
արա՛ զանթիւս անօրէնութիւնս
իմ։ Որ ամենայն բարութեանց
ես տէր, և լշխանդ ես թողուլ
զմեղս, ծածկեա՛ և արա ան-
տեսութիւն անօրէնութեան ի-
մոյ յամենայն մեծութենէ
քումմէ։ Մխիթարեա՛ զվըշ-
տացեալ և զտառապեալ հոգիս
իմ. և արժանի արա՛ զիս յայսմ
հետէ ըստ կամաց քոց քաղա-
քավարել զայլ եւս պանդխա-
տութեան իմոյ ժամանակս։

Եթէ կամիմ և եթէ ոչ կամիմ՝
բռնադատեա՛ զիս, և մի՛ թո-
ղուր զիս ի կամս անձին իմոյ,
մինչև տարեալ հասուսցես յո-
թեւանս արքայութեանդ երկ-
նից։

Լո՛ւր, տէր, աղօթից անար-
ժան ծառայիս քո. և պաղա-
տանաց իմոց ունկն դի՛ր. որ
ասացեր՝ թէ հայցեցէ՛ք և գըտ-
ջի՛ք, բաղխեցէ՛ք և բացցի
ձեզ, և այժմ բա՛ց ինձ, տէր,
զդուռն ողորմութեան՝ որ ող-
բալով կարդամ առ քեզ։ Եւ
մի՛ անտես առներ զաղաչանս
մեղուցեալ անձին իմոյ, որ ոչ
եկիր կոչել զարդարս, այլ ըզ-
մեղաւորս յապաչխարութիւն։

Սրդ, խոնարհեալ անձամբ եւ
բեկեալ սրտիւ եւ ամօթալից
երեսօք անկանիմ առաջի քո
և աղաչեմ առ քեզ. Հայր,
մեղայ յերկինս և առաջի քո.
թէպէտ և ոչ եմ արժանի կոչիլ
որդի քո յաղագս ապականեալ
վարուց իմոց, և ոչ անուանել
զանուն քո գարշելի բերանով
իմով, այլ համարձակիմ ի գը-
թութիւն քո, զի գիտեմ զքեզ,
քաղցր և անօխակալ, բազմա-
խնամ և երկայնամիտ առ ա-
րարածս քո: Եւ յաղագս այ-
նորիկ ժեղւով պաղատիմ առ
քեզ. և յառաջ քան զդնել ա-
տենին աղաչեմ, և նախ քան
զփակել դրանն ապաչխարու-

թեան եւ հատանել անդարձ
վճռին՝ զարտասուս իմ արկա-
նեմ առաջի անօխակալ գթու-
թեանդ քոյ, ողորմած Տէր,
երկայնամիտ, քաղցր և ան-
յիշաչար. մի՛ ընդ քանքարա-
թաքոյցան դատապարտեր վիս
և մի՛ ընդ յիմարս կուսանացն
փակեր զդուռն արքայութեան
քոյ. մի՛ ընդ չար և ընդ վատ
ծառայիցն լծակցեր վիս, և մի՛
ընդ անհաւատսն և ընդ հեր-
ձուածողսն դներ զբաժին իմ.
մի՛ ընդ պոռնիկսն և ընդ չա-
րագործսն կորուսաներ վիս, և
մի՛ ընդ ախտաւորսն և ընդ
չաղախեալսն հոգւով հաներ
վիս ի կենացն: Այլ զերծո՛ վիս

յանեզրական տանջանացն, և
ապրեցո՛ յանհանգիստ ալեկո-
ծութեանց, և վրկեա՛ յանմահ
մահուանէն, և ազատեա՛ յա-
ւիտենական ամօթոյն, զերծո՛
ի միչտ լալոյն և հանապազորդ
ողբալոյն: Մի՛ տարակիր առ-
ներ և մի՛ մերժեր զիս ի քո
դասուցն և յերանաւէտ կե-
նացն. մի՛ անբաժին հաներ զիս
ի հայրենի ժառանգութենէն,
և մի՛ զրկեր զիս յերկնաւոր
հարսանեացն, եւ մի՛ կարօտ
պահեր զիս ի քո անճառելի
տեսլենէդ: Այլ չնորհեա՛ ինձ
ընդ արժանաւորսն և ընդ կա-
տարեալ ոգիսն վերանալ լու-
սեղէն ամպովք ընդ առաջ քո

յօդս, և պարզ երեսօք և ա-
չալրջութեամբ կալ առաջի քո
տէ՛ր: Եւ վասն քո փառաւո-
րեալ հզօր և ահեղ թագաւո-
րութենդ մի՛ մտաներ ի դա-
տաստան ընդ ծառայիս քո, և
մի՛ հատուցաներ ինձ ըստ ա-
նօրէնութեանս, և մի՛ ամա-
չեցուցաներ զիս առաջի ան-
թիւ և ահեղ բանակաց քոց.
այլ ողորմեա՛ ինձ, զի ոչ ոք է
հակառակ քեզ, և պարգեւեա՛
ինձ զքո արքայութիւնդ: Ընդ
սուրբս քո դասեա՛, և ընդ ար-
դարան պսակեա՛, ընդ սիրելիսն
քո օրհնեա՛, և ընդ կամարարս
կամաց քոց յարազուարճ ու-
րախութիւնսն ուրախացո՛ եւ

առատապարգեւ փառօք փառաւորեա՛ զիս, Տէ՛ր, ի լուսեղէն երամս արդարոց, ընդ նոսին հանդչիլ ի վերինդ երուսաղէմ յանստուերս և յաստուածակեաց ուրախութիւնդ. զի ընդ նոսին համաձայնեալ փառաւորեցից զամենասուրբ զերորդութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք ճոխիւն դարձեալ

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քո, և մի՛ տար այլում զդատաստանս իմ, այլ ի փառաւոր բեմին մերձենալ

զիս արժանաւորեա՛. քանզի զոր Աստուած դատի, ողորմութեան արժանի լինիս։ Լսելով զայս ի հանճարեղացս և յիմաստնոց և ի սրբոց առաքելոցն զայսոսիկ՝ ասեմ. զի ամենայն ոք որ զթադաւոր տեսանէ, թէպէտ և մեղուցեալ է՝ ոչ մեռանի։ Աղաչեմ զքեզ՝ ստեղծիչ իմ և փրկիչ իմ, մի՛ զիս ի նեղելն իմոմէ թշնամացուցաներ, մի՛ խորտակելով չարչարեր զիս։ Քանզի եթէ արժանապէս ըստ գործոց այլ արասցես ինձ, յերկոցունց կողմանց կազմի ինձ որոգայթ կորստեան. զի յորժամ յիշեմ զգործս իմ զանըմբերելի, դո-

զուսմն ի վերայ իմ անկանելով խորտակեն զիս, և սարսուռ դժնեայ ունկն զիս յորժամ վըս-տահանամ հատուցումն ընդունել ի հանդստեանն՝ որ առաջի կայ, և ոչ կարեմ համբերել: Եւ յառաջագոյն յայտ առնէ ատամանց իմոց կրճատումն, որ անդ առաջի կայ լինձ ցաւքն և սարսուռքն: Տե՛ս, Տէ՛ր, ըզխոնարհութիւնս իմ եւ զթա՛ յիս: Աղաչեմ զքեզ, միածին Որդի Աստուծոյ, արժանի առա՛ զիս թողութեան մեզաց, և մի՛ հատուցաներ լինձ ըստ վարձուց վաստակոց իմոց. քանզի եթէ զանօրէնութիւնս իմ պահեսցես, ո՛վ տեւեսցէ

քեզ. և եթէ ըստ մեծութեան քում հատուցանես մեզ ողորմութիւն, արժանի՛ գտանիմք ի դատաստանի քում. քանզի ամենայն բերան խցցի և դատապարտեսցի ամենայն աշխարհ առաջի Աստուծոյ: Արդ ոչ եթէ զքո չնորհսդ արհամարհելով յառաջ բերեմ զայսոսիկ, այլ զգրեալսն խօսիմ, երկայնամիտ Քրիստոս: Զի՞նչ օգուտ իցէ քեզ ի մարմնոյ իմոյ, եթէ ի բորբոքեալ հուրն առաքեցայց. արա՛ ընդ իս ըստ ողորմութեան քում զգթութիւնդ քո, եւ ծանիցի ամենեցուն չնորհք քո և երկայնմտութիւն քո: Եթէ զդատաստան ամե-

նայն երկրի առնես, որպէս պատուիրանք քո յայտնեցին, ոչ ապրեսցի մի ի հազարաց, և ի բիւրոց ոչ փրկեսցին: Այլ զի՞նչ հոգալով խօսիմ զայս ես տառապեալս. աղաչեմ Փրկիչ, ոչ զի զուգեսցես զմեղաւորան ընդ արդարան՝ քեզ մաղթեմ, բարերարութեան որպէ, այլ զի արժանի արասցես զգթութիւն քո սփռել ի մեզ, յիս և ի մերձաւորս իմ: Դարձեալ աղաչեմ և ոչ դադարեցայց երբէք յայտնել. զի թէ ոչ զգուշութիւն քո ձգեսցես ի մեզ, ոչ ոք կարող է տեսանել զկեանս:

Աստուած, զթութեամբդ քո աղաչեմ զքեզ, մի՛ կացու-

ցաներ զիս ընդ ուլոն ի ձախ-մէ քումմէ՝ որք զայրացուցին զքեզ, և մի՛ ասիցես թէ ոչ գիտեմ զքեզ, այլ տո՛ւր լինձ յաղագս գթութեան քոյ մըշտնջենաւոր ողբումն և զըղջումն. նուաստացո՛ զսիրտ իմ և սրբեա՛ զսա, զի լիցի տաճար չնորհաց քոց: Զի թէպէտ մեղաւոր եմ եւ ամբարիշտ, սակայն հանապազ ղդրուհս քո բաղխեմ, զի թէ գանդազկոտ եմ և պղերգ, սակայն զճանապարհս քո կամիմ գնալ: Տէր իմ և փրկիչ, ընդէ՞ր զիս լքանես. գթա՛ յիս, վասն զի դուստրիայն ես առանց մեղաց. հա՛ն զիս ի տղմոյ անօրէնութեան

լմոյ, զի մի՛ ընկղայց յաւիտեան: Փրկեա՛ զիս ի բերանոյ թշնամւոյն լմոյ, զի ահա իբրեւ զառիւծ մռնչէ՝ կամելով կլանել զիս. զարթո՛ զօրութիւն քո, և եկեսցէ կեցուցանել զիս. փայլատակեա՛ զփայլատակունս քո, քայքայեա՛ զզօրութիւն նորա. երկիցէ և զարհուրեսցի յերեսաց քոց, քանզի տէր է եւ ոչ ունի զօրութիւն կալ առաջի քո: Եւ արժանաւորեա՛ զիս ընդ փրկեալսն խաչիւ և արեամբ քով՝ զոհանալ և փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նորին դարձեալ աղօթք զղջման

Տէր Աստուած զօրութեանց, աղաչեմ զքեզ, որ մեծդ ես և ահաւոր, ահեղ և սքանչելի, անեղ և անանցանելի, անբաւ և անբովանդակելի և ամենեւին անքննելի և անիմանալի և անհաս, ի վեր քան զամենայն և յամենեցունց օրհնեալ, գովեալ և փառաւորեալ, անյիշաչար, զթած եւ մարդասէր: Քանզի դու միայն ես հայր ամենակալ և արարիչ ամենայն լինելութեանց, զորս ի չգոյէ գոյացուցեր, և ունիս ի հաստատութեան. եւ դու, տէր, որ տէր ես ամենայնի,

և ամենայն արարած քոյով հրամանաւդ կառավարին։ Դու ես ամենեցուն օգնական եւ պահապան. դու բժշկես զվիրաւորեալսն ի բանսարկուէն, և առողջացուցանես զհիւանդացեալս մեզօք. ընդունիս զխոստովանողսն եւ զապաշխարողս, և քաւես և սրբես զյանցանսն մեղուցելոց։ Վասն որոյ ես՝ որ կարի լի եմ մեղօք, առ քեզ անկանիմ յաւրաժամ. աղաչեմ և մաղթեմ եւ խնդրեմ ի քէն զթողութիւն. դու նայեա՛ յիս, Փըրկիչ, մարդասիրութեամբ քով, եւ ընկա՛լ զթութեամբ քով զդերեալս ի չար թշնամւոյն։

Խոնարհեա՛, տէր, ի մաղթանս իմ, և բժշկեա՛ զհոգւոյ իմոյ զխոցոտուածն յաներեւոյթ նետից սատանայի։

Տե՛ս, տէր, զտառապանս քոյ ծառայիս, եւ չնորհեա՝ զթողութիւն անթիւ յանցանաց իմոց զոր մեղայ։ Լո՛ւր, տէր, ձայնի ողբալոյս եւ ցաւագին պաղատանացս, զի կարօտ եմ չնորհի քոյ և ողորմութեանդ։ Թո՛ղ տէր, զյանցանս իմ բազմամբեր և զմեղս իմ զանհամարս մինչչեւ հասեալ իցէ օր դատաստանի քոյ։ փարատեա՛ յինէն զանզգուշութեան խաւարըն՝ որ տարածեալ կայ ի սրտիս եւ զեղջ հատատեա.

յորդորեա՛ զիս յարտասուս եւ
ի զեղջ ապաշխարութեան հա-
նապազ։ Շնորհեա՛ ինձ, փրկիչ,
զղջումն արտասուաց մարգա-
րէին, որով զմահիճս թանայր,
զի եւ ես զվէրս հոգւոյս իմոյ
լուացից հեծեծանօք և պաղա-
տանօք եւ ողբագին արտա-
սուօք։ Գիտեմ, տէր, զի յան-
ցանք իմ անթիւ են առաջի
քոյ՝ մարդասէր՛, այլ և ամբաւ
են ողորմութիւնք քոյ ի վե-
րայ ապաշխարողաց. ընդ որս
եւ ինձ ողորմեա՛, ինձ որ ա-
ռաւելս եմ անօրինեալ քան
զամենայն մարդ։ Եւ չեմ ար-
ժանի առ քեզ ի վեր հայել,
բարերար, ի բազմութենէ պա-

տահեալ յանցանացն զոր գոր-
ծեցի. այլ դու, տէր, հայեաց
ի վարանումն տարակուսանաց
իմոց յերկիւղէ զեհենին, եւ
մի՛ անզեղջ և անապաշաւ հա-
ներ զիս յաշխարհէս լի յանցա-
նօք. այլ ի վայրս տարժանելի
վաստակոց և ի չան կատար-
եալ ապաշխարութեան առ ըզ-
հոգի իմ յինէն, եւ խառնեա՛
ի թիւ ճշմարիտ ապաշխարո-
ղացն արդարացելոցն՝ որ ի փա-
ռըս քոյ վայելեն։ Ոչ վասն
իմ ինչ վարուց եմ արժանի
ողորմութեան քոյ, մարդասէր,
այլ վասն գթութեան քոյ տէր
չնորհեա՛ ինձ թողութիւն յան-
ցանաց իմոց, և օգնեա՛ ի մար-

տի թշնամւոյն ծուլացելոյ ծա-
ռայիս քոյ, բարերա՛ր. քան-
զի բազում անգամ խոստացայ
զյանցանս իմ խոստովանել և
ապաչխարել, և անօրէն թըշ-
նամին ժամէ ի ժամ ձգելով
կորոյս զկարողութեան ժամա-
նակն ապաչխարելոյ:

Եւ արդ եթէ ոչ դու, տէր,
օգնեսցես եւ չնորհիւ քո զօ-
բացուսցես, չիք ինձ ի գոր-
ծոց իմոց փրկութիւն. զի թէ-
պէտ և բանամ զբերան իմ
յաղօթել, և զձեռս իմ առ
քեզ ի վեր համբառնամ յա-
ղաչանս, անդրէն զսիրտ իմ
սատանայ պատրուակէ, եւ
զմիտս մերժէ յպատուածոյնն

յերկիւղէ, զանազան և զա-
զիր խորհրդովք զբաղեցու-
ցանէ և ընդունայն հանէ յաղօ-
թիցն: Վասն որոյ զփրկիչդ իմ
աղաչեմ, փրկեա՛ զիս ի պա-
տերազմէս յայսմանէ. քանզի
կարի նեղեալ եմ ի նենգութենէ
թշնամւոյն՝ որ երբեմն ի հա-
ւատս յորդորէ յօժարամիտ
սրտիւ խնդութեամբ, և երբեմն
ի մեղս ընկենու ոչ յիշելով
զբոց գեհենոյն՝ զոր ոչ զգա-
ցի, և ոչ լալով լուացի զվի-
րաց յանցանաց իմոց փտու-
թիւնս: Որ չարախոցս եմ վի-
րաւորեալ յանթիւ մեղացս
բազմութենէ, եւ ոչ բաւեմ
ապրել ծուլացելով անձամբս,

այլ յողորմութիւն քո յուսալով համարձակիմ առ քեզ աղօթել բարերարիդ և մարդասիրիդ Աստուածոյ։ Ընկա՛լ զաղաչանս իմ ցաւագինս եւ զպաղատանս իմ աղերսաբերս, և չնորհեա՛ ինձ զղջումն արտասուաց ապաշխարութեան, ողով զմեղս իմ քաւեցից, եւ զարարիչդ իմ հաշտեցուցից մաղթանօք։ Ահա, տէ՛ր, սիրտ իմ գելոյ յանթիւ մեղացս վրանաց, եւ որովայն իմ հեծէ առ քեզ ողբալով, և անձն իմ հեծէ և աչք իմ բաղձայ արտասուաց յիշելով զմեղաց իմոց զբազմութիւն։ Զի լի եմ անթիւ յանցանօք և անհամար

գործովք անօրինութեան, եւ առ քաւիչդ իմ խոստովանիմ ողբալով. քանզի Աստուած ես գթութեանց և տէր ողորմութեանց, գթա՛ յամենամեղս որ ի քեզ եմ ապաւինեալ, բազմագութ։ Զի կարեվէր եմ մեղօք, եւ տագնապիմ ախտիւ յանցանօք, եւ խնդրեմ ի քէն բժշկել՝ որ բըժիշկ ես հոգւոց և քաւիչ յանցանաց։ Եւ արդ բժշկեա՛, տէր, զի լեզու իմ վիրաւորի դատարկաբանութեամբ և ի զրախօս բամբասանաց։

Լուսաւորեա՛, տէր, զաչս իմ յածողս ի չարաչար նայելոյ և յանդէպ տեսանելոյ։ Սրբեա՛,

տէր, զմիտս իմ ի խաւարայնի
խորհրդոց սատանայի եւ յա-
մենայն չար գործոց թշնա-
մւոյն, և լցո՛ չնորհօք և ողո-
մութեամբ քով։ Լուա՛, տէր,
զախտ հոգւոյ իմոյ զոր ժան-
դահոտ մեղաց նեխութեամբ
զազրացուցի, և չնորհեա՛ ինձ
խորհել միշտ զսիրոյդ քո՝
բաղձալ յարաժամ։ Հօրդ մար-
դասիրի և բարերարի կարօտիմ
հանապազ, ընկալ զիս գթու-
թեամբ որպէս զորդին անա-
ռակ. լցո՛ զքաղց իմ և զծա-
րաւ յառատաբաշխ չնորհէդ,
բարերա՛ր։ Եւ խնդրեմ առ
քեզ մերձենալ, եւ միշտ
չնորհաց քոց փափագիմ յա-

բաժամ, և զողորմութիւնս քո
բերկրանօք ժառեմ հայցել մաղ-
թանօք։ Եւ դու տէր, ընկա՛լ,
զվչտագնելոյս տառապանս, և
ներեա՛ քոյով մեծաւ ներո-
ղութեամբ յանցաւոր ծառա-
յիս, բարերա՛ր։ Զի թէ առանց
ներելոյ զյանցանս իմ դատես,
ապա երանեմ չելելոցն յորո-
վայնէ, զի հուր գեհենին է
ժառանգութիւն հանապազ.
քանզի ոչ միացին ճանապարհք
մեղաց՝ ընդ որս ոչ գնացի, և
ի չնորհաց սուրբ Հոգւոյդ մեր-
կացայ։

Արդ, անկեալ առ քեզ պա-
ղատիմ. գթա՛ ի ժառութիւն
թախանձանաց մաղթողիս, և

մի՛ մերժեր զիս յողորմութենէ քումմէ, ողորմած տէր։ Զի զքեզ խնդրեցի և զքեզ աղաչեմ, լի՛ց զփափագ իմ որում միչտ հոգի իմ կարօտի՝ մեղաց թողուլթեան։ Զի ոչ թէ իբրեւ զբարեգործ ոք հայցեմ ի քէն համարձակ, այլ իբրեւ զմեծամեղ յանցաւոր ոք՝ աղերսիւ ժտեմ յարաժամ։ Ոչ զոզի իմ մաքուր ունելով ինչ մերձենամ առ քեզ, մարդասէր, այլ ի մաքրութենէդ քումմէ զժահահոտութիւն վիրաց մեղաց իմոց մաքրել աղաչեմ. զի դու միայն ես հայր իմ և տէր բարերար, արարիչ իմ և փրկիչ իմ և կեցուցիչ իմ։

Առ յո՛ երթայց, մարդասէր, կամ յումմէ՞ խնդրեցից օգնութիւն և վիրաց իմոց բժշկութիւն. այլ քեզ մաղթեմ ողորմածիդ Աստուածոյ և բազմագութ իմոյ արարչիդ։ Մի՛ բարկութեամբ խրատեր և մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ, բարերար. մի՛ ընդ պատժեալն պատժեր զիս, մի՛ ընդ դատապարտեալն դատապարտեր զիս, գթած. մի՛ անողորմ պահանջանօք պահանջեր, և մի՛ սոսկալի գեհենիւդ դողացուցաներ, մարդասէր։ Մի՛ յաւիտենական ամօթովն ամաչեցուցաներ զիս, և մի՛ ի մեծի աւուրն սրբոցն պսակելոյ՝ զիս

պատուհասեր անողորմ և անընդելի։ Այլ ապրեցո՛ զիս, տէր, ի հրահոսան հալոցացն և ի հրաբորբոք գեհենոյն, յանլոյծ կապանացն եւ յանհնչոյլ խաւարէն, յանաչառ դատաստանացն եւ յաններելի տանջանացն ցաւոց։

Այո՛, տէր, յայտնեա՛ առ իս զգթութիւնս քո, զի սովոր ես ցուցանել զողորմութիւն քո առ կարօտեալս, նեղեալս և վշտագնեալս մեղօք. եւ այժմ առ իս ցոյց զբարերարութիւնդ քո, որ չարաչարս եմ վիրաւորեալ առաւել քան զՍոդոմայն. և միշտ երկիւղիւ դողամ հանապազ՝ եթէ կեն-

դանւոյն հրակիզեսցես իբրեւ զնոսա հրատեղացն բարկութեամբ։ Վասն որոյ աղաչեմ զգթութիւնս քո, մարդասէր, չնորհեա՛ ինձ նման նինուէացւոցն՝ զսրտմտութիւն քո յողորմութիւն դարձուցանել, և կանգնիլ ի յանցանաց կործանմանէ. զի ահա ծով մեղաց յանդունդս ընկղմէ զիս վասն անօրէնութեան իմոյ առաւել քան զչրհեղեղն։ Այլ հրամայեա՛ ինձ, տէր, զողորմութիւնս քո տապան ամրութեան իբրև զնոյի ապրել ապաչխարութեամբ ի հրեղէն ծովէն անդնդոց։ Քանզի դուա՛ն բարերար տէրն ես, որ

վասն մարդասիրութեան քո ի ծառայական կերպ իջեր՝ թա-
գաւորդ, ազատեա՛ եւ զիս ի չար ծառայութենէ մեղաց և-
մոց և յանօրէնութեանց։

Որ վասն իմ թուք ի դէմս և ապտակ ի ծնօտս և փուշ ի գլ-
ուխս ընկալար, մարդասէր, հա՛ն զփուշ յանցանաց իմոց՝
որ չարաչար վիրաւորիմ հա-
նապազ։ Որ վասն իմ փայտի
խաչի և խոցման գեղարդեա-
նըն և ձեռաց կապանաց և բե-
ւեռացն համբերեցեր, բարե-
բար, լո՛յծ և զիս ի դառն կա-
պանաց սատանայի, եւ բժըշ-
կեա՛ զխոցուածն աներեւոյթ
գեղարդեան թշնամւոյն։ Եւ

արդ, որ այսմ ամենայնի համ-
բերեցեր, ողորմած տէր, վասն
իմ, եւ այժմ աղաչեմ վասն
մեղացս թողութիւն։ Թէպէտ
վասն անբաւ ծուլութեանս ի-
մոյ չեմ արժանի ողորմութեան
քոյ, սակայն վասն ժառանգեան
իմոյ լո՛ւր, տէր, իբրև այրւոյն
թախանձանաց առ անիրաւ
դատաւորին։ Եւ առ կատա-
րեա՛ զբան քո, տէր իմ, թէ ոչ
եկի կոչել զարդարս, այլ զմե-
ղաւորս։ Եւ գիտեմ՝ եթէ ար-
դարքն իբրև զպարտս ընդունին
ի քէն զարդարութեան պար-
գեւսն, բայց լինի ողորմութիւն
չնորհեա՛ իբրեւ մեծամեղի եւ
բիւրապատիկ մահապարտի։

Որ առ ամենեսեան ես գը-
թած, լո՛ւր եւ իմ ողբալոյս
առ քեզ, բարերար, եւ ունկն
դիր գթութեամբ պաղատանաց
ձայնիս, ողորմած. դարձո զիս
յուղիղ ճանապարհն իբրև ըզ-
հայհոյիչն և զհալածիչն, և ար-
դարացո՛ որպէս զմաքսաւորն.
ողորմեա ինձ որպէս Քանա-
նացւոյն. ընկա՛լ զիս որպէս
զանառակ որդին, և միւսանգ-
ամ դարձո յիս զչնորհն աւա-
զանին սրբութեան զոր զա-
նազան մեղօք հալածեցի: Եւ
մի՛ ընդունայն առներ զաղա-
չանս ծառայիս քո, բարերար.
այլ բաց զդուռն աղօթից ի-
մոց առ քեզ, մարդասէր. եւ

մի՛ թագուցաներ զդուռն ո-
ղորմութեան քոյ յամենամեղ
ծառայէս՝ ողորմա՛ծ: Զի դու,
տէր, ասացեր, թէ չի՛ք ինչ
զոր խնդրիցէք յԱստուծոյ՝ և
ոչ առնուցուք: Վասն որոյ
ամենամեղս ժառեմ հայցելով ի
քէն թողութիւն, զոր անսուտ
խոստացար ինձ Փրկիչ: Ոչ թէ
վասն հաճութեան ինչ գործոյ
կամ արդարութեան իմոյ աղա-
չեմ զքեզ, մարդասէր, այլ
վասն ողորմութեան քոյ, զի
քաղցր ես եւ բարերար եւ
մարդասէր: Ահա ես իբրեւ
զպարտական եւ զմեծամեղ
կամ առաջի քո ամօթով, եւ
դու իբրև զհայր գթած մի՛ ար-

գելուր զհայցուածս իմ զոր
խնդրեմ ի քէն զթողութիւն։
Ահա ձեռք իմ համբարձեալ
են առ քեզ, և սիրտ իմ զար-
թուցեալ է ի խնդրել, տէր բա-
րերար. բայց զականջս իմ լը-
սել երկիւղիւ զձայն պատգա-
մաց քոց, և բացցին աչք սըր-
տի իմոյ դողութեամբ հայել
առ քեզ ի բարձունս առ գթա-
ծըդ և բազումողորմդ եւ նե-
րողդ առ մեղուցեալս. զի դու,
տէր, քաղցր ես եւ երկայնա-
միտ. վասն մեղաւորաց կոչե-
ցար ողորմած, ի դառնալ անօ-
րինին ոչ յեշես զամենայն ա-
նօրէնութիւնն զոր արար։ Արդ՝
խնդրեմ ի քէն ողորմեա՛ լինձ,

քանզի դու միայն ես քաւիչ՝
որ զանթիւ յանցանս յանցե-
լոցն քաւեցեր, բարերար. ըզ-
մեռեալսն մեղօք կենդանա-
ցուցեր, զմոլորեալսն ի չար
թշնամւոյն դարձուցեր. զխա-
ւարեալսն ի ճշմարտութենէ
լուսաւորեցեր, և բազմամե-
ղիս դարձին ներեցեր մինչեւ
ցայժմ։ Զի քո եմ և ի քո պատ-
կեր հաստատեցեր զիս. ձեռօք
ստեղծեր և չնչով կենդանա-
ցուցեր և ամենայն իշխանու-
թեամբ փառաւորեցեր զիս.
և ետուր լինձ պատուիրան, և
ոչ պահելովիս անկայ ի փառա-
ցըն։ Եւ դարձեալ ի գալստեան
քոյ նորոգեցեր զիս, ողորմած.

լուացեր եւ սրբեցեր զիս ա-
ւազանին սրբութեամբ, եւ
դարձեալ վերստին վիրաւորե-
ցայ եւ բժշկեցեր ապաշխարու-
թեամբ:

Եւ արդ՝ որ զայս ամենայն
բարութիւնս չնորհեցեր ինձ
ողորմութեամբ քով, քաւեա՛
այժմ ի մեղաց եւ պահեա՛ յայ-
սմհետէ սրբութեամբ, տէր.
փրկեա՛ ի թշնամւոյն եւ ի ձե-
ռաց դժոխոց, ի միշտ լալոյն
եւ յանդադար ողբալոյն՝ յորում
ոչ ոք լսէ եւ ներէ ի դառն ա-
ղեխից տանջանացն: Բայց դու
միայն ես մարդասէր, քաղցր
եւ երկայնամիտ, բարերար եւ
բազումողորմ, ընկա՛լ զաղա-

չանս իմ: Ինձ մեղայ եւ քեզ
խոստովանիմ եւ առ քեզ պա-
ղատիմ. զվէրս հոգւոյ իմոյ
ցաւագին հառաչմամբ ողբամ,
եւ զանօրէնութիւնս իմ առա-
ջի քո: Աղաչեմ՝ հաշտեա՛ց
տէր, ընդ աղաչանս իմ ողոր-
մութեամբ քով. ներեա՛ եւ
մարդասիրեա՛ ի վերայ մեղու-
ցելոյս եւ ընկալ զիմութեամբ
քով զաղաչանս իմ:

Ընկա՛լ, տէր, զզղջումն խոս-
տովանութեան իմոյ, զհառա-
չումն ապաշխարութեան, եւ
ջնջեա՛ զանթիւ անօրէնու-
թիւնս մանկութեան իմոյ, զի
տկարացայ յանցեայ իբրեւ
զմարդ, մեղայ եւ անկայ ի

խորս չարեաց: Գթա՛, քաւեա և յարո՛ իբրեւ զԱստուած եւ թեթեւացո՛. կանգնեա յաներեւոյթ գլորմանէս, և ընկա՛լ զսուղ ապաչխարութիւն ապաչխարութեան իմոյ՝ մարդասէր. և թեթեւացո զծանրութիւն մեղաց իմոց զոր մեղայ քեզ, բարերար: Ես եմ գործ ձեռաց, մի՛ անտես առներ զիս, ողորմած, որ առ քեզ զաչս ի վեր եմ համբարձեալ ի մաղթել, զձեռս մերս տացս տարածեալ յաղաչանս, և ծունր իջեալ պաղատանօք զմեղս իմ խոստովանիմ առ քեզ եւ աղաչեմ ողբալով. Հայր, մեղա՛յ յերկինս և ա-

ռաջի քո, քաւեա՛ զանօրէնութիւնս իմ, ողորմա՛ծ: Եւ մի՛ այլ եւս թողուր զիս ի պատուիրանս քո մեղանչել, բարերա՛ր. այլ չնորհեա՛ ինձ առ քեզ պաղատել ապաչխարութեամբ, պաղատանօք եւ չանիւ աղօթից, անդադար հառաչմամբ եւ գորովագութ ողորմ ողբալով առ քեզ՝ հանապազ արտասուել, աղաչել և խնդրել մեղաց թողութիւն, զի կարող ես յամենայնի մարդասիրութեամբ քով:

Պահեա՛ զիս զթութեամբ քով. զօրացո զիս չնորհօք քո. օգնեա՛ փրկեա՛ և բժշկեա՛ ըզվէրս մեղաց. նորոգեա՛ զիս

և հաստատեա՛ և ապրեցո՛ ի չար թշնամւոյն. ներեա՛ քա-
ւեա՛ և արդարացո՛ և լցո՛ Հո-
գւովդ քով սրբով։ Եւ չնոր-
հեա՛ ինձ պահել հանապազ
զվարս ուղիղս եւ հաւատս
ճշմարիտս, խոնարհութիւն
եւ հեզութիւն, հնազանդու-
թիւն, պատուիրանապահու-
թիւն եւ սէր կատարեալ.
սրբութիւն սրտի, ճշմարտու-
թիւն լեզուի, ցնծութիւն ա-
չաց, պարկեշտութիւն մար-
մնոյ, պնդութիւն պահոց,
յօժարութիւն աղօթից, յոր-
դորումն ողորմութեան, զըղ-
ջումն և արտասուս ապաշ-
խարութեան, համբերութիւն,

ժուժկալութիւն, եւ առաւել
գոհութիւն ամենայն նեղու-
թեանց։ Զի այսու ամենայ-
նիւ քաւեալ գիս եւ սրբեալ՝
արժանի արա՛ զիս մարմնոյ և
արեան քոյ սրբոյ և արքայու-
թեանդ երկնից՝ մարդասէր։
Ցամենայնի գոհացայց զքէն
հանապազ, երկիրպագից միան-
գամայն երրորդութեանդ յա-
րաժամ. օրհնեցից գովեցից և
փառաւորեցից գոհութեամբ
անդադար զՀայրդ ողորմած
և զՈրդիդ բարերար և զՀոգիդ
սուրբ կենդանարար, այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից, ամէն։

Աղօթք ընդ Որիւն դառնալ

Փառք քեզ, Աստուած, փառք քեզ արարիչ յաւիտենից Աստուած, փառք քեզ. որ չնորհեցեր հանգիստ տկարութեանս մերում. որ զարթուցեր զարարածս զքեզ փառաւորել: Որ ի յերկնից խոնարհեցար մարմնանալ վասն մեր, և ի սուրբ Աստուածածնէն Աստուած յայտնեցար: Որ ի մէջ գիշերի վասն մեր յանցանացն ծնար ի կուսէն և ի սուրբ այրին բազմեցար, զանարժան ծառայս քո որ յաղքատաց եմ ծնեալ՝ սրբեսցես ի մեղաց: Որ ի մէջ գիշերի գալով ի տա-

ճարն արձակեցեր զծերունին, զանարժան զքո ծառայս արձակեա՛ ի մեղաց կապանաց և ի բանտից: Որ ի մէջ գիշերի ճանապարհ հորդեցեր յեգիպտոս ելանել, զանարժան քո ծառայս յելանելն աչխարհէս առաջնորդեսցես ի կեանս: Որ ի մէջ գիշերի զնայիր ի վերայ ծովուն իբր ի վերայ ցամաքի, անարժան քո ծառայիս ձեռընտու լե՛ր, տէր իմ, որպէս Պետրոսի: Որ ի մէջ գիշերի լուացեր զոտս աչակերտացն՝ ըզպատուական մարմին և զարիւնդ քո բաչխելով ի նոսա, զանարժան զքո ծառայիս լուսացես զմեղս, եւ ընկալեայիս

հաղորդս մարդասիրապէս ընդ
մեռանելս բազմեալ ի սեղան
խորհրդոյ: Որ ի մէջ գիշերի
վասն մեր յաղօթս կայիր առ
Հայր յառաջ քան զչարչարա-
նըս, զանարժան քո ծառայիս
ընկալեալս զաղօթս ի ժամ գի-
շերիս: Որ ի մէջ գիշերի բժըշ-
կել կամեցար ի Պետրոսէ հա-
տեալ զունկն Մաղքոսի, զա-
նարժան զքո ծառայս բժշկեա՝
զվիրաւորեալս յանօրէն թըշ-
նամւոյն: Որ ի մէջ գիշերի կա-
լով առաջի Կայիափայ՝ զա-
տապարտեցար եւ ապտակե-
ցար, զանարժան զքո ծառայս
յահագին քո դատաստանին մի՛
դատապարտեր: Որ ի մէջ գի-

շերի վասն մեր հայեցար ի
Պետրոս՝ յիշեցուցանելով նմա
զյանցանս իւր, անարժան քո
ծառայիս չնորհեա զղջումն և
արտասուս ի լուացումն մեղաց
իմոց: Որ ի մէջ գիշերի կամա-
ւոր խաչի եւ մահու ընդ մեռ-
եալս համարեալ և ի գինուո-
րաց պահեցար, անարժան քո
ծառայիս զբանակս հրեշտա-
կաց չնորհեսցես պահապան:
Որ ի մէջ գիշերի յարեար ի մե-
ռելոց կամաւ Հօր և սուրբ Հոգ-
ւոյն, զանարժան զքո ծառայս
որ մեղօքս իմ մեռեալ՝ կեն-
դանացուսցես, տէր իմ: Որ ի
մէջ գիշերի վասն մեր գալոց
ես միւսանգամ նորոգել զա-

բարձս, զանարժան զքո ծառայս յանուանէ կոչեսցես առնապական նորոգմամբ և նոր բահրաշ փառօք: Որ ի մէջ գիշերի վասն քո մարգասիրութեանդ զիմաստուն կուսանսն ընկալար յառագաստն, անարժան քո ծառայիս բա՛ց զդուռն դրախտին՝ զառագաստն լուսոյ. զի դու սուրբ, սուրբ, սուրբ ես, տէր զօրութեանց:

Աղօթք ընդ հին դառնալ

Փրկեա զիս, Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ, ի բարկութենէն որ գալոցն է: Որպէս փրկեցեր զԱդամ ի դժոխոցն. որպէս փրկեցեր զՆոյ ի ջրհեղեղէն. որպէս փրկեցեր զԱբրահամ ի հալածչացն. որպէս փրկեցեր զՂովտ ի Սոդոմայեցւոցն. որպէս փրկեցեր զԻսահակ յանհաւատից. որպէս փրկեցեր զՅակոբ ի ձեռացն Եսաւայ. որպէս փրկեցեր զՅովսէփ ի գբին. որպէս փրկեցեր զՄովսէս և զԺողովուրդն ի Փարաւոնէ. որպէս փրկեցեր զԴաւիթ ի Գողիաթու. որպէս փրկեցեր զԵղիա յեզաբելայ. որպէս փրկեցեր զԵղիսէէ ի նախատանացն. որպէս փրկեցեր զՅովնան ի փորոյ կիտին. որպէս փրկեցեր զԵզեկիա ի հիւանդութենէն.

որպէս փրկեցեր զԵրեմիա ի գբոյ տղմին. որպէս փրկեցեր զՇուշան ի ծերոցն. որպէս փրկեցեր զԴանիէլ ի բերանոյ առիւծուցն. որպէս փրկեցեր զերիս մանկունսն ի հնոցին. որպէս փրկեցեր սուրբ զաւաքեալն Պօղոս ի բազում վշտացն. որպէս փրկեցեր ըզԹեկղի ի հրոյն և ի գազանացն։ Որպէս փրկեցեր զնոսա՝ փրկեսկեա եւ զիս, տէր. ողորմեա լինձ Աստուած խաղաղութեան եւ լոյս աչխարհի՝ Փրկիչ աշխարհի։

Գթա, տէր, և ողորմեա լինձ. կանխեա առ իս եւ ողորմեա. լուր ձայնի աղօթից իմոց յա-

մենայն ժամ։ Ծագեա զլոյս գիտութեան քո ի չխմարեալ միտս իմ եւ ի մահկանացու մարմինս իմ։ Բարձ լինիցէ զամօթ նախատանաց թշնամւոյն։ Ծուր զօգնականութիւն խաչիդ քո. և կանգնեա յիս ըզնչան յաղթութեան բազկի քո, զի գոհասցին զքէն սուրբք քո, և փառաւորեսցի անուն մեծութեան քո։ Ծագեա յիս զողորմութիւն քո ի յաղէ սուրբ չնորհաց քոց. և բարձ լինիցէ զդատապարտութիւն անիծից պարտեայ իմոց ի ձեռն քաղցրութեան փրկութեան քո։ Ննարհեսցո տէր՝ զանկն քո եւ լուր աղօթից իմոց։ Ողորմեա

ինձ տէր՝ զի նեղեալ եմ ես. մխիթարեա զիս ի զօրութիւն անուանդ քո. բժշկեա զիս ո-ղորմութեամբ քով, զի դողայ սիրտ իմ և ոսկերք իմ ի բազ-մութենէ յանցանաց իմոց. Զի ո՞վ է իմ Փրկիչ, եթէ ոչ դու, տէր, որա մենեցուն գաղտնիք յայտնի են քեզ, չիք ինչ ա-ռաջի զօրութեանդ քո ի ծա-ծուկ:

Տէր ամենակալ, ունկն դիր խնդրուածոց իմոց, և լեր իմ այցելու. զի պակասեցան ի վշտաց կեանք իմ, և տկարա-ցաւ զօրութիւն իմ, և նուա-ղեցաւ լոյս աչաց իմոց. Ջեռաւ փոր իմ, և ոսկերք իմ ցա-

մաքեցան ի բազում հոգոց մե-ղաց իմոց. Մի՛ տար զիս, տէր, նախատինս դրացեաց իմոց, և ատելիք իմ մի՛ այպանեսցեն զիս: Մի՛ թողուր զիս, տէր, վասն ողորմութեան քո, և մի՛ մոռանար զիս, զի քեզ սպա-սէ անձն իմ. զի դու ես յոյս ժառանգութեան իմոյ: Ցետս դարձցին հալածիչք իմ ընդու-նայն, և ատելիք իմ ի տարա-պարտուց: Լուսաւորեա զիս, տէր, և դարձո զերեսս քո յիս: Մերկացո չինեն զխաւարն մո-լորութեան, և հաստատեա զիս ի կենդանութիւնն բանի քո: Բեկ զհպարտութիւն թշնամւոյն, տէր ամենակալ. խորտակեա

զյամառութիւն նորա զի մի կարասցէ փակել զդուռն լուսոյ քո՝ ելանել ինձ ի ճանապարհս արդարութեան։

Բազում են քաղցրութիւնք քո, տէր, ցօղեա յիս զկանուխսըն և զանազանն։ Հալեա ըզսառն անհնազանդութեան մըտաց իմոց, և բարձ զմէգ թերահաւատութեան ի խորհրդոց իմոց։ Ցածո յինէն զուխս մոլեկանս հարուածոց ցանկութեան, եւ ցամաքեցո յինէն զաղբիւրն սոռութեան։ Հեռի արա յինէն զձեռն ատելութեան, որ անբոյս առնէ զսերմն արդարութեան։ Շնորհեա զարեւ քաղցրութեան հոգւոյդ սրբոյ,

քաւիչդ իմ և արարիչդ, եւ ցօղով չնորհաց քոց լուա յինէն զամենայն թոյնս վնասակարս։ Մ՚չակեա՛յիս, տէր, մըշակ բարեբար՝ զսերմ արդարութեան քո, և պահեա ինձ՝ զութենէ թշնամւոյն, զի մի՝ սերմանեսցէ յիս զսերմն չար։ Ընդ յարկաւ արա զիս, ազատէն իմ և փրկիչ իմ, ի հակառակութենէ թշնամւոյն։

Ծագեա զնչոյլ ճառագայթից ճշմարտութեան քո յիս, և առաջնորդեա ինձ մինչեւ ի քաղաքն սրբոց։ Արժանաւորեա զիս, Աստուած իմ, հաւասարել ընդ սուրբս քո. փառաւորել զանուն քո, որ աղբիւրդ ես

կենաց և փրկութեան: Բան քո կենդանի լի է ամենայն ե-
րանութեամբ· տուր ինձ և լցո զիս, զի կարօտեալ եմ. օգ-
նեա ինձ, զի տկարացեալ եմ: Արա զմեզ արժանի սրբու-
թեամբ ճաշակել ի հոգևոր օ-
րինացդ, զի եղիցի մեզ պա-
րիսպ յամենայն նեղութենէ
թշնամւոյն: Մի՛ տար գերել
զտկար միտս մեր պղտոր խար-
դախութեամբք իւրովք: Արբո
մեզ տէր՝ յոյս մեր, ի քաղ-
ցրութենէ զօրութեան ճչմար-
տութեան քո, զի ապրեսցուք
ի սաստկագոյն ալեաց փորձու-
թեանց աշխարհիս: Տնկեա ըզ-
մեզ, տէր, տէր, ի վերայ անսը-

խալ հաւատոց քոց ի մէջ ջուրց
գնացից պատուիրանաց քոց:
Յաջողեա մեզ, տէր, ի բարի
խորհուրդս ի տուէ և ի գիշե-
րի, զի առանց զբաղման կաց-
ցուք ի զուարթութիւն լուսոյ
քո, բարերար: Եւ բացցես մեզ
զդուռն կենդանութեան լու-
սոյ քո արժանի լինել մեզ սի-
րոյդ քումմ:

Աղաչեմք, տէր, զքաղցր և
զգթած տէրութիւնդ քո. տուր
մեզ ի սիրոյդ քումմէ, և յա-
ւել ի մեզ ի չնորհաց քոց, զի
արժանի եղիցուք լինել պաշ-
տօնեայք կամաց քոց: Բու-
րեսցեն չրթունք մեր որպէս
խունկ զաղօթս մեր յամենայն

ժամ առաջի մեծութեանդ քո։ Հաշտեա ընդ մեզ, տէր, զի բարի ես. եւ թափաւորեցո ի մեզ զյաղթութիւնս քո, եւ տուր մեզ զնահատակութիւն քաջութեան խաչիւդ քով։ Ցորդորեա զմեզ, տէր, ի սէր քաղցրութեան բանի քո, և հորդեա զճանապարհս առաջի ոտից մերոց։ կարդաս արա ըզմեզ, տէր, առ կոչումդ երկնաւոր կատարել ոտիւք։ Բաց մեզ, տէր, զդուռն հարսանեաց քոց, եւ զարդարեա ի զարդ սրբութեան հոգեւոր պատմուճանիդ եւ վայելուչ պայծառութեան կենդանի գեղոյդ պատուիրանաց քոց։

Զքեզ աղաչեմք, տէր Աստուած մեր, յոյս փրկութեան մերոյ, զքէն գոհանամք բերանովք մերովք՝ տալ փառս և խոստովանութիւն և երկրպագութիւն Աստուածութեանդ քումմ։ Առաւօտ մեծ ամենայն առաւօտուց և լուսատու ամենայն լուսաւորաց, ծագեա ի մեզ զլոյս ճշմարտութեան քո. ի բաց արա ի մէնջ զմէգն և զխաւարն ըստուերական զիչերոյ, զի մի՛ կուրացուցէ զտեսիլս խորհրդոց մերոց. կանխեա առ մեզ ըզլոյս քո գիտութեան, զի գըտնասցուք ի ճանապարհս քո ուղիղս։ Ցոյս մեր և Փրկիչ, բաց

մեզ զդուռն լուսոյ քո, և արժանի արա փառաւորել զքեզ
ի ձայն ցնծութեան:

Մտցեն աղօթք իմ առաջի քո, տէր, մի՛ դարձուցաներ ի մէնջ զերեսս քո վասն մեղաց մերոց, փրկիչ հոգւոց մերոց եւ դարձուցիչ մոլորութեանց մերոց: Ընկալ զմեզ, տէր բարերար, և խլեա զխոչ չարին առաջի ոտից մերոց, և բարձ զգայթակղութիւն նորա ի զբնացից մերոց: Թագաւոր մեր և Աստուած, թող մեզ զմեղս մեր և զյանցանս, զի դու ես քաւիչ մեր: Լից զմեզ, Փրկիչ, սրբութեամբ հոգւոյդ սրբոյ բարերարի, զի դա է հաչտե-

ցուցիչ մեր ընդ կամս քո, եւ փառաւորեսցի անուն քո սուրբ:
Տուր մեզ, տէր, սիրտ նոր և հոգի նորոգ, և լից սիրով քով սրբով: Բաց, տէր, զհոսանս քաղցր անձրեւաց քոց, և յորդեսցես ընդ ակօս ականջաց մերոց, զի զուարթասցին բոյսք սերման քո սրբոյ ի մեզ, որ արժանի արարեր զանարժանութիւնս մեր կարդալ զանուն քո սուրբ:

Ճանգեա, տէր, եւ ամրացո զամենայն խրամատութիւնս թշնամւոյն, զի մի՛ ճոռաքաղ արասցէ զպտուղ կենդանութեան մատց մերոց, և զրկիցիմք յօրհնութենէդ քումմէ:

Զի չիք ոք նման քեզ, տէր, ի սուրբս, և բարերար և պար-
գեւատու կարօտելոց և իրա-
ւարար զրկելոց: Սրծարծեա ի
նուաղեալ յանձինս մեր զլոյս
աստուածութեանդ քո, և օգն
չարութեան մի՛ չնչեսցէ ի լոյս
հաւատոց մերոց, այլ ամա-
չեցեալ դարձցի յետս: Մի՛ կա-
րօտ առներ զմեզ ի քո չնոր-
հացդ, Աստուած մեր, զի չիք
ոք որ մխիթարէ զմեզ, և ոչ
ոք է որ օգնէ, բաց զալ քո
սուրբ՝ որ բացիւդ ես փակե-
լոց և արձակիւդ ես կապե-
լոց, անդորրիչ նեղելոց, տը-
ւիչ կարօտելոց, մխիթարիչ
սգաւորաց, բժիշկ ախտացե-

լոց, գտիչ կորուսեալոց, քաւիչ
յանցուցեալոց և թողիչ մեղաց:
Դու ես չտեմարան բարու-
թեան ի յերկինս և ի յերկրի:

Աղաչեմ զքաղցրութիւնդ
քո, տէր, մի՛ արգելուր ի մէնջ
զողորմութիւն քո վասն բա-
զում յանցանաց մերոց. այլ
բաց մեզ, տէր, զի մտցուք, և
տուր մեզ՝ զի առցուք. վասն
քո սուրբ անուանդ մի՛ յա-
մօթ առներ զմեզ, եւ մի՛ բար-
կանար մեզ, տէր, և մի՛ չիշեր
զանօրէնութիւնս մեր և զչա-
րիս զոր գործեցաք: Կամեաց,
տէր, զի կեցցուք. և ողոր-
մեաց, զի ապրեսցուք: Ներեա
մեզ, տէր, զի եկեսցուք ի զի-

տուԹիւն ճշմարտուԹեան, և մի՛ պահանջեր զմեզ ըստ մեբուս չարուԹեանն. այլ տուր ձեռն օգնականուԹեան, զի մի՛ ոտնհար լիցին Թշնամիք մեր ի վրիպել զմեզ ի փրկուԹենէ քումմէ: Կանգնեա, տէր, զպլորումն մեր և մի՛ տար զմեզ ի նախատինս դրացեաց մերոց: Զի Թէպէտ և մեզաք, սակայն դու, քարեբար փրկիչ Աստուած, մի՛ անտես առներ, այլ գԹա ի մեզ և առաջնորդեա մեզ ի նաւահանգիստ խաղաղուԹեան քո, և հաստատեա ի մեզ ի վերայ չինուԹեան ի կարգս արդարուԹեան: Խափանեա, տէր, զԹշնա-

ռացուցիչս մեր, և հալածիչք մեր դարձցին յետս իւրեանց, և մեք հասցուք ի քաղցրուԹիւն օԹեւանաց պատուիրանաց քոց յամենայն ժամ գոհանալ զքէն, և փառս տալ անուանդ քումմ սրբոյ:

Տէր փրկիչ Աստուած բազումողորմ, ողորմեա տէր, և մի՛ Թողուր զիս վասն անուանդ քոյ սրբոյ: Տէր գիտուԹեան և Աստուած ամենայն իմաստուԹեան, տուր մեզ, տէր, զքո գիտուԹիւնդ և զքո կատարեալ իմաստուԹիւնդ զի զգաստասցուք ի ցնորից մոլորուԹեանց, այնմ՝ որ եհան զմեզ ի դրախտէն փափկու-

թեան, եւ մերժեաց զմեզ ի գիտութենէ սիրոյ քո կենդանոյ թեան։ Հայեսցի, տէր, ակն ողորմութեան քո ի ցաւագին վիշտս մեր առ ի բժշկել զմեզ յանհնարին տրտմութենէս, որ խառնեալ ունի բազում խռովութիւնս։

Հաշտեա, տէր, ընդ մեզ վասն մեծազօր անուանդ քո, և ողորմեա մերոյ տկարութեանս։ Խափանեա ի մէնջ, տէր, զվնասակար խորհուրդս և զգաձայնս՝ որ հեռի են ի քաղցրութենէդ քումմէ։ Տէր գթած, մի՛ թողուր զմեզ ի սպառ, զի քո եմք ստեղծուածք. և մի՛ բարկանար մեզ, զի դու գիտես զկազմուածս մեր, եւ յիշես եթէ հող եմք և մարդասէր։ Ցիշեա, տէր, զուխտն որ ընդ սիրելիսն քո, եւ բարձ ի մէնջ զխաւարն ապիշութեան թանձրամած ստուերին կորստեան, որ ընկղմէն զմիտս զգաստութեան մերոյ, եւ վարատէն ի քո խնամոցդ։ Տուր մեզ, տէր, զլոյս քո կենդանարար՝ զսուրբ եւ զխաղաղարար, ի պահպանութիւն և ի սրբութիւն մտաց մերոց։ Վասն բարեխօսութեան հրեշտակաց քոց ընկալ զաղաչանս մեր, եւ արժանաւորեա դասիլ ընդ նոսին՝ օրհնել և փառաւորել զքեզ անդադար ձայնիւ։ Ցիշեա և զիմ նուաստութիւնս, եւ նայեա ի

խնդրուածս իմ. և լուր ձայնի պաղատանաց մերոց, որպէս ուսուցեր՝ եթէ յաղօթս կացէք և մի՛ ձանձրանայք: Եւ դարձեալ՝ թէ յաղօթս կացջիք, ալի մի մտջիք ի փորձութիւն: Դարձեալ հրամայեցեր՝ եթէ չիք լինչ զոր խնդրիցէք յԱստուծոյ, եթէ ոչ տացէ ձեզ:

Արդ այժմ մեք, տէր, ոչ վասն հաճութեան գործոց մերոց կամ յարդարութիւնս մեր ապաստան լեալ աղաչեմք զքեզ, այլ վասն ողորմութեան և մարդասիրութեան քո, զի քաղցր ես և բարերար և մեք իբրեւ զպարտականս եւ զմեծամեղս կամք առաջի քո: Դու

իբրեւ զհայր զթած, իբրեւ զտէր քաղցր՝ լուր աղօթից մերոց, զի զարթիցեն զգայութիւնք մեր խնդրել համարձակ: Բաց զականջս մեր լսել զձայն պատգամաց քոց, եւ բացցին աչք սրտից մերոց հայել առ քեզ ի բարձունս: Լուր աղօթից մերոց և ընկալ զխընդրուածս մեր և արա զկամս մեր. լուր ձայնի աղօթից իմոց. խնայեա ի ժողովուրդս քո ի ժամանակի նեղութեան, եւ փութա առնել զգթութիւն քո: Մի՛ բարկութեամբ քով խրատեր զմեզ, և մի՛ սրտմտութեամբ քով ակն յանդիման առներ զմեզ. զի ժողովուրդ

քոյ եմք, և ձեռակերտք ձե-
ռաց քոց, և ստեղծուածք
մատանց քոց: Ի քո պատկեր
հաստատեցեր զմեզ, եւ հոգի
առ ի քէն փչեցեր ի մեզ. մի՛
յաւիտեան բարկանար մեզ, և
մի՛ ի բացէ առնիր ի ծառայից
քոց: Մինչ մոլորեալք էաք՝
դարձուցեր զմեզ, չարչար-
եալք՝ և փրկեցեր, ցրուեալք՝
և ժողովեցեր, խաւարեալք՝ և
լուսաւորեցեր, արգելեալք՝ և
հաներ յանդորր, կապեալք՝ և
արձակեցեր ի կապանաց. ան-
յոյսք էաք, և կոչեցեր զմեզ
ի յոյս քո. մեղաւոր էաք, եւ
կամեցար զի արդարասցուք:
ոչ խնդրեցաք՝ և եկիր առ մեզ,

և արեամբ քով փրկեցեր զմեզ,
և ի ձեռն քո ծանեաք մեք ըզ-
մեզ. ոչ ձանձրացուցաք մեք
զքեզ խնդրուածովք, և իջեր
ի դժոխսն. մեք հանապազ բար-
կացուցանեմք զքեզ, և դու ե-
կիր վասն մեր յանարգանս. ան-
չափ էին անօրէնութիւնք մեր
առաջի քո, և փրկեցեր զմեզ
չարչարանօք քոյովք: Եւ այ-
ժըմ աղաչեմք զքեզ, տէր եւ
Աստուած մեր, երկիր պագա-
նեմք և գոհանամք զքէն, եւ
փառաւորեմք զողորմութիւն
քո: Ի ձեռն սիրելի որդւոյ քո
լուր աղօթից մերոց, եւ ըն-
կալ զխնդրուածս մեր. տես
զնախատինս մեր, նայեա ի

տառապանս մեր, եւ զթասցի սիրտ քո ի ժողովուրդ քո՝ որ մատնեցաւ յաւար եւ ի յափշտակութիւն։

Հայեա և ի սուրբ տաճարս քո՝ որ աւերեցաւ, և ի սեղանս քո՝ որ կործանեցաւ, և ի քահանայս քո՝ որ կոտորեցան, և յուխտս քո՝ որ ցրուեցան, և ի կտակարանս քո՝ որ կնքեցան ի ցրումն եւ ի յաւարումն։ Ցաճախեաց ամօթ մեր, ցրուեցաւ ժողովուրդ քո, հեղաւ իբրեւ զջուր ուխտ քո սուրբ։ Խնայեա ի մեզ, տէր, զի մատնեցաք ի նախատինս և ի չարչարանս և յամօթ։ Ա՛ւ ո՛վ աղաղակեսցուք,

զի լուիցէ աղօթից մերոց. առ ո՛վ երթիցուք, զի ահա ծառայ քո եմք։ Խրատեցեր ըզմեզ բարկութեամբ, արա՛ առ մեզ զողորմութիւն քո։ Կեզեցան կեանք մեր. մի՛ յապաղեր՝ զի մի՛ վհատիցիմք։ Մի՛ երկայնամիտ լինիր ի նեղութիւնս մեր եւ ի տառապանս. որպէս աղաչեաց զքեզ մարգարէն քո՝ որ նեղեալն էր իբրև զմեզ եւ ասէր. Մի՛ խրատեր զմեզ երկայնամտութեամբ։ Լո՛ւր աղօթից մերոց, որպէս լուար Մովսիսի սիրելւոյ քո. և մի՛ առցեն վրէժս թշնամիք մեր իբրեւ զփարաւոն, որ նեղեաց զժողովուրդ

քո: Ընկա՛լ զխնդրուածս մեր, որպէս ընկալար զխնդրուածս Յեսուայ որդւոյ Նաւեայ, եւ սատակեցաւ Ամաղէկ եւ բարձաւ յիշատակ նորա:

Դու ես Աստուած առաջնոցն, և տէր և թագաւոր վերջնոցս: Լուար Մովսիսի, և ընկըզմեցեր զՓարաւոն. լուար Ահարոնի, եւ արգելաւ մահ բարկութեան: Դարձուցեր զցասումն բարկութեան քոյ ի ձեռն նախանձախնդրին քո Փենհեսի. օգնեցեր Յեսուայ, և յամօթ եղեն թշնամիք նորա: Լուար Սամփսոնի ի ժամանակի նեղութեան, եւ խնդրեցեր զվրէժս յայլազգեացն՝ որք

բարկացուցին զքեզ: Առեր և զվրէժն Դաւթի ի Սաւուղայ որ հալածէր զնա, եւ հաներ նմա իրաւունս յԱբիսողոմայ՝ որ խռովեցոյցն զնա: Քաւեաց զժողովուրդն քո Սամուէլ առաջի քո, և ցուցեր զմեծութիւն քո, փոխանակ զի առնարգեցին զթագաւորութիւն քո: Արարեր իրաւունս եղիայի հալածականի, և սատակեցեր յաղագս նորա զմարգարէսն Բահաղու: Պահեցաւ Միքիէ բազում ողորմութեամբ քով, եւ անկաւ կործանեցաւ սատակեցաւ հալածիչն իւր ի պատերազմի: Ցուցեր զքանչելիս քո ի հալածիչսն եղի-

սէլ ի ժամանակի իբրեւ մտին
ի չիրմին՝ տեսին զմեծութիւն
քո: Լուար եղեկիայի ի ժա-
մանակի իբրեւ արգելեալ պա-
շարեալ կայր ի նեղութեան, և
ցուցեր զզօրութիւն քո ի Սե-
նեքարիմ և ի զօրս նորա: Լը-
ւար եսայեայ և օգնեցեր Յով-
սափատու, և խնդրեցեր զվը-
րէժս նեղչաց նոցա: Լուար
Յովնանու ի խորոց անդնդոց
ծովուն ի փորոյ ձկանն և ալ-
եացն որ պաշարեցին զնա: Լը-
ւար Դանիելի ի ժամանակի
իբրեւ ընկեցին զնա ի գուբն, և
ապրեցուցեր զնա ի բերանոյ
առիւծուցն: Օգնեցեր Սնա-
նիայի և ընկերաց նորա ի հնո-

ցի հրոյն, եւ եկեր բոցն բոր-
բոքեալ զչարախօսս նոցա: Լը-
ւար Մուրթքէի և Եսթերայ ի
նեղութեան լուրեանց, և փըր-
կեցեր զժողովուրդ քո, եւ
յամօթ եղև Համան հալածիչն:
Հաներ զԵրեմիա ի գբոյ տըղ-
մոյն, և ետուր զնա ի չնորհս
եւ յողորմութիւն առաջի ար-
քային Բաբելացւոց:

Ինայեա՛, տէր, ի ժողովուր-
դըս քո՝ որ չարչարեցաւ. խը-
նայեա՛, տէր, և լո՛ւր աղօթից
իմոց, զի տաճար սրբութեան
աւարեցաւ, և տեղին քաւու-
թեան պատարագաց կործանե-
ցաւ: Ցահանայք մեր կոտո-
րեցան, ձորձ ի գլուխ եղեն

կուսանք մեր. խնայեա՛ ի մեզ, տէր մեր, խնայեա՛ յաղքատս և ի տնանկս և ի տառապեալս, զի չիք տեղի հանգստեան, ուր դիցեն զգլուխս իւրեանց: Ճանապարհք մեր թափուր են, եւ չաւիղք մեր անհետք. աչք մեր խաւարեցան, և սիրտք մեր մաչեցան: Լո՛ւր աղօթից մերոց և ընկա՛լ զխնդրուածս մեր: Եւ եթէ մեք անօրինեցաք և դառնացուցաք զքեզ, դո՛ւ, տէ՛ր, ըստ մեծի անուանդ քո խնայեա՛ ի մեզ: Զի՛ք մեր այլ յոյս և ոչ տուն տապաւինի և հանգստեան տեղի քան զքեզ արտաքոյ, զի քո են երկինք և քո է երկիր,

քո է տիւ և քո է գիշեր, զաթեգաին և զլուսինն դու հաստատեցեր: Զքեզ փառաւորեն ծովք ալեօք իւրեանց, և եդիր նոցա սահման և ոչ ելանեն ընդ հրամանս քո: Կապեալ կայ ծով աւազով եւ կատարէ զհրամանս քո: Քեզ հայեցեալ սպասեն ամենայն բնութիւնք; եւ ձեռն քո բաւական է ամենայն արարածոց քոց. և չիք ինչ՝ որ կարէ հակառակ կալ կամաց քոց: Քո են լուսաւորք երկնից; եւ հոգմք եւ մրրիկ զանուն քո փառաւորեն: Քեզ հայեցեալ սպասեն զազանք անապատի; թռչունք երկնից եւ ձկունք

ծովուն: Աըի օգնել մեզ մե-
ծազօր զօրութեամբ քով, զի
ծանիցեն ամենայն ազգք եր-
կրի, զի չիք իբրև զքեզ, եւ
չիք այլ աստուած բաց ի քէն:
Ասաց Փարաւոն՝ ո՞ է Աստուած.
և ընկղմեցեր զնա իբրեւ զը-
պատերազմող ի ծովն ահա-
գին: Համարեցաւ զքեզ Սե-
նեքարիմ իբրև զդիւն հեթա-
նոսաց, և արարեր զնա առակ
նշաւակի, զի ցուցեր նմա զը-
մեծութիւն քո: Օգնեցեր Մա-
տաթիայի որ եղև քհնանա-
խանձու օրինաց քոց: Լուար
Յուդայի եւ Շմաւոնի և եղ-
բարց նորա, եւ օգնեցեր նոցա
սքանչելեօք ի մարտս պատե-

բազմաց, զոր արարեր ի ձեռն
նոցա:

Զարթիցեն զթութիւնք քո,
տէր, թո՛ղ զմնացուածս ժողո-
վըրդեան քո՝ որ մատնեցաւ
յաւար. արա՛ նորոգութիւն տա-
ճարի քո յաւուրս մեր. բար-
ձրացո՛ զգլուխս մեր՝ որ կո-
րացան յաւուրս մեր ի մեղս
մեր. ընկա՛լ զպատարագս ժո-
ղովրդեան քո, և քաղցրաս-
ցին քեզ աղօթք մեր: Բացցին
դրունք փակեալք, եւ կան-
գնեսցին դրունք կործանեալք:
Ժողովեսցին ժողովուրդք ցը-
րուեալք, եւ ուրախ եղիցուք
ի նորոգութիւն տաճարի քո
յաւուրս մեր: Գոչեսցէ առա-

ջի քո արիւն արդարոցն, եւ եղիցի քեզ ի հաճութիւն իբրեւ զբուրվառս խնկոց: Ընդ նայեա՛, տէր, ի ժողովուրդս քո եւ ի սուրբ ուխտ քո՝ որ աննկաւ ի ձեռս անօրինաց, և ոտն հարիւն ի վերայ քեկմանս մերոյ: Սովոր իսկ ես, թագաւոր մեր, ցուցանել զգթութիւն քո ի մեզ. և սովոր իսկ են ծառայք խնդրել հանապազ յողորմութեանց քոց: Ի քաղցրութիւն մարդասիրութեանդ ապաւինեալ աղաչեմք զքեզ, զի և ի չարաց ոչ արգելուս զբարեբարութիւն քո: Ծագես զաբեգակն ի վերայ չարաց եւ բարեաց, եւ ածես անձրեւ ի

վերայ արդարոց եւ մեղաւորաց: Քանզի հանապազ զիտեմք, եթէ սովոր իսկ ես լսել նեղելոց. օգնեցեր հալածականաց, զօրացուցեր ըզտկարս, բարձրացուցեր զխոնարհս, ապրեցուցեր զչարչարեալս, վրկեցեր զյափշտակեալս. լուսաւորեցեր զխաւարեալս, լցուցեր զքաղցեալս, մեծացուցեր զաղքատս, կանգնեցեր զտնանկս: Զայս ամենայն արարեր յամենայն դարս ծառայից քոց՝ որք յուսացան ի քեզ: Դու ես որ ցուցեր մեզ թէ ես եմ առաջին և ես եմ յապայ: Դու ես Աստուած առաջնոցն եւ թագաւոր վերջնոցս.

քո է աշխարհ, եւ քո է աշխարհն երկինք և ամենայն որ ինչ եղևն և որ լինելոցն է առյապայ: Առ ո՞վ երթիցուք, զի լուիցէ մեզ. ո՞ւմ հայեցցուք, զի եկեսցէ օգնականութիւն. ո՞ւմ ակն կալցուք, զի փրկեսցէ զմեզ. առ ո՞վ աղաղակեսցուք, զի ընկալցի զաղօթս մեր: Քո եմք, և դու ես Աստուած մեր, և քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղօթք ընդհանուր.

Աղաչեմ զքեզ, Քրիստոս փրկիչ աշխարհի, նայեա՛ յիս և ողորմեա՛ ինձ. փրկեա զիս ի բազմութենէ անօրէնութեանց իմոց, քանզի անարգեցի զամենայն զբարիս զոր արարեր յիս ի մանկութենէ իմմէ: Զիս զխմամբ և զանմիտ՝ արարեր անօթ լի գիտութեամբ եւ իմաստութեամբ: Ցաճախեա՛ յիս զշնորհս քո. լո՛ զքաղց իմ, եւ զծարաւ իմ զովացո՛, եւ լուսաւորեա՛ զխաւարեալ միտս իմ, եւ ժողովեա՛ ի մոլորութենէ զխորհուրդս իմ:

եւ այժմ երկիր պաղչանեմ և աղաչեմ, անկանիմ եւ հայցեմ խոստովանելով քումբարերարութեանդ. դադարեցո՛ յիս զհոսանս չնորհի քոյ եւ պահեա՛ ինձ զնա ի գանձի քումմ, զի դարձեալ տացես յիս զնա յաւուր յայնմիկ: Մի՛ բարկանար ինձ մարդասէր, զի ոչ հանդուրժեմ սպառնալեաց քոց: Ծաղագս այսորիկ աղաչեմ ժտելով, առաւել քան զչափ յաճախեա՛ յիս. վասն զի լեզու իմ տկարացաւ, ոչ կարելով խօսել զչնորհէդ քումմէ: Հիացան և միտք իմ, ոչ բերելով զբազմութիւն ալեաց նորա: Կերպարան եւ ճառա-

գայթ օրհնելոյ Հօր. դադարեցո՛ աստ ի յիս ի հոսանաց նորա, զի իբրև զհուր բոցակիզեսցէ զերիկամունս և զսիրտ իմ. արդ դարձեալ պարգեւեա՛ ինձ զնա, եւ կեցո՛ զիս յարքայութեան քումմ: Մի՛ յիշեր զանօրէնութիւնս իմ. յանդգնիմ հայցեմ, տո՛ւր ինձ զխընդրուածս իմ. ծածկեա՛ զանօրէնութիւնս իմ յամենայն դիտութենէդ քումմէ. ընկա՛լ զարտասուս. մերձեսցի՛ առ քեզ ողբումն իմ. յիշեա զարտասուս իմ զոր արտասուեցի առաջի սրբոց վկայից քոց, զի գթասցիս յիս յաւուր յայնմիկ, և ծածկեսցես ընդ հովանեաւ

թևոց չնորհի քոյ։ Քանզի թէ արասցես ինձ ըստ անօրէնութեան իմոյ, եղուկ ես թըշուառականս, զի՞նչ ինձ լինիցի։ Իսկ ես լալով եւ արտասուօք պաղատիմ քումմարդասիրութեանդ, փրկեա՛ զիս ի բազմութենէ անօրէնութեանց իմոց, և պարգեւեա՛ ինձ զարքայութիւնդ քո. յիս ի մեղաւորս ցո՛յց զանճառ քո մարդասիրութիւնդ. արա՛ զիս հաղորդ աւազակին, այնմ՝ որ միով բանիւ ժառանգորդ եղև դրախտին. զոր կատարելոց է խոստացեալն, անդր զիս մուծցես։ Փառք Հօր արարչին մեր

րում եւ Հոգւոյն Սրբոյ նորոգողին մերում, յանսպառ եւ յանեղծանելի յաւիտեան։

Աղօթք ընդհանրական.

Տէր Աստուած զօրութեանց՝ աղաչեմ զքո բարերարութիւնդ, ժտեմ եւ հայցեմ ի քէն, տո՛ւր ինձ տապան ապրեցուցիչ որպէս Նոյին, ապրել ինձ ի հրեղէն ծովէն եւ յանդնդային հրահոսանացն, յանչէջ արգելանէն և յանհնարլին վտանգից։ Զի դու ես տէր

Աստուած, որ զԲանդ աստուա-
ծային ծածկեցեր և ի ծառա-
յական կերպս իջեր վասն մեր,
եւ զլեղի ի քիմս առեր, եւ
ապտակ ի ծնօտս ընկալար: Եւ
այժմ աղաչեմ զքեզ, ազա-
տեա՛ զիս ի դառն ծառայու-
թենէ սատանայի. զի յորժամ
զձեռս ի վեր ունելով աղօ-
թեմ, անօրէնն սատանայ խաբէ
եւ ունայն հանէ զիս յաղօթից
իմոց: Լեր ինձ, Աստուած՝
բերդ ամուր և աշտարակ հզօր,
եւ կորվեա՛ զիս ի բերանոյ
առիւծուն, որ հանապազ կա-
մի կլանել զիս. զի ընդ պի-
տանիսն ի բարձունս փառաւո-
րեցից զՀայր եւ զՈրդի եւ

զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Աղօթք զօրաւոր՝ արբոյն
Դրիգորի Նարեկացւոյ.

ԲԱՆ ԶԹ.

Աստուած և տէր, կեանք
և արարիչ, ողորմած, գթած,
լոյս, երկայնամիտ, անոխա-
կալ, մարդասէր, ամենագութ,
պարգևատու, փրկիչ, օրհնեալ,
գովեալ, բարեբանեալ: Դա-
րան ամբուխեան, պատսպա-
րան վստահութեան, առանց

նենգութեան բարւոյ, առանց խաւարի ճառագայթ, քաւիչ մեղաց, ողջացուցիչ վիրաց, անհասանելեաց հնարք, անմատչելեաց հպատոր, անյուսութեան ելք, անուն քո խոստովանեալ՝ Աստուածոյ Որդի, եւ Հօր քո ընդ քեզ հզօրի եւ ահաւորի, և Հոգւոյդ ամենակալի՝ և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն զոհաբանութեան յաւիտեանս. ամէն:





Ցարիցի Աստուած, եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա։

Ա. Ղ Օ Թ Ք

Ի ՎԵՐԱՑ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ
ԱԻՈՒՐՑ ՇԱԲԱԹՈՒ
ԵԻ ՆԱԽ

ԿԻՒՐԱԿԷ ԱԻՈՒՐ

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմանես զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատես զիս։

Ողորմեա՛ ինձ տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։
Անձն իմ յոյժ խռովեցաւ, եւ դու տէր մինչեւ յե՞րբ։
Դա՛րձ, տէր, և փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս, տէր, ըստ ո-ղորմութեան քումմ։
Զի ոչ ոք է որ ի մահու յիշէ զքեզ, կամ ի դժոխս խոստո-վան առնիցէ առ քեզ։
Վաստակեցայ ես ի հեծութեան իմում. լուացի զամենայն գի-շեր զմահիճս իմ եւ արտա-սուօք իմովք զանկողինս իմ թացի։
Խռովեցաւ ի սրտմտութենէ ա-կընն իմ. և մաշեցայ ես իվե-

րայ ամենայն թշնամեաց իմոց։
Ի բաց կացէ՛ք յինէն ամենե-քեան, որք գործէք զանօրէ-նութիւն։
Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ տէր աղօթից իմոց. և տէր զխնդրուածս իմ ընկալաւ։
Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ. դարձ-ցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

ՇԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

աչ. Հայր բազումողորմ խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին. թող ինձ զմեղս իմ և ողորմեա՛։

Տէր, որ գթացար ի կինն քա-
նանացի, գթա՛ և յիս ի մեղա-
ւորս և ողորմեա՛։
Տէր, որ դարձուցեր զմաք-
սաւորն ի գիտութիւն ճշմար-
տութեան, դարձո՛ և զիս ըզ-
մոլորեալս և ողորմեա՛։

Աստուած բազումողորմ, խըն-
նայեա յարարածս քո, հայր
ամենակալ և ողորմեա։
Արեգակն արդարութեան, ծա-
գեա՛ ի հոգիս մեր զլոյս ճըշ-
մարտութեան և ողորմեա։
Տո՛ւր մեզ, տէր, զխաղաղու-
թիւն, եւ փրկեա՛ ի նեղչաց
մերոց՝ հոգիդ ճշմարտութեան
եւ ողորմեա։

Ի նեղութեան խմում օգնեա
լինձ, տէր, որպէս երբեմն Յով-
նանու եւ ողորմեա։
Ի յանցանաց խմոց մաքրեա՛
զիս, տէր, որպէս երբեմն
զմաքսաւորն և ողորմեա։
Ի նենգաւոր չրթանց փրկեա՛
զիս, տէր, և յարենէ ապրեցո՝
և ողորմեա։

Զղջման խմոյ զարտասուս
արկանեմ առաջի քո, Քրիս-
տոս, թո՛ղ լինձ զմեղս իմ որ-
պէս երբեմն զպոռնկին, որ
միայնդ ես բազմագութ։
Անկանիմ առաջի քո, Քրիստոս,
որ հովիւդ ես բանաւոր հօտի,
խնդրեա եւ զիս զմոլորեալս,

որ միայնդ ես բազմագութ։
Զմեզս իմ ցուցից քեզ, Քրիս-
տոս, որ բժիշկդ ես հոգւոց և
տէր կենաց, բժշկեա՛ եւ զիմ
զհիւանդութիւնս, որ միայնդ
ես բազմագութ։

Վտանգիմ ի բազմութենէ
մեղաց իմոց. Աստուած խա-
ղաղութեան օգնեա՛ ինձ։
Ալէկոծիմ հոգմով անօրէնու-
թեան իմոյ. թագաւոր խաղա-
ղութեան օգնեա՛ ինձ։
Ի խորս մեղաց ծովու տարա-
բերեալ ծփիմ. նաւապետ բա-
րի փրկեա՛ զիս։

Ողորմեա՛ ինձ Աստուած։
Ի լսել զձայն փողոյն յահա-

գին աւուրն՝ յորժամ հարկա-
նէ հրեշտակապետն եւ կոչէ ի
դատաստան, ողորմեա՛ ինձ
Աստուած։
Ի նստիլ քո յատենի դատաւոր
ահեղ՝ յորժամ առնես հրա-
փորձութեամբ զքննութիւն
որդւոց մարդկան, ողորմեա՛
ինձ Աստուած։

Որ առ ի քէն երկրորդ Ա-
դամ վասն առաջնոյն յանցա-
նաց բնութեամբ մերով պահե-
լով՝ զմահաբեր պտղոյն լու-
ծալ զպատրանս, առ նա միշտ
բարեխօսեա կեցուցանել զմեզ։

Փառք հնչ և պղտոյ և հոգւոյն պրքոյ։

Սրդ աղաչեա՛ մայր աստուածոյ
զծնեալն ի քէն վասն մեր, զի
ընդ նմին պահելով՝ սուրբ յա-
րութեամբ նորանորոգեսցուք.
առ նա միշտ բարեխօսեա կե-
ցուցանել զմեզ։

Այժմ և ղկղ և յաւիտեան յաւի-
տենից, ամէն։

Ի միւսանգամ գալստեան Աս-
տուածածորդւոյն սուրբ Հայէն
երևի և լուսաւորէ, զի նա է
յոյս հաւատացելոց։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

ԲԱՆ Դ.

Ա. Քրիստոս Աստուածՙ ա-

նուն ահաւոր, մեծութեան
տեսակ, անքնին բարձրու-
թեան պատկեր, անսահման
զօրութիւն, կերպարան փըր-
կութեան լուսոյ, պաշտպան
կենաց, դուռն արքայութեան
վերնում հանգստեանն, ճանա-
պարհ հանդարտութեան, ա-
պաւինութիւն նորոգ եւ ան-
տխրական երանութեան. ա-
մենակալ լինքնիչխանութիւն
բոլոր էականութեան, օրհնու-
թեան կոչումն, աւետեաց ձայն,
բերկրութեան բարբառ, ան-
մահութեան դեղ, որպէս ան-
ճառ Աստուածոյ միոյ։ Որ լինՃ
անհնարին է, քեզ դիւրին է.
որ լինՃ անհասն է, քեզ սահ-

մանեալ է. որ լինձ անանցն է, քեզ հպատոր է, որ եղկելոյս լինձ ծածկեցեալն է, քումդ երանութեան մերձաւոր է, որ լինձ անկարելին է, քեզ կատարեալ է. որ լինձ անկշռելին է, քումդ անճառութեան չափեալ է. որ լինձ յուսահատութեանն է, քեզ սփոփանաց է. որ լինձ անբժշկականն է, քեզ անվտանգելի է. որ լինձ հեծութեանն է, քեզ խնդութեան է. որ լինձ ծանուցք են, քեզ թեթևագոյնք են. որ լինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան դրեցեալ է. որ լինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ լինձ անճառն է, քեզ

համարեալ է. որ լինձ մոռայլն է, քեզ ճառագայթ է. որ լինձ անթիւն է, օրհնեալդ քումդ ձեռին բովանդակեալ է. որ լինձ սոսկալին է, քեզ հեշտալի է. որ լինձ փախչելին է, քեզ վանելի է. որ լինձ անմատոյցն է, քեզ դիւրահերքելի է. որ լինձ մահաբերն է, քումդ էականութեան զօրութեան՝ ընդ ոչ գոյան համարեալ է։

Բ. Այլ դու, ողորմած Աստուած բոլորից՝ տէր Յիսուս Քրիստոս, և այսմ զօրես առելիցն հնար՝ եթէ զթասցիս. վասն անուան փառաց մեծութեան Հօր քոյ օրհնելոյ, վասն

կամաց զթութեան Հոգւոյդ քոյ սրբոյ. տե՛ս ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնութիւն, եւ ի խորոց սրտի ինքնամատոյց դատախազութիւն. նայեա՛ ի բնութեանս ամենապատաղ խակութիւն, եւ պարգեւեա՛ բժշկութիւն վիրացըս, եւ հնարաւորութիւն կոըըստեանս, զերծումն բազմամասնեայ մահուս եւ չաւիղ կենաց ապականելոյս. նորոգութիւն եղծմանս, և մուտք յուսոյ ամբարչտելոյս: Եթէ ես զանմանն ինձ կամս ցուցի, ո՛չ ափ առաւել դու զբնաւրականսդ քո զընտանի բարերարութենսդ. եթէ ի փչոց

պտուղ ընծայեցաւ քաղցրութեան, ո՛չ ափ առաւել ի ծառոյդ կենաց՝ ճաշակ անմահութեան. եթէ ես իմոց ատելեաց ողորմութիւն մաղթեցի, դու քոյոյս զի՞նդ ոչ կրկին մատուսցես, հզօր, յաննուազդ առատութենէ:

Գ. Արդ, տես ի քոյդ մեծութիւն, բարձրեալ, նայեցեալ ի յիմս փոքրկութիւն. ընկալ զսակաւ խոստովանութիւնն անհամար մեղացս, որ զբնաւն համայն տեսանես. եւ որպէս զվիմին գթել՝ ոչ գրեցեր, եւ զաւազոյս փոքուս սասանել՝ մի՛ համարեսցիս. եւ իբրեւ զԴաւթին ընդ մեղայն ասել՝

իսկոյն անցուցեր զպատիժ պարտուցն, և առ իմ ձայնիս հեծութիւն՝ զնոյն գործեսցես երկայնմտութիւն. որ տաս ամենեցուն առատապէս անաչառութեամբ՝ որպէս յաղթող բարի բազմիմաստ. և ոչ նախատես զյետնեալ ստրուկս՝ որպէս ողորմած եւ ամենաստեղծ. ստացիր վերստին, և մի՛ կորուսաներ զբուժեալս արեամբ քով եւ զբուծեալս ստեամբ քով՝ զթած: Զի քո է փրկութիւն, եւ ի քէն է քաւութիւն, եւ քեզ վայել է փառք յամենայնի յաւիտեան. ամէն:

Աղօթք առ Հայրն երկնաւոր, Յովհաննու Դառնեցւոյ ասացեալ:

Յաւիտենից Աստուած եւ արարիչ բոլորից, որ ամենակարող զօրութեամբ քով ի սկզբանէ արարեր զերկինս եւ զերկիր. յայսմ աւուր գոյացուցեր զլոյս հրամանաւ քով, և որոշեցեր զլոյսն ի խաւարէն:

Ահա խաւարեալս ազգի ազգի անօրէնութեամբ, աղաչեմ զքեզ, տէր իմ Աստուած իմ՝ բարերար եւ բազումողորմ, ծագեա՛ առ իս զողորմութեան զլոյս քո, եւ մերժեա՛ յինէն զխաւարային խորհուրդս չարի, որով անկեալ կործանեցայ

յանդունդս կորսեան, և կամ
ի տարակուսի:

Որ ամենայնի կարող ես եւ
հզօր, լոյս անստուեր, աղբիւր
անսպառ բարեաց, կենդանու-
թեան պարգեւատու, ցոլացո՛
յիս զփայլուձն սրբարար շնոր-
հաց Հոգւոյդ քո Սրբոյ. և մա-
քրեա՛ զսիրտ իմ եւ զհոգի ի
մթութենէ մեղաց իմոց և յա-
մենայն աղտեղութենէ, որով
չլացեալ ոչ կարեմ հայել ի
լոյս աստուածային պատուի-
րանաց քոց եւ գնալ ի ճանա-
պարհս արդարութեան:

Ամենահայեաց ակն եւ ան-
նկրհելի պահապան նորոյս խա-
րայելի, որ նստիս ի քրովբէս

և հայիս յանդունդս, նայեա՛ց
աչօք քաղցրութեան յապիկար
ծառայս քո, որ խորասուզեալ
յանդունդս մեղաց չունիմ կար
և զօրութիւն ելանել ինքնին,
և չիք իմ ձեռնտու և օգնական
ազատել զիս յանհնարին տա-
րակուսանացս. այլ դու, անար-
գամեծար աէր, լե՛ր ինձ այ-
ցելու և պաշտպան, և զերծո՛
զիս ի խորոց աստի չարեացս
ամբաւից աննահանջելի հրա-
մանաւ քով. զի չիք ինչ որ
արգելուլ կարիցէ զամենակա-
րող զօրութիւն քո:


Աղաչեմ զքեզ, ողորմած,
առաքեա՛ առ իս զհոգի աս-
տուածութեան քոյ, որ չրջե-

լով ի վերայ ջուրց կենագոր-
ծէր զարարածս քո, զի ծնընդ-
դաբեր արասցէ զամլութիւն
մտաց իմոց ի հաճոյական բա-
նից մաղթանս յընդունելու-
թիւն կամաց բարձրելոյդ, զի
ես ինձէն առանց նպաստից
նորին՝ զոր ինչ արժան է հայ-
ցել՝ ոչ գիտեմ։

Զի նա որ քննէ զամենայն
և զխորս Աստուծոյ, գիտէ նա
և զպէտս մեր և զկարիս առա-
ւել քան զոր խնդրեմք և իմա-
նամք. և գթացեալ ի տկարու-
թիւնս մեր ուսուցանէ մեզ
զնոսին հայցել հաւատով, եւ
գտանել առ ի քէն հանդերձ
թաղութեամբ մեղաց մերոց։

Մի՛ ընկենուր զիս յերեսաց
քոց, բարեբանեա՛լ, որ ոչ կա-
ցի յոխտին իմում՝ զոր ուխ-
տեցի քեզ յաւուրն փրկու-
թեան, եւ ոչ զգուշացայ կալ
ի ճանապարհս օրինաց քոց.
այլ իչխանին մոլորութեան
անսացեալ խրատուս՝ զառածե-
ցայ յերկնագնաց պողոտա-
յէդ ի փշայեղց մացառս մե-
ղաց և մահու. այլ դու, խնա-
մակալ, որ ոչ ձանձրանաս ի
բարեբարելոյ, եւ ոչ յագիս
յողորմածութենէ, հոգւով պե-
տութեան քոյ հաստատեա՛ զիս
ի պատուիրանս քո անդրդուե-
լի՝ ուղղել վերստին զգնացս
ոտից իմոց առ տուիչդ կենաց։

Սրդ, դու կարող և մարդա-
սէր, որ յառաջ քան զլինելու-
թիւն երկնի եւ երկրի պատ-
րաստեցեր զարքայութիւնդ ի
ժառանգութիւն սրբոց քոց,
սրբեա՛ և զիս յամենայն անօ-
րէնութենէ իմմէ, եւ արժա-
նաւորեա՛ ընդ նոսին յարքա-
յութեան քումմ յերկինս, զո-
հութեամբ փառաւորել զամե-
նազօր տէրութիւնդ յաւիտեա-
նս յաւիտենից. ամէն։



Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԱՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՇԱՒՈՒԹԵԱՆ

Երանի ումմ թողութիւն եղև մեղաց, և ծածկեցան ամենայն յանցանք նորա։ Երանի առն, որում ոչ համարի տէր զմեղս նորա և ոչ գոյ նենգութիւն ի բերան նորա։ Լռեցի ես եւ մաշեցան ամենայն ոսկերք իմ, առ աղաղակել ինձ առ տէր զօրահանապազ ի տուէ և ի գիշերի։ Ծանրացաւ ձեռն քո ի վերայ

իմ, դարձայ ի թշուառութիւն՝
զի հարան յիս փուչք։
Զմեղս իմ ցուցից քեզ, եւ
զանօրէնութիւնս իմ ոչ ծած-
կեցից ի քէն։
Ասացի թէ պատմեցից ինձէն
զմեղս իմ, եւ դու թողցես
զամենայն ամբարշտութիւնս
մեղաց իմոց։
վասն այսորիկ յաղօթս կաց-
ցեն առ քեզ ամենայն սուրբք,
ի ժամ ընդունելի։
Բայց միայն ի ջուրց հեղեղաց
բազմաց, որ առ նոսա ինչ
ոչ մերձեսցի։
Դու ես ապաւէն իմ ի նեղու-
թենէ յայսմանէ, որ չուրջ ե-
ղեն զինև։

Ցնծութիւն իմ, փրկեա՛ զիս
յայնցանէ՝ ոյք պաշարեցին
զիս։
Իմաստուն արարից զքեզ եւ
խելամուտ ի ճանապարհ՝ յոր
և գնասցես, եւ հաստատեցից
ի վերայ քո զաչս իմ։
Մի՛ լինիք որպէս զձիս և զը-
ջորիս՝ զի ոչ գոյ ի նոսա ի-
մաստութիւն. ի սանձս եւ ի
դանդանաւանդս ճմլեսցես զը-
կզակս նոցա՝ որք առ քեզ ինչ
ոչ մերձեսցին։
Բազում տանջանք են մեղաւո-
րաց, բայց ոյք յուսան ի տէր՝
ողորմութիւն տեառն չուրջ
եղիցի զնոքօք։
Ուրախ եղերո՛ւք և ցնծացէ՛ք

արդարք ի տէր, պածեցարուք ամենեքեան՝ ոյք ուղիղ էք սրտիւք։

ՇԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ա՛ւ. Ծով կենցաղոյս հանապազ զիս ալէկոծէ։
Մրրկեալ ալիք թշնամին լինձ յարուցանէ։
Նաւապետ բարի, լե՛ր անձին իմոյ ապաւէն։
Մերձ եմ յընկղմիլ՝ օգնեա լինձ Նաւապետ բարի. քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինք մեղաց։

Աստուած յօգնել լինձ փութա՛, քանզի խորք չարեաց ընկղմեն զիս յանդունդս. այլ դու, Նաւապետ լե՛ր և լինձ ձեռընտու։

Փրկեա՛ ի վտանգէ զնաւաբեկըս ի յալեաց ծովէ. քանզի կորնչիմ ի մեղաց անօրէնութեան իմոյ։

Աղաչեմ զքեզ, տէր, պարգեւեա՛ լինձ ապաշխարութեամբ լուանալ զմեղս իմ, եւ ողորմեա՛։

Զարտասուս իմ և զհառաչանըս սրտի իմոյ մարդասիրութեամբ քո ընկա՛լ, տէր, եւ ողորմեա՛։

Մերձեսցին խնդրուածք իմ առ-
աջի քո տէր. բարերարու-
թեամբդ քո խնայեա՛ ինձ, և
ողորմեա՛

Աղաչեմ զքեզ, հայր երկնա-
ւոր, մի՛ դարձուցաներ զերեսս
քո յինէն զի նեղեալ եմ ես,
վաղվաղակի լուր ինձ տէր:
Մոլորեալ անձն իմ անօրէնու-
թեամբ, մի՛ կորուսաներ զինս,
տէր, ըստ անօրէնութեան ի-
մոյ, որ խնդրողդ ես մոլորեալ
ոչխարիս:
Ծանրացեալ մեղօք ընկղմի
անձն իմ. ընկա՛լ զինս որպէս
երբեմն զՊետրոս, որ ծփիմս
ալէկոծեալ յանցանօք

Մեղայ, տէր, բազումողորմ
Աստուած, մեղայ, ողորմեա:
Մեղայ, տէր, և անկանիմ ա-
ռաջի քո. մեղայ, ողորմեա:
Մեղայ, տէր, խոստովանիմ
զյանցանս իմ. մեղայ, ողոր-
մեա:
Մեղայ, քեզ, տէր, քաւեա՛
զիս:
Մեղաք անօրինեցաք ամենե-
քեան, ոչ պահեցաք զպա-
տուիրանս քո. մեղայ քեզ,
տէր, քաւեա՛ զիս:
Դարձի՛ր տէր ի բարկութենէ
քումմէ. անցո՛ ի մէնջ զցա-
սումն քո. մեղայ քեզ, տէր,
քաւեա՛ զիս:

Որ զբանն անեղական զէ-
ակն էից գոյացութեանց անճա-
ռաքար ծնաւ մարմին եղեալ
ի փրկութիւն եղականացս. առ
նա միշտ բարեխօսեա վասն
անճանց մերոց։

Փառք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն
սրբոյ։

Որ զպատուղն ի քէն կենաց ըն-
ծայեցեր մեռեալն Ադամայ,
զորոյ պահօք քառասնօրեայ
քաւեաց զպտղոյն ճաշակումն,
եւ յանվախճան զնոյն վերա-
ծեաց ի կեանս, առ նա միշտ
բարեխօսեա վասն անճանց մե-
րոց։

Ամէն և ինչպ և յաւիտեանս յաւէ-
տենից, ամէն։

Ի միւսանգամ քո գալստեանն
յերևիլ սուրբ նշանիս, արժա-
նի արա՛ զծառայս քո վերըս-
տին նորոգման. զի դու միայն
ես թագաւոր փառաց օրհնեալ
յաւիտեան։

Թագաւորք Ապաշխարութեան։

Լո՛ւր մեզ, Աստուած փրկիչ
մեր, և կեցո զմեզ, որ յա-
ւիտենական կարողդ ես։
Լո՛ւր մեզ, Աստուած փրկիչ
մեր, յոյս ամենայն ծագաց
երկրի, և որ ի ծով հեռի։

Ո՛ պատրաստէ զլերինս զօրու-
թեամբ իւրով, եւ զգեցեալ է
զօրութիւն. եւ կեցո՛ զմեզ,
որ յամենայնի կարողդ ես:
Լո՛ւր աղաչանաց մերոց, տէր
մարդասէր, և գթա ի մեզ:

Մի՛ զիս անտես առներ, այլ
օգնեա՛ ինձ, մարդասէր:
Մի՛ ընկենուր զիս, տէր, յե-
րեսաց քոց, և զհոգի քո սուրբ
մի հաներ յինէն:
Այլ տո՛ւր ինձ ցնծութիւն փըր-
կութեան. և հոգւով պետու-
թեան քո հաստատեա՛ զիս.
այլ օգնեա՛ ինձ մարդասէր:
Մի՛ անտես առներ զիս, տէր
Աստուած փրկիչ իմ, այլ չը-

նորհեա՛ ինձ թողութիւն բազ-
մագութ մարդասէր, և կեցո՛:

Երկինք եւ երկիր գոհանան
զքէն, տէր, արարած ամե-
նայն քեզ երկիր պագանեն.
եւ հրեշտակք ի բարձունս ա-
ղաղակեն եւ ասեն, ողորմեա
դու ստեղծեր մի՛ կորուսաներ:
Երկինք երկնից, չուրք որ ի
վերոյ քան զերկինս՝ օրհնեցէք
զանուն տեառն:
Զի նա ասաց եւ եղեն, հրա-
մայեաց եւ հաստատեցան. եւ
հրեշտակք ի բարձունս աղա-
ղակեն և ասեն, ողորմեա՝ դու
ստեղծեր, մի՛ կորուսաներ:
Երկինք եւ երկիր հանապազ

զքեզ գովեն, թագաւոր փա-
ռաց. սերովբէք և քերովբէք
ի խոնարհ ունելով զդէմս իւ-
րեանց, և միաձայն բարբառով
աղաղակեն եւ ասեն. սուրբ,
սուրբ, սուրբ տէր զօրու-
թեանց:

Ի խորոց սրտից՝ խօսք ընդ Աստուծոյ:

ԲԱՆ ՁԱ.

Ա. Ընդ Աստուածածնին
մաղթանաց՝ ահա և զվերնոցն
անմահ հրեշտակացն լուսակեր-
պից զաղերս հայցուածոց, որ
վասն իմ զոչեն առանց լռե-

լոյ հանապազորդեան արգա-
հատուցեամբ մաքուր բերա-
նոց, ընկալ բարեգութ: Որք են
բարիք բարեգործեալք ի բա-
րերարէդ՝ անկիրթք չարեաց,
հաստեալք յամէնիշխան հրա-
մանաց էիդ զօրութիւնք, հը-
զօրք՝ ակնարկութեան բար-
ձրելոյդ, սուրբք, մաքուրք,
անարատք, օրհնեալք, վայել-
չականք, յաղթողք և անպար-
տելիք, և ըստ ընթացից տե-
սութեան մատաց՝ արագունք:

Բ. Որք եւ պտղակորոյս
տնկոյ թզենւոյն եռամեանն
դատարկութեամբ, որ զբնաւ
յաւիտեանս պարունակէ ժա-
մանակն՝ զանցեալն ընդ ներ-

կայիս եւ ընդ ապառնւոյն, յամայր յամրութեամբ յերկարաձգելոյ, յայգի աշխարհիս արմատացելոյ, սին սաղարթին պաճուճելոյ՝ զրկեալ ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեանս: Սոքա բարեխօսք, հանդերձելիք, այլ և խնամակալք, որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրից կարեկցելով, բարեմասնութեանն մեր սպասեն. եւ յաւիտենականն կենդանութեամբ փրկութեանն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ: Քանզի արդարեւ մեր են այս աղաչանք

ի բարերարէդ Աստուծոյ վասն մեր կարգեալ առ նոսա. զի նոքա բանիւ են ստեղծեալ, եւ մեք ձեռօք ներգործեալ: Որք և գալոց են ընդ միածնիդ՝ վկայք սոսկալի դատաստանին հատուցման, ճշմարտաբան դատախազք յանցաւորութեան երկրայնոցս, յահաւորին աստենի յայտնիչք իրաւամբ ըզմատակարարութիւնն՝ որ առ մեզ, որ և անտանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ ըզմշտանուէրն նուագ ձայնի, ողորմեա՛ դու ստեղծեր, մի՛ կորուսաներ:

Գ. Արդ, ընդ գովաբանութեան ձայնիցն խնդրուածոց

անմահականացն վեհից՝ եւ ի մեր հեծութիւնս հոտոտեսցես, բնաւից արարիչ. որ յաղթեաց գթութեամբդ քով վերնոցն և ստորայնոցս. քանզի քո է բարերարելդ առ մեզ եւ առ նոսին: Արդ, վասն բարեզարդութեան անախտականացն, հրաշատեսիլ հրակերպիցն, անշաղախ մաքրոցն, անմեղիցն, բոցանիւթիցն, հոգեղինացն, և անվանելեացն. ամէնաճեղուն առաւելութեամբ ի բարձրն ընտրականութիւն գերափայլ յաճախ գիտութեամբ՝ անցուրտ ջերմութեամբ ջեռուցանողք լինքնաբուն տապոյին աստուածասիրութեան ըստ լինքեանց ըզ-

մերս սառնասեր սրտից անբորբոք չիջուսին, այրիլ անաղօթ ի մեծախորհուրդ սրբում սեղանիս՝ որ ի խորանիս, առանց նիւրհելոյ եւ դանդաղանաց սպասել հրամանաց երանականաց կեցուցիչ կամաց ամենատեղծիդ, քրովբէօրէն առաքինութեամբ յԱստուած միացեալք անբաժանելի: Որք երկնաւոր պետութիւնք են մեծք, եւ զինուորութիւնք անբիծք ահաւորք երկնաւորիդ Աստուծոյ՝ ազատազնեայ պաշտօնեայք, ի յամպոյդ լուսոյ ցոլք նշուղից:

Դ. Որովք և լինճ մեղաւորիս հոգեղինի մարդասիրեսցես

ողորմել, Յիսուս, աղաչանօք
իմոյն հրեշտակի, դարձուցա-
նելով վիս, տէր, ի բարիդ քո
հետս լուսոյ. զի զաւանդ հո-
գւոյս իմ պաշտպանութեան,
զոր հաւատացեր նմին տեսչու-
թեան, զընկալեալն ի քէն ի
կենցաղ աստեացս՝ ուրախու-
թեամբ սրտիւ յիս բերկրեալ,
անմեղադրելի առ ի քէն օր-
հնեալ՝ խնդալից դիմաց զը-
ւարճութեամբ քեզ, արքայ
բարձրութեան փառաց անհա-
սից, ի խրախճանս կենդանա-
խումբս բերկրեցելոցն պա-
րուց մատուցեալ ընծայեսցու-
ցէ, զովեալ ողորմած։ Եւ քեզ
անքնին ընդ Հօր անհասի՝

թուակցութեամբ Հոգւոյդ ան-
ճառի՝ վայել է փառք պատիւ
և երկրպագութիւն, յաւիտեա-
նըս յաւիտենից. ամէն։

Աղօթք առ Ամենասուրբ Երրորդութիւ-
նըն Յովհաննու Գառնեցւոյ ասացեալ։

Բարերար եւ ամենակալ,
յոյս ապաւինի ամենայն տա-
րակուսելոց, տէր իմ եւ Աս-
տուած իմ, արարիչ էից յանէ-
ից և նախախնամող բոլորից.
որ յայսմ աւուր հրամանաւ
քով բաժանեցեր զբազմութիւն
ջուրց, զքաղցունսն ամբար-
ձեր ի վեր յամպս տեղալ ի
վերայ երկրի ի բղխել զաղ-

բլուրս եւ խաղացուցանել ըզ-
գետս, և զաղտագտնս թողեր
յերկիր ստորին անսահման ի-
մաստութեամբ. և արկեր ան-
ջրպետ ի մէջ նոցա լոյծ եւ
հոսանուտ զհաստատութիւնն
օդոյ, զի փոխադարձ տուրև-
առութեամբ ջուրց մշտենջե-
նապէս հաղորդիլ կարասցեն
ընդ միմեանս վերինքն և ստո-
րինք յօգուտ համօրէն տիեզե-
րաց, եւ ի պէտս ազգի մար-
դկան, զոր հանդերձեալ էիր
արարչագործել ի վայելումն
երանաւէտ փառաց աստուա-
ծութեանդ քո:

Արդ, ես որ կամ իբրև ջուր
ստորին աղտեղեալ ի ճահիճս


զանազան մեղաց գարշու-
թեամբ, և ապականեալ բազ-
մօրինակ անօրէնութեամբ,
առ քեզ պաղատիմ, արարիչ
իմ և յոյս, բարեգութ կա-
մօքդ վեր առեալ զմիտս իմ
ի ստորէ՝ մաքրագործեա՛ որ-
պէս զջուրսն ամպոց յամենայն
աղտեղութեանց քոյովդ սըր-
բութեամբ, եւ զդառնութիւն
նեխութեան իմոյ ի բաց արա՛
լինէն քոյովդ քաղցրութեամբ
լինել հաճոյ աստուածութեան
քոյ կամաց՝ ի գովեստ փառաց
անբաւ չնորհաց քոց:

Մի՛ հայիր ի բազմութիւն
անօրէնութեան իմոյ՝ որ ա-
նարժան եմ զքոյ, և մի զար-

չիր յինչն վասն զաղրութեան յանցանաց իմոց՝ յորում կամ չաղաչեալ. այլ մատիր առ իս անճառելի գթութեամբդ, և ողորմեա՛ ինձ ըստ բազում ողորմութեան քումդ, զի քաղցրը ես առ ամենեսին՝ որք կարդան առ քեզ, և ապաւինին ի քո մարդասիրութիւնդ։

Դու, տէր, զանձրև գթութեան կամաց քոց եւ զառատ տազեղ ողորմութեան քո ըզցօղ անձրևեա՛ ի սիրտ իմ, որ ի սաստիկ ցանկութենէ չարեաց եւ ի տապոյ անօրէնութեան երաշտացեալ՝ չունի ինչ բերս պտղոց բարութեան. և ոռոգեալ պարարտացո՛ չնորհօք մարդասիրութեան քոյ՝ բերել զարդիւնս անեղծանելիս ի պաշար մշտնջենաւոր և անեզրական կենաց։

Լո՛ւր ինձ, բարերար, քաւեա՛ անյիշաչար, եւ արա՛ զծառայս քո արժանի վերին օթեւանացդ ընդ սիրելիս աւնուան քոյ սրբոյ, և ընդ համարաւս հաճոյից աստուածութեանդ քոյ՝ որ յերկինս և որ յերկրի. զի ընդ նոսին փառաւորեցից անլռելի օրհնութեամբ զՀայր և զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։



Դա է որդի իմ սիրելի
ընդ որ հաճեցայ։

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Տէր, մի՛ սրտմտութեամբ
քով յանդիմանես զիս, և մի՛
բարկութեամբ քով խրատես
զիս։
Զի նետք քո հարան յիս, եւ
յիս հաստատեցաւ ձեռն քո։
Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ
իմոյ, յերեսաց բարկութեան
քո։
Ոչ է խաղաղութիւն ոսկերաց
իմոց՝ յերեսաց մեղաց իմոց։

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծանրացան ի վրայ իմ:

Նեխեցան եւ փտեցան վէրք իմ՝ յերեսաց անզգամութեան իմոյ:

Տառապեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ յոյժ. զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ՝ լի եղեւ չարչարանօք, եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ:

Զարչարեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ յոյժ. մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ:

Տէր, առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ, եւ հեծութիւն իմ ի քէն ոչ ծածկեցաւ:

Սիրտ իմ խռովեցաւ յիս, եւ եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց, եւ այս ոչ եղեւ ընդ իս:

Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան եւ կացին. եւ մերձաւորք իմ հեռի եղեն յինէն:

Բռնադատէին զիս եւ խնդրէին զանձն իմ՝ ոյք խորհէին չար ի վերայ իմ, խորհեցան զանօրէնութիւն եւ զնենգութիւն զօրհանապազ խորհեցան:

Այլ ես որպէս խուլ զի ոչ լսէ, եւ որպէս համր որ ոչ բանայ զբերան իւր:

Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ եւ ոչ գոն խօսք ի բերան նորա:

Ես լ քեզ, տէր, յուսացայ,
և դու լուիցես լինձ, տէր Աս-
տուած իմ։
Ասացի թէ մի՛ ուրախ եղիցին
յիս թշնամիք իմ. լ սասանիլ
ոտից իմոց լ վերայ իմ մեծա-
մեծս խօսեցան։
Ես լ տանջանս պատրաստ եմ,
և ցաւք իմ առաջի իմ են յա-
մենայն ժամ։
Զանօրէնութիւնս իմ պատմե-
ցից, եւ հոգացայց վասն մե-
ղաց իմոց։
Իսկ արդ, թշնամիք իմ կեն-
դանի են եւ զօրացեալք են
քան զիս. ոյք ատելին զիս լ
տարապարտուց։
Ոյք հատուցին լինձ չար փո-

խանակ ընդ բարւոյ, չարա-
խօսէին զինէն, զի ես երթայի
զհետ արդարութեան։
Մի՛ թողուր զիս, տէր Աս-
տուած իմ, և մի՛ լ բացեայ
առնիր լինէն. հայեաց յօգնել
լինձ տէր փրկութեան իմոյ։

ՇԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ԲՅ. Պարձո զցասումն քո լ
մէնջ՝ յաղաղակել հողեղինա-
ցըս. բազմագութ տէր, խնա-
յեա եւ մի՛ կորուսաներ։
Կանգնեա զանկեալս լ գլորմա-
նէ, զվիրաւորեալս՝ լ թշնա-

մեղն. որ բժիշկդ ես հիւանդաց, բժշկեա զիմ զհիւանդութիւնս:

Ի յանցանաց իմոց թախծեալ անձն իմ՝ գոչեմ որպէս զմաքսաւորն, Աստուած, քաւեա զիս զմեղաւորս:

Աներևութից քննող գաղտնեաց, բժշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութիւնն և կեցո, միայն մարդասէր:

Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան. ողորմեա անձին իմոյ բազմամեղի եւ կեցո, միայն մարդասէր:

Ամենաբաւական ողորմութեան չնորհ, պարգևեա ինձ յահա-

զին աւուրն զթողութիւն եւ կեցո, միայն մարդասէր:

Բազում են քո գթութիւնքըզ բազմամեղ անձին իմոյ, ողորմեա, Աստուած քաւիչ իմ:

Զի քեզ, անյիշաչար տէր, մեղայ չարին խաբմամբ, ողորմեա, Աստուած քաւիչ իմ:

Ի քո ի միւսանգամ գալստեանն, յորժամ գաս դատել զերկիր, ողորմեա, Աստուած քաւիչ իմ:

Մեղաք մինչև յերկինս, եւ զարդար զցասումն քո չարժեցաք ի մեզ, տէր, ըստ մեծի քումդ ողորմութեանդ ողորմեա մեզ:

Իջաք մինչ ի դժոխս, ընկերդ՝ մեռելք յանօրէնութեան մերում. տէր, յիշեա զգինս արեան որդւոյ քո, և ողորմեա: Հալածեա ի մէնջ, տէր, նշաւնաւ խաչի քո զընդդիմամարտս և զաներեւոյթ գազան, և մի՛ տար յապականութիւն զքո ժառանգութիւնս:

Տաճար լուսոյ անստուերին եւ առագաստ անճառ բանին. որ զնախնւոյ մօրն եւայի բարձեր զանէծսն տրտմալի. հայցեա յորդւոյ քո միածնի հօր հաշտութեանն միջնորդի, բառնալ ի մէնջ զխռովութիւն եւ տալ զոգւոց զխաղաղութիւն:

Փառք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ:

Աստուածածին անհարսնացեալ յերկրէ յերկինս հարսն ընծայեալ. յորժամ բազմիս լուսոյ նման քո Միածնիդ յաջակողմեան, յայնժամ մաղթեա ընդ մեր զնոյն փրկել զմեզ յահեղ բոցոյն. համադասիլ ընդ արդարոց երգել քեզ փառս ընդ երկնայնոցն:

Այժմ եւ մշտ եւ յաւիտեան յաւիտենից, ամէն:

Երեւեալ աղիւսանման ակն պատուական ի ձեւ խաչին, հերձանելով զծոմն կարմիր առաջնորդելով ժողովրդեանն

սեամբ ամպոյ լոյսն անմեկնե-
լի, որ ձևացոյց մեզ սովաւ
մտանել ընդ դուռն անեղաչէն
դրախտին տեառն։

Թագաւորք Ապաշխարութեան։

Երկայնամիտ ես, տէր, առ
ամենեսեան. և գթա, տէր, ի
վերայ մեր, որպէս և աւազա-
կին, փրկիչ, և կեցո։
Երկայնամիտ բազումողորմ և
ճշմարիտ, նայեա առ իս և ո-
ղորմեա ինձ։
Տուր զօրութիւն ծառայի քո,
կեցո զորդի աղախնոյ քո. և

արա առ իս նշան բարութեան,
եւ գթա, տէր, ի վերայ մեր
որպէս և յաւազակին, փրկիչ,
և կեցո։
Տէր, որ գթացար յաւազակն
խաչակից լինել քեզ, եւ մա-
քրեցեր զաղտեղութիւն յան-
ցանաց նորա յաղբերէ կողի
քո. գթա և յիս ի մեղաւորս,
որ ծարաւիս եմ առ քեզ, եւ
փափաքիմ ի գաւխթս քո, որ-
պէս զմի յեղջերուաց ի յազ-
բերս ջուրց։

Մարտեաւ ընդ իս թշնամին,
հանապազ զիս կամի կորուսա-
նել. այլ դու, տէր իմ, այց արա
մոլորեալ ոչխարիս և կեցո։

Մարտեան ընդ իս ի տարա-
պարտուց, և փոխանակ սիրոյ
իմոյ մատնէին զիս, այլ ես
յաղօթս կայի։
Հատուցին ինձ չար փոխանակ
բարւոյ, ատելութիւն փոխա-
նակ սիրոյ իմոյ. այլ դու,
տէր իմ, այց արա մոլորեալ
ոչխարիս և կեցո։
Որ հովիւդ ես հօտից բանաւոր
կենդանեաց. տուր ինձ յոյս
կենաց ապաչխարութեան. եւ
դարձո զմոլորեալս ի հօտ քո
Քրիստոս և կեցո։

Մեղա՛յ եւ աղաչեմ զքեզ,
թողութիւն չնորհեա մեղաց
իմոց. քաւիչ իմ լեր քո գը-

թութեամբդ՝ որ միայնդ ես
փրկիչ և կեցո։
Մեղայ տէր, մեղայ, եւ զա-
նօրէնութիւնս իմ ես ինձէն
գիտեմ։
Աղաչեմ եւ խնդրեմ ի քէն,
թող ինձ, տէր, թող ինձ, և
մի՛ կորուսաներ զիս ըստ ա-
նօրէնութեան իմոյ. քաւիչ
իմ լեր քո գթութեամբդ՝ որ
միայնդ ես փրկիչ և կեցո։
Մեղա՛յ քեզ, տէր, մեղայ,
քեզ, տէր, մեղայ եւ քան
զաւազ ծովու բազում են յան-
ցանք իմ. պատրանք աչխար-
հիս խաբեցին զիս, և եղէ ան-
պտուղ ի կենաց յուսոյդ, այլ
դու անոխակալ և անյիշաչար

Փրկիչ, խնայեա ի մեղուցեալ ծառայս և կեցո:

Ի խառոց սրտից խօսմ՝ ընդ Աստուծոյ:

ԲԱՆ Հ.

Ա. Եւ քանզի համբարձեալ զընթացս բանիս՝ ի վերոքունց ասեմ երկրայնոց՝ չհամարելոց, ընդ գոյս եղելոց՝ ի մեծագունիցն տեսակս, ասացից զոմանսն ի հանդէս իրաւանց ահաւորին անաչառութեան: Որ զի թէ մերձաւորագոյնք լցեն Աստուծոյ՝ իբրև զնախածանօթ հայրապետութիւնն. եւ կամ

մաքրագոյնք՝ որպէս մարգարէն կամ անբծագոյնք իբրեւ զառաքեալսն կամ ընտրելագոյնք՝ որպէս մարտիրոսսն, եթէ ոչ դու մարդասիրեացես աննուազ բարիդ և անփոփոխ խնամակալութիւնդ և անպակաս ողորմութիւնդ, ընդունայն է լինձ փրկութիւնն առ ինոցանէ:

Բ. Զի եթէ առ նոյն լինքն Աբրահամ ձայն արձակիցեմ, իբր ողորմագին առակ ընչեղին լինձ վարդապետէ, ի տապոյ անտի պապակեալ, կաթիլ մխոյ ջրոյ ոչ բաւականանայ. քանզի եւ նա փակեալ է ընդ կարեօք հասարակաց անհնա-

րութեան: Իսկ եթէ առ Մով-
սէս, եւ նա զգածեալ է տկա-
րութեամբ, որ ոչ զօրեաց առ-
նըն փրկութեան, որ զհայթայ-
թանաց կրկուտն ի պահպանու-
թեանն աւուր ժողովէր: Իսկ
եթէ առ Ահարոն, և նա ինք-
նին իսկ կարօտացաւ մաղթո-
ղի: Իսկ եթէ առ Դաւիթ, ի
մէջ բարեացն առաւելութեան՝
ստգտեալ է և նա: Իսկ եթէ առ
Նոյ և Յոբ և Դանիէլ, զայս
եգեկիէլ մարգարէ մեկնեաց՝
յանուանէ իսկ յիշատակեալ
զնոսա; և զայն ընդ նոսին իբր
ի դիմաց Աստուծոյ ազդեալ,
կենդանի եմ ես՝ ասէ տէր,
թէ ոչ ապրեցուսցեն զուստե-

րըս եւ զդստերս իւրեանց ի
բարկութենէն որ հասանիցէ,
բայց եթէ ինքեանք միայն
ապրեսցին: Իսկ եթէ առ Պետ-
րոս վէմն հաւատոյ, ի զուտ
խնամոց խուն մի խիթացեալ,
և նա ընդ կրիւք իմն զբաւե-
ցաւ: Թողում ասել զբազմացն
գումարութիւն խոնարհեալ առ
կարիս կարիս, թէ եւ յաւէտ
երջանիկք լցեն: Ընդ որս է
Յովասուս որմն մարգարէի ի մէջ
աստուածառաքն սպասաւո-
րութեան մարդկօրէնն գայ-
թակղութիւն՝ միայ յոլովից
անթարգմանելի, թէ և ի դէմս
իմն մեկնութեան ձեւակեր-
պեսցի:

Գ. Եւ քանզի չափեալ սահ-
մանեցաւ զօրութիւն վրկու-
թեան մարդկան, եւ ցուցան
նոքա ողորմեալք բարերարիդ,
եւ զօրացեալք ամենակալիդ.
կոչեցեալք պաշտպանողիդ, և
քաւեցեալք հնարաւորիդ, չը-
նորհեալք ազատեցուցչիդ, և
բժշկեալք անախտականիդ. կե-
նագործեալք անապականիդ և
լուսաւորեալք նորոգողիդ, այ-
սուհետև գիտացեալ զսակն որ-
քանութեանց հոգածին ընու-
թեանս որք մխիթարեն օրի-
նակաւն նմանաբար հարապա-
տապէս վստահութեան յուսա-
հատելոց, ահա առ քեզ դի-
մեցից, որդի Աստուծոյ կեն-

դանւոյ՝ Քրիստոս օրհնեալ յա-
մենայնի: Մանաւանդ զառա-
կըն ազգակից այսմ մաղթա-
նաց աստանօր յիշեալ, զվերա-
գրելոցդ բան վերստին արդա-
րացուցանէ. քարի է, ըստ ի-
մաստնոյ ումեմն երջանկի, ան-
կանել ի ձեռս տեառն, և մի՛
ի ձեռս մարդկան. զի որպէս
մեծութիւն նորա, և ողորմու-
թիւն նորին: Եւ այս բան՝ թէ
և զԴաւթին լիմն գծագրէր, որ
զերեքմասնեան հարուածն աս-
տուածեան առաջի եդեալ՝ ըն-
տրեաց ինքնին կամաւորաբար
զդատակնիք մահուն սատա-
կման՝ իբր զկենդանի Քրիս-
տոսի հաւատոցն յաճախու-

թեամբք, քան զերկուսն եւս այլ փոքրկունս՝ որք տանջենն եւ ոչ ողորմին, սակայն եւ իմս օրինակութիւն բանիս պատկերի ճարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ է այլայլեալ յարմարութենէ. զի ոչ եթէ զփրկեալսն նուաստացուցանեմ ի մատենի այսր ողբերգութեան, առանց որոց ոչ է մատչել առ տէր, այլ զփըրկողին անուն պսակեմ, եւ զչնորհ նորին առ ամենեսին բարեհռչակեմ. եւ զբնաւին բարձունսն ի թռիչս վարուց խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ կարօտեալ ողորմութեանն գեղոյ։

Դ. Ահա դու կեանք, դու փրկութիւն, դու բժշկութիւն, դու անմահութիւն, դու երանութիւն, դու լուսաւորութիւն. արա ինձ անդորր ի մեղացս աշխատութեանց, զի և քեզ լիցի հանգիստ ի մշտադատս հեծութեանց՝ ձանձրացուցիչս թախանձանաց. որ ոչ այլ լուիք, քան թէ փրկութեամբ մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Աղօթք առ Հայրն երկնաւոր, Յովնանու Գառնեցւոյ ասացեալ։

Արարչագործ Աստուած և ամենախնամ, որ յայսմ աւուր

գթութեամբ կամաց քոց ժո-
ղովեցեր զՂուբս որ ի վերայ
երկրի՝ ի խորս ծովու, և զա-
տուցեր զցամաքն ի ՂուբՀց. և
զարդարեցեր զայն զանազան
բանջարօք և ծաղկագեղ վա-
յելչութեամբ, եւ ազգի ազգի
պտղաբեր ծառուվք: Իսկ արդ,
երկիրս անձնաւոր՝ փոխանակ
բարեբոյս սերմանց առաքի-
նագործ արգասեաց՝ բուսուցի
փուշս մեղաց խոցոտիչս հա-
գուոյ իմոյ. և փոխանակ բե-
րոցն քաղցրութեան՝ պտուղս
անօրէնութեան դառինս և մա-
հաբերս ինձ գոյացուցի:

Այլ դու, անոխակալ տէր,
հայեաց քաղցրութեամբ առ իս

յարարածս քո, և մի՝ անտես
առներ զգործս ձեռաց քոց.
խլեա յինէն զփուշս չարեաց
եւ զարգասիս անօրէնութեան՝
զոր ես ինձէն պտղաբերեցի.
և սերմանեա վերստին ի միտս
և ի կամս իմ զբարին և զօգ-
տակարն հոգւոյ իմոյ՝ յօժարիլ
և ընտրել զայն, և առնել կա-
մակար սիրով:

Անօրէնութիւնք իմ բար-
ձրացան քան զգլուխ իմ, եւ
տղմաչաղախ ՂուրՀք մեղաց
ծածկեցին զանձն իմ. և ահա
առ քեզ՝ առ բարեգութ տէրդ
իմ պաղատիմ, երևեցո զիս
իբրև երկիր ցամաք, և նորո-
գեա զսիրտ իմ բերել պտու-

ղբս բարիս զկանուխն և զանա-
գան ըստ հաճոյից քոց, մար-
դասէր:

Երկիրս բանաւոր, զոր զար-
դարեցեր բնաբոյս առաքինու-
թեամբ, ցամաքեցայ ի հրա-
տապ հրապուրանաց իշխանին
օդոյս այսորիկ, որպէս դա-
լարի ի սաստիկ տօթոյ, և թօ-
թափեցան ծաղիկք հոգւոյս,
գօսացան ոստք առաքինու-
թեան, և խամրացան բողբոջք
բարեաց:

Եւ ահա կորացեալ անձամբ
առ քեզ աղաղակեմ, պար-
գեւիչդ կենաց, ցօղեա յիս
ղցօղ խնամոց մարդասիրու-
թեան քո, զի չորացաւ որպէս

խեցի զօրութիւն իմ, եւ որ-
պէս խոտ տանեաց ցամաքե-
ցայ, եւ նորոգեա զիս նորո-
գութեամբ չնորհաց քոց ըստ
առաջնումն պայծառութեան:

Սրարեր զիս այգի վայելուչ
ցանկով օրինաց պատսպար-
եալ առ ի բերել ողկոյզս քաղ-
ցրութեան ի հաճոյս տնկագոր-
ծողիդ իմոյ Աստուծոյ. իսկ ես
ապստամբ կամօք արհամար-
հեալ զօրէնս քո, խոպանացայ
չարաչար գնացիւք, և պտղա-
բերեցի խաղող դառնութեան
բազմօրինակ անօրէնութեան:

Եւ արդ, մարդասէր, խնայեա
յիս գթութեամբ. եւ դարման
տար այգւոյս այսմիկ զոր տըն-

կեաց աչ քո. ամրացո զիս վերստին օրինօքդ կենաց, եւ ի բաց արա յինէն զբաղձանս չարեաց՝ որք ստեղնին ի կամս իմ։ Որպէսզի վաստակեալ յարդիւնս առաքինութեան՝ արժանի եղէց ընդունիլ զօրհնութիւն առ ի քէն եւ վայելել յանճառ բարիսդ ընդ սուրբս քո յերկինս, եւ գոհութեամբ փառաւորել զամենազօր տէրութիւնն քո յաւիտեանս յաւիտենից. ամէն։





Զոր առեալ Որդւոյ վերափոխեալ
դասեաց յանպատում ի կեանս։

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Ողորմեա՛ լինիմ, Աստուածդ,
ըստ մեծի ողորմութեան քումդ.
ըստ բազում գթութեան քումդ
քաւեա զանօրէնութիւնս իմ։
Առաւել լուա զիս յանօրէնու-
թենէ իմմէ. և ի մեղացդ իմոց
սուրբ արա զիս։
Զանօրէնութիւնս իմ ես լինիմ
գիտեմ, եւ մեղք իմ առաջի
իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ, տէր, եւ
չար առաջի քո արարի։
Որպէս արդար եղիցիս ի բանս
քո և յաղթող ի դատել քեզ։
Անօրէնութեամբ յղացաւ, եւ
ի մեղս ծնաւ զիս մայր իմ։
Դու, տէր, զճշմարտութիւն սի-
րեցեր, զանյայտս և զծած-
կեալս իմաստութեամբ քով
յայտնեցեր ինձ։
Ցօղեա յիս մշտակաւ եւ սուրբ
եղէց, լուա եւ քան զձիւն
սպիտակ եղէց։
Լսելի արա ինձ, տէր, զցնծու-
թիւն եւ զուրախութիւն, եւ
ցնծասցեն ոսկերք իմ տառա-
պեալք։
Դարձո զերեսս քո ի մեղաց

իմոց. եւ զամենայն անօրէ-
նութիւնս իմ քաւեա յինէն։
Սիրտ սուրբ հաստատեա յիս,
Աստուած, և հոգի ուղիղ նո-
րոգեա ի փորի իմում։
Մի՛ ընկենուր զիս, տէր, յե-
րեսաց քոց. և զհոգի քո սուրբ
մի հաներ յինէն։
Տուր ինձ ցնծութիւն փրկու-
թեան քոյ, և հոգւով պետու-
թեան քո հաստատեա զիս։
Ուսուցից անօրինաց զճանա-
պարհս քոյ, եւ անբաւիչք
առ քեզ դարձցին։
Փրկեա զիս յարենէ Աստուած,
Աստուած փրկութեան իմոյ,
ցնծասցէ լեզու իմ յարդարու-
թեան քումմ։

Տէր, եթէ զչրթունս իմ բա-
նաս, բերան իմ երգեսցէ զօրհ-
նութիւնս քո։
Թէ կամեցեալ էիր պատարա-
գըս մատուցանէաք, բայց դու
ընդ ողջակէզս իսկ ոչ հաճե-
ցար։
Պատարագ Աստուծոյ հոգի խո-
նարհ, զսիրտ սուրբ և զհոգի
խոնարհ Աստուած ոչ արհա-
մարհէ։
Բարի արա, տէր, կամօք քովք
սիօնի, և շինեսցին պարիսպք
երուսաղէմի։
Յայնժամ հաճեսցիս ընդ պա-
տարագս արդարութեան, յոր-
ժամ ուխտից պատարագս հան-
ցեն ի սեղան քո զուարակս։

ՇԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ՔԿ. Յամենայն ժամ աղա-
չանք իմ այս են, ի մեղաց ի-
մոց սուրբ արա զիս, տէր։
Ցանցանաց իմոց զարհուրի
սիրտ իմ. աղաչեմ զքեզ՝ թող
լինձ, տէր։
Աբտաստուաց իմոց մի՛ լռեր,
տէր, զի պանդուխտ եմ ես՝
յանցաւոր երկրի։

Ողորմեա լինձ, Աստուած իմ,
ողորմեա լինձ; զի անպատաս-
խանի եմ յամենայնի, թող
լինձ, տէր։
Ճանապարհք քո ուղիղ են,
ես միայն մոլորեցայ. դարձո

զիս՝ եւ ողորմեա ինձ, Աս-
տուած։

Դատաստանք քո արդար են,
ես միայն եմ մեղուցեալ.
քաւեա զիս՝ և ողորմեա ինձ,
Աստուած։

Ցոյս իմ ես դու, տէր, քա-
ւիչ յանցանաց իմոց. մի՛ ան-
տես առներ զբղխումն արտա-
սուաց իմոց. ողորմեա ինձ
Աստուած։

Առ քեզ ապաւինեցայ որպէս
զանառակ որդին. հայր, մե-
ղա՛յ յերկինս եւ առաջի քո.
ողորմեա ինձ Աստուած։

Փրկեա զիս, Աստուած, ի բա-
զում մեղաց իմոց. արա ար-

ժանի քոյին սուրբ արքայու-
թեանդ. ողորմեա ինձ Աս-
տուած։

Մեղք իմ բազում են յոյժ,
ծանր են քան զաւազ ծովու.
քանզի քեզ միայնոյ մեղայ.
ողորմեա ինձ Աստուած։

Բաց, տէր, զդուռն ողորմու-
թեան, որ ողբալով կարդամ
առ քեզ. քանզի քեզ միայ-
նոյ մեղայ. ողորմեա ինձ Աս-
տուած։

Հե՛ղ յիս զգթութիւնդ քո,
բազումողորմ եւ մարդասէր,
քանզի քեզ միայնոյ մեղայ.
ողորմեա ինձ. Աստուած։

Մեղայ քեզ, տէր, մեղայ, ողորմեա։
Մեղայ անօրինեցայ և մատնեցայ ի ձեռս անօրէնն թշնամւոյն. արդ անկեալ աղաչեմ՝ թող լինձ, տէր։
Քան զամենեսեան առաւել մեղայ, տէր իմ գթած, քան զամենեսեան անօրինեցայ եւ մատնեցայ ի ձեռս անօրէնն թշնամւոյն, արդ անկեալ աղաչեմ թող լինձ, տէր։

Նկեսցէ, տէր, ի վերայ մեր ողորմութիւն քո, և բան փըրկութեան քո պահեսցէ զանձինս մեր ի մեղաց։
Ողորմութիւն քո եւ ճշմարտութիւն քո եւ լոյս երեսաց քոց առաջնորդեսցէ մեզ ի յարդարութիւն։
Որ ողորմած գ ես, գթած եւ երկայնամիտ, տէր, ընկալ զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։

Տէր, զլուր մխսանգամ քո գալստեանդ լուայ և երկեայ. զի ուսայ ի սրբոց պատուիրանացն, եթէ դաս դու ի դատել զերկիր։
Տէր, յիշեցի զչար զգործս իմ և զարհուրեցայ, զի ծանեայ ճշմարտութեամբ՝ զահաւոր և զանաչառ զքո դատաստանդ։
Տէր, յիշեցի և զգութ արար-

չական սիրոյ քո առ քո արա-
րածս, և ի քո գթութիւնդ ա-
պաւինեալ աղաչեմ, ողորմեա
ինձ յաւուր յայնմիկ, Քրիս-
տոս, արդար դատաւոր:

Աղաչանօք Աստուածածնին
անապական քումմ ծնողին՝ զի-
մանալի աչս սրտից մերոց բաց-
ցես ողորմութեամբ հայել ի
լոյս քո Քրիստոս:

Փառ՝ հօր և որդւոյ և հոգւոյն
սրբոյ:

Մարիամ կոյս անարատ, զա-
նապական փեսայդ աղաչեա,
զի հաշտեսցի ընդ այրի եղեալ
հոգիս, եւ միաւորեսցի դար-

ձեալ սիրով ընդ հեռացեալս
ի նմանէ:

Ամէն և ընդ և յաւիտեան յաւի-
տենից, ամէն:

Յորժամ յարևելից փայլիս,
անճառ լուսով լուսաւորես ըզ-
հաւատացեալսն, եւ դատա-
պարտես զազգն հրէից անհա-
ւատից, ո՛վ սուրբ քառաթև,
և զիս լուսաւորեա զխաւար-
եալս մեղօք, և դասակարգեա
ի դասս մատենագրի յանճառ
երկնից արքայութեանդ, զի
անդադար օրհնաբանիս, և քո
են փառք յաւիտեանս. ամէն:

Թագաւորի Ապաշխարութեան։

Տէր իմ, բազում են անօրէնութիւնք անձին իմոյ, ոչ յիշեցի զահեղ զդատաստանս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ, չնորհեա ինձ ապաշխարութիւն, տէր, և ողորմեա։ Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. եւ որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ։

Նեխեցան եւ փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ. ոչ յիշեցի զահեղ զդատաստանս քո, արդ անկեալ զքեզ աղաչեմ, չնորհեա ինձ ապաշխարութիւն, տէր, և ողորմեա։

Պաղատանս մատուցանեմք քեզ, Հայր երկնաւոր, մի՛ անտես առներ զաղաչանս մեր, այլ անցո զցասումն քո ի մէնջ, և յիշեա զի պատկեր եմք բարերարութեանդ։

Տէր իմ, զթութիւնք քո բազում են յոյժ, առ իս արա զբարերարութիւնս քո. որպէս և մաքսաւորին՝ և ինձ ողորմեա։

Զթութիւնք քո բազում են, տէր, եւ ըստ լրաւանց քոց կեցո զիս։

Բազում են որք հալածեն եւ նեղեն զիս. ի վկայութեանց քոց ես ոչ խոտորեցայ. առ իս

արա զբարերարութիւնս քո, որպէս և մաքսաւորին և ինձ ողորմեա։

Անոխակալ եւ անյիշաչար, տէր, որ գթալով ի մեզաւորս չնորհեցեր ապաշխարութիւն. արդ գթա և յիս, տէր, ի մեղուցեալ եւ յանօրինեալ քո ծառայս. և փոխարկեա զգործողս չարեաց ի գղջումն ապաշխարութեան և կեցո։

Ի տաճարի քում սրբութեան փառաւորելով զքեզ. դու ունես իշխանութիւն՝ ողորմեա մեզ։

Այլ ես ըստ բազում ողորմութեան քում մոխց ի տուն

քո, և երկիր պագից ի տաճար սուրբ քո երկիւղիւ քով։

Տէր, առաջնորդեա ինձ յարդարութեան քում վասն թշնամեաց իմոց եւ ուղիղ արա առաջի իմ զճանապարհս քո. դու ունես իշխանութիւն՝ ողորմեա մեզ։

Ի տաճարի քում սրբութեան հանապազ զքեզ գովեմք, թագաւոր փառաց, որ ունես իշխանութիւն կենաց և փրկութեան՝ ողորմեա մեզ։

Ի խորոց արտից խօսմ՝ ընդ Տիրուհւոյն.

ԲԱՆ Զ.

Ա. Եւ արդ, ի վերայ այսքանեաց յուսահատութեանց և ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց, աստուածային բարկութեանց, տագնապեալ ոգւով թախծութեան խպտա, աղաչեմ զքեզ, սուրբ Աստուածածին: Հրեշտակ ի մարդկանէ. մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուհի, անխառն իբրև զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արու-

սեկին բարձրութեան, զերազանց քան զբնակութիւն անկոխելին սրբութեանց, երանաւոր խոստմանն տեղի. եդեմ չնչական, ծառ կենացն անմահից բոցեղէն սրովք պահպանակեալ, ի բարձրեալն Հօրէ զօրացեալ եւ հովանացեալ, հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ Որդւոյն յարդարեալ եւ տաղաւարեալ, մխածինն հօր՝ եւ քեզ անդրանիկ, որդի քո ծննդեամբ եւ տէր արարչութեամբ, ընդ անաղտ մաքրութեանդ՝ և անբիծ բարի, ընդ անարատ սրբութեանդ՝ և խնամակալ բարե-

խօս: Ընկալ զմաղթանս այսր աղերսանաց՝ քումմ դաւանողիս, և մատո՛ ընծայեա՛ ընդ սմին խառնեալ զբանն իմ նախնի՝ մեծիդ ներբողի՝ ի քոյդ քումմ պաղատանս: Հիւսեա՛ միացո զմեղուցելոյս դառն հեծութիւն ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոց, տունկդ կենաց պտղոյն օրհնութեան. զի ի քէն միշտ օգնեալ եւ բարեգործեալ, եւ ի մաքրական քո ծննելութիւնդ ապաւինեալ եւ լուսաւորեալ, կեցից Քրիստոսի որդւոյ քոյ և տեառն:

Բ. Ողջանդակեա թևոցդ ա-
ղօթիւք, խոստովանեալ մայրդ

կենդանեաց, և ելիցեն իմ յերկրէս հովտէ, առանց լըլկանաց հետեւիլ ի կեանս օթեւանացդ պատրաստութեան, զի թեթեւասցի կատարածն իմ լինի՝ ծանրացելոյս անօրէնութեամբ: Արասցես տօն լինի բերկրութեան՝ զօրն իմ տագնապի, ողջացուցիչ երկանցն Եւայի. բարեխօսեա՛ խնդրեա աղաչեա, զի ըստ անճառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութիւն: Արտասուօք օգնեա վտանգեցելոյս, գովեալդ ի կանայս, ծնողն որ խոնարհեցո առ իմ հաշտութիւն՝ ծնողդ Աստուծոյ, ընդ իմում թշուառիս հոգա՛,

խորան բարձրելոյն, ձեռն տուր անկելոյս, տաճար երկնային, փառաւորեա զորդիդ քո ի քեզ, աստուածօրէն լինել հրաշագործել քաւութիւն եւ ողորմութիւն, ազախին Աստուծոյ եւ մայր, բարձրասցի պատիւ քո լինել, և ցուցցի փրկութիւն իմ քեւ։

Գ. Եթէ զիս գացես, տիրամայր, թէ լինէ ողորմեսցիս, սրբուհի. թէ զկորուսեալս չահեսցիս, անարատ, թէ զհարթուցեալս յանձանձեսցես, երջանիկ, թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես, բարեշնորհ, թէ յուսահատելոյս լինէ միջնորդեսցես, միշտ սուրբ կոյս,

թէ զմերժեալս ընտանեցուսցես, մեծարեալդ Աստուծոյ, թէ յիս ցուցցես զգթածութիւն, լուծիչդ անիծից, թէ զծփեալս հաստատեսցես, հանգիստ, թէ ի խռովութեանցս յուղմանց փոխեսցես զիս, խաղաղարար, թէ վրիպելոյս լինէ հնարաւորեսցես, գովեալ, թէ վասն իմ մացես ի հանդէս, մահու նահանջիչ, եթէ զդառնութիւնս իմ անուշեսցես, քաղցրութիւն, թէ զբաժանմանն իմ խորոց քակտեսցես, հաչտութիւն, թէ զանմաքրութիւնս իմ բարձցես, եղծման ընդոտնիչ, թէ զմատնեալս մահու փրկեսցես, կեն-

դանի լոյս, թէ զլալեացս ձայն հատցես, բերկրութիւն, թէ զխորտակեալս կազդուրեացես, դեղ կենաց, թէ ի կործանեալս յիս ակնարկեացես, հոգելից, թէ ողորմութեամբ ինձ պատահեացես, կտակ նուիրեալ: Օրհնեալդ միայն ի չրթունս անբիծս լեզուաց երջանկաց. ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ տեառն Յիսուսի ապրարչին երկնի և քնաւին երկրի, զոր անճառապէս ծնար բովանդակ մարմնովն և համայն աստուածութեամբն, որ փառաւորեալն է ընդ Հօր եւ

Հոգւոյն սրբոյ էութեամբ եւ անքննութեամբ մերոյին բնութեամբս միացելով, ամենայն եւ յամենայնում, մի չերրորդութենէն. նմա փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:

Աղօթք առ Հայրն երկնաւոր, Յովհաննու Գառնեցւոյ ասացեալ:

Հաստիչ ամբաւազօր լուսաւորացն երկնից, և ճարտարապետ ամէնիմաստ տանս աշխարհի, որ յայսմ աւուր կարգեցեր զլուսաւորն ի հաստա-


տուԹեան երկնից՝ զարեգակն
եւ զլուսին եւ զաստեղացն
պարս՝ ի նշանս եւ ի ժամա-
նակս և յաւուրս և ի տարիս։
Արդ աղաչեմ զքեզ Աստուած
կենարար, հաճոյական պար-
գեւօք հոգեձիր չնորհաց քոց
չարժեա զմիտս եւ զկամս իմ
սիրել զքեզ յամենայն սրտէ,
և ուղղեա զընԹացս անձին ի-
մոյ անհերքելի զօրուԹեամբ
քով՝ գնալ անխոտոր ի ճանա-
պարհս հրամանաց քոց։ կապ-
եալ կամ անզերծ չղԹայիւք
յանցանաց իմոց՝ ազատեա զիս,
ամենակալ։ Անկեալ դանդա-
չեմ ի հաղբս կորստեան գաղ-
նի որսողին, հան զիս, բարե-

գուԹ։ Ի բանտ անելանելի խա-
ւարին գործոց կաչկանդեալ
տանջիմ, ծագեա առ իս զլոյս
չնորհիդ և զերծո զիս, խնա-
մակալ՝ յաղատուԹիւն կենաց
անվախճանից։
Դու ես յոյս իմ և ապաւի-
նուԹիւն, դու իմ փրկուԹիւն.
քեզ ակնկալեալ սպասէ ամե-
նամեղ անձն իմ։ Ջեզ փափա-
գի հոգի իմ, մարդասէր, որ-
պէս փափագի եղջերու յաղ-
բերս ջուրց։ Ծարաւի եմ ո-
ղորմուԹեան քումն, արբո զիս.
տանջեալ ի սովէ՝ յեղջերաց
խոզից կերակրիմ, զհացդ եր-
կնաւոր չամբեա լինձ։ Մրուր
պառնուԹեան մեղաց և մահու

արբեալ տագնապիմ չարաչար, զբաժակդ կենաց մատուսակեա ինձ։ Մերկացեալ դողամ յանագորոյն աւազակաց իշխանին մահու, զգեստուք խնամոց քոց ծածկեա զիս։ Վիրաւորեալ եմ ի թունաւոր նետից աներևոյթ թշնամւոյն, բժըշկեա զհարուածս իմ։

Եւ արա զիս զապախտաւոր ծառայս՝ որ կարդամ առ քեզ, արժանաւոր երկնային հարսնարանին եւ անմահական սեղանոյն ընդ այնոսիկ որք սիրեցին զքեզ ի բոլոր սրտէ, և պահեցին զպատուիրանս քո. զի ընդ նոսին փառաւորեցից զամենագութ մարդասիրու-

թիւն քո յաւիտեանս յաւիտենից. ամէն։



Հացն զոր ես տաց՝ մարմին իմ է։

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ Ա.ՊԱՇԽՍԱՐՈՒԹԵԱՆ

Տէր, լուր աղօթից իմոց՝ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, եւ մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։ Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ։ Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, եւ ոսկերք իմ որպէս խոտ չորացան։

Հարայ ես որպէս խոտ և ցա-
մաքեցաւ սիրտ իմ, մոռացայ
ուտել զհաց իմ ի ձայնէ հե-
ծութեան իմոյ։
Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ,
նմանեցայ ես հաւալսան ա-
նապատի։
Եղէ ես որպէս բու յաւերակի։
տքնեցայ եւ եղէ ես որպէս
ճնճղուկ միայն ի տանիս։
Նախատեցին զիս թշնամիք իմ
զօրհանապազ. եւ գովիչք իմ
ինձ երդնուին։
Զմոխիր որպէս զհաց կերի,
եւ զըմպելին իմ արտասուօք
խառնեցի։
Յերեսաց բարկութեան սրտմը-
տութեան քո, զի դու բար-

ձրացուցեր և խոնարհեցուցեր
զիս։
Աւուրք իմ որպէս հովանի
անցին, եւ ես որպէս խոտ
ցամաքեցայ։
Դու, տէր, յաւիտեան կաս,
և յիշատակ քոյ ազգէ մինչև
յազգ։
Դու յարուցեալ գթասցիս ի վե-
րայ սիոնի. ժամանակ գթա-
ւոյ նորա հասեալ է ժամ։

ՇԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ԷՅ. Զերծո զիս յորոգայթէ
որսողին. և յամենայն վտան-
գից ապրեցո և ողորմեա։
Յաներևոյթ թշնամւոյն եւ ի

գաղտնի նեռից բանսարկուին
պահեա և ողորմեա։
Փրկեա զիս ի յանցանաց մեղաց
իմոց, և նորոգեա զիս հոգւով
գիտութեան, և ողորմեա։

Ծով մեղաց իմոց զիս ալէ-
կոծէ, որ ես նաւապետ բարւոյ,
չնորհեա լինել նաւահանգիստ,
հայր ամենակալ։
Խորք պատրանաց զիս կորու-
սանեն, այլ դու նաւապետ բա-
րի, չնորհեա լինել նաւահան-
գիստ, հայր ամենակալ։
Որ միայն իշխանդ ես թողուլ
զմեզս. և ես աղաչեմ զքեզ
տէր, թող լինել զմեղս իմ,
հայր ամենակալ։

Մերձեալ է օր գալոյ քո,
տէր, լուր ձայնի աղօթից ի-
մոց՝ որ կարդամս առ քեզ, և
ողորմեա։
Բանից իմոց ունկն դիր, տէր,
եւ ի միտ առ զաղաչանս իմ
զառաւօտուս՝ որ կարդամս առ
քեզ, և ողորմեա։
Որ ընկղմեալս եմ ի խորս չար-
եաց, սուրբ զհոգիդ քո առա-
քեա առ իս՝ որ կարդամս առ
քեզ, և ողորմեա։

Ողորմեա լինել, Աստուած, զի
քեզ միայնոյ մեղայ։
Առաւել լուա զիս ի տղմոյ յան-
ցանաց, աղբիւր բժշկութեան,
և ողորմեա։

Ցաբենէ փրկեա զիս, որ հո-
գւոց և մարմնոց աւնիս իշխա-
նութիւն, և ողորմեա:

Վիրաւորեալ յանցանօք ան-
ձըն իմ: առ քեզ, տէր, համ-
բարձի զաչս իմ. թող լինիմ
զմեղս իմ, միայն բարեգութ, և
ողորմեա լինիմ, Աստուած, ըստ
մեծի ողորմութեան քում:
Կործանեաց զիս չարագործ
թշնամին, և կամի խոպան զիս
որսալ. հայր բարեգութ բժըշ-
կեա զվիրաւորեալս, և ողոր-
մեա լինիմ Աստուած ըստ մեծի
ողորմութեան քում:
Անդունդք մեղաց պաշարեցին
զիս, զի բազում են քան զա-

ւազ ծովու. առ քեզ, տէր,
պաղատիմ, փրկեա ի վտան-
գէս, եւ ողորմեա լինիմ աս-
տուած՝ ըստ մեծի ողորմու-
թեան քում:

Զանապական զհոգևոր ըզ-
գանձն յապականացու կեն-
ցաղս ծախեցի. այլ առ քեզ
միայն պաղատիմ, բարերար
փրկիչ, խնայեա ի մեղուցեալ
ծառայս:
Զցանկ հոգւոյ իմոյ քակտեցի
և եղէ անբարուընակ որթ. այլ
առ քեզ միայն պաղատիմ,
բարերար փրկիչ, խնայեա ի
մեղուցեալ ծառայս:
Ոստաքանց եղէ ես որպէս զար-

մաւենի, պտղակորոյս որպէս ձիթենի. այլ, անյիշաչար եւ անօխակալ փրկիչ, խնայեա ի մեղուցեալ ծառայս։

Անտանելւոյն տաղաւար բարձող էիցս բարձողին, որ ծնար զաստուած մարմնով զանմարմնաբար ծնունդն Հօր, բարեխօսեա վասն մեր աստուածածնին Մարիամ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Որ վառեցար ի յարփւոյն և ոչ կիզար ըստ մարենւոյն, այլ ետուր զհացն կենաց կերակուր բանաւորաց, բարեխօսեա առ Քրիստոս՝ ջնջել զգիր մեղաց մերոց։

Ամէն և դիր և յաւիտեան յաւիտենից, ամէն։

Ջկենդանագիր անարատ ծնողն քո արիականեմք առաջի անխակալ տէրութեանդ քո. յորժամ գաս փառօք Հօր դատել զքէնամին խաչի քոյ, ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո և կուսի, աղաչեմք զքեզ, տէր, պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ։

Թագաւորի Ապաշխարութեան։

Ապաշխարութեան արտասուս աւազան լինի, և լուսնայ զբազմութիւն մեղաց. սովաւ չնորհեա յառաջ քան զվախճան զքաւութիւն և զմեծ քո զողորմութիւն։

Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած հզօր եւ կենդանի. ե՞րբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ։

Եղեն լինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի. եւ այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է աստուած քո, սովաւ չնորհեա յառաջ քան զվախճան զքաւութիւն և զմեծ քո զողորմութիւն։

Յորժամ գաս փառօք Հօր յահագին աւուրն ի դատել զերկիր. եւ զողան սարսափմամբ երկրածինքս ամենայն ի յահէ քումմէ. ի նստիլ քո յատենի, դատաւոր ահեղ, եւ յակնարկել քո յարարածս, յիշեա և զիս զբազմամեղս. սր ընկըղմեալս եմ յանցանօք բանսարկուին խաբմամբ. եւ հայցեմ զաւազակին, տէր, և զիս յիշեա, որ միայնդ ես փրկիչ։

Զիս որ ի նաւի աշխարհի ալէկոծեն մեղք իմ, նաւահանգիստ ապաշխարութեան չնոր-

հեա լինձ, բազումողորմ, եւ կեցո։

Կեցո զիս, Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ. ընկղայ ես ի խորս անդնդոց՝ ուր ոչ գոյ լինձ հանգիստ. նաեւ հանգիստ ապաչխարութեան չնորհեա լինձ, բազումողորմ, եւ կեցո։

Նաեւապետ բարեգութ առ քեզ ապաւինիմ. տուր լինձ ձեռն որպէս երբեմն Պետրոսին ի վերայ ալեացն, որ ծփիմս ալէկոծեալ յանցանօք մեղաց, եւ կեցո։

Դու ես, Քրիստոս, աղբիւր կենաց, բղխումն ողորմութեան. չնորհեա, փրկիչ, անձանց մերոց զթողութիւն մեղաց մերոց։

Ի քէն է, տէր, աղբիւր կենաց, եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։

Ծագեա զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ. զարդարութիւնս քո՝ այք ուղիղք են սրտիւք. չնորհեա, փրկիչ, անձանց մերոց զթողութիւն մեղաց մերոց։

Որ աղբիւրդ ես ծարաւեաց, եւ հանգիստ աշխատելոց. ճանապարհ մոլորելոց, եւ հովիւ հոգեւոր բանաւոր հօտի. փափաքողացս առ քեզ, Քրիստոս, լեր նաեւ հանգիստ. եւ արբո մեզ ծարաւեացս զբա-

ժակ քո քաղցրութեան յանըս-
պառ աղբերէդ։

Ի խորոց սրտից խօսէ՝ ընդ Աստուծոյ։

ԲԱՆ ՁԲ.

Ա. Տէր Աստուած բարե-
բար, բազմապարգև թագաւոր,
կենաց պատսպարան, լուսոյ
կերպարան, լայնատարր հան-
գստարան. որ յաղագս մեղու-
ցեալոյս եկեալ մարմնացար. գոր-
ծեցեր զանապատումն, և հան-
դերձեցեր զհրաշալիսն, մինչև
կատարեցեր զառեցեալն ընդ
ամենալիր աստուածութեանդ։

Բ. Արդ, վասն առաքելոցն
սրբոց յերկնաստեղծ քո ձե-

ռացդ ձեռնադրելոց, եւ հոգ-
ւովդ սրբով օծելոց, զորոց ըզ-
գովեսան արժանաւորութեան
ըստ իմում կարի՝ առ ի փառս
քո, տէր ամենայնի, յայլում
բանի պաշտեցի, և լինձ ողոր-
մեսցիս յիշատակաւ սիրոյ նո-
ցին ընտրութեան։ Շաւիղ լինձ
ելից նոքօք՝ հանդերձեսցես
յերանութիւնն փափաքելի.
ձայն բարի հովուութեան նո-
ցին՝ ի յաղջոյն լինձ կենաց
քաղցր լսելի։ Մասն կալայց
ի յանեղծութիւնն փրկութեան
տօնեցեալ յուսոյն ընդ առաջ-
նորդացն կենաց, սկզբնաշնոր-
հիցն պատուոյս վարաւորեա-
լըն դասուց, գետոցն բանա-

կանաց, աւետարանչացն բարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ պճնելոցն, ի զարդ անկապուտ զօրութեան չնորհին պայծառացելոց, իւղովն զուարթութեան տիրական լուսոյն կատարելոց:

Գ. Ընդ աչակերտաց մեծիդ հրամանի բարձեալդ Աստուծոյ Քրիստոսի՝ եւ մարտիրոսացն ընտրելոց նահատակութեամբ, որք մահացու և վշտաչարչարն մարմնով, վտանգաւոր եւ ամենակիրն անդամօք, երկրաւորական եւ հողազանգուածն բնութեամբ՝ մարտուցեալ ընդ տարր գոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան և կեն-

դանացան հոգեպէս. արիաբար ելեալք ի յերկրէ, ըստ մարգարէին, վկայք ճշմարիտք ամենափորձն մահու. իմանալեացն անտեսիցն և ծածկելոց՝ աներկբայ բարեացն յուսով տեսելոցն աստէն նկատիչք. աչակերտք առաքելոցն և չարչարակիցք նոցին. որ հաւասարեալ գործովք ընդ նոսին, կատարեալ լրմամբ անպակասելեաւ՝ պարեն ի խրախճանս անկէտն երանութեան. որոց հաճոյական եւ ընդունական մաղթանօք, արիւնընծայ վաստակաւորէր քրտնակնդրուկ աղերսիցն յարգմամբ՝ ընկալ զիս նորոգ ըստ նոցին մասին ա-

նեղծ փրկութեամբ ի քեզ արձանացեալ։

Դ. Ընդ խաղացեալսն հուրբ եւ սուսերբը արեամբ ներկելոցըն, և ճգնաւորացն սրբոց հարցըն մխանձանց՝ և քեզ հետեւելոցն, որդի Աստուծոյ, անպարտելի քաջութեամբ, եւ անպատիր զգաստութեամբ, ընդ դժնեայ գոռոզի մարմնոյս բռնութեան արիապէս մարտուցեալ, սովիմբ վանեցին զանմարմինն բելիար, և մըշտամարտ հանդիսիւ յասպարիսի կենցաղոյս առանց զգուանաց ծանրաբեռնութեան ի լայնածաւալ ծփանաձ աչխարհիս ծովու տապանակաւ մարմնոյս

թանձրութեան զթեթեւութիւն հոգւոցն թռուցեալ՝ ի նաւահանգիստն կենաց հասին. եւ իբր սիրողք վերնում վիճակին առանց յետնոցն մտածութեան, զթաղն յաղթութեան համարձակապէս պայծառ ճոխութեամբ պճնեալ խսկապէս ի գլուխ կապեցին. վասն նոցին արժանաւոր մաղթանաց եւ նուիրական հայցուածոց՝ եւ զիս զմեղաւորս ի պատժակացս ընկալ ընդ նոսին։

Ե. Եւ ահա խառնեալ զանմաքուրս բան՝ ընդ նախագըրեալ երջանկացն փառատրական աղերսարկութիւն, որ վասն իմ գոչեն քեզ ի հաճութիւն, եւ

ես ընդ նոսին՝ լբը դառնու-
թիւն եդեալ ընդ քաղցու,
կամ տատասկ ընդ ողորկու-
թեան, տգեղութիւն ընդ վա-
յելչութեան, և տիղմ ընդ գե-
ղեցկութեան մարգարտի, կամ
հող ընդ յստակութեան ոսկւոյ,
եւ կամ քարինս անարգս ընդ
պայծառութեան արծաթոյ,
բացասութիւն ընդ ճշմարտու-
թեան. և աւազ ինչ ատամնա-
ռու ընդ կակղութեան զան-
գուածոյ հացի. արդ լուր՝
հզօր, հնարաւոր, գովեալ,
զնոցայն վասն իմ և զիմս ընդ
նոսին ի նոցին գովեստ, ի փըր-
կութիւն իմ և ի փառս քո՝ ա-
մենագութ, բարերար, օրհ-

նեալ, երկայնամիտ, կարող,
անքննին, անճառ, անեղծ, եւ
անստեղծ: Քո են պարգեւք,
քո են չնորհք. դու սկիզբն և
պատճառ բարեաց ամենայնի:
Ոչ ես դատապարտիչ, այլ ա-
զատիչ. ոչ ես կորուսիչ, այլ
գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ
կեցուցիչ, ոչ ես տարագրիչ,
այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ,
այլ ապրեցուցիչ. ոչ ես ընկըղ-
միչ, այլ վերածիչ. ոչ ես գը-
լորիչ, այլ կանգնիչ. ոչ ես
անիծիչ, այլ օրհնիչ. ոչ ես
վրիժառու, այլ չնորհիչ. ոչ
ես թշուառացուցիչ, այլ մը-
խիթարիչ: Ոչ եղծանես, այլ
գրես. ոչ սասանես, այլ հաս-

տատես. ոչ ոտն հարկանես, այլ սխոփես. ոչ պատճառս յօ-
դես մահու, այլ հնարս խըն-
դրես կենաց. ոչ ես ի կամս
չարժեալ սատակման, այլ ի
փրկութիւն ողորմութեան: Ոչ
մոռանաս զայցելութիւն. ոչ
լքանես զբարի. ոչ արգելուս
զգթութիւն. ոչ բերես վճիռ
կորստեան, այլ կատակ ազա-
տութեան: Ոչ թշնամանիս յա-
ռատութենէ. ոչ բամբասիս ի
չնորհաց. ոչ հայհոյիս ի պար-
գեւաց. ոչ նախատիս ի ձրի
ձրից. ոչ անգոսնիս յերկայն-
մտութենէ. ոչ եպերիս ի նե-
րութենէ. ոչ բանսարկիս ի
բարութենէ. ոչ անպատուիս

ի քաղցրութենէ. ոչ քամա-
հիս ի հեզութենէ. ոչ առա-
քինս այսօքիկ տրտնջմունք,
այլ անլռելի գոհաբանութիւնք:
Բարձ զմեզս իմ, հզօր. լոյծ
զանէծս իմ, օրհնեալ. քաւեա
զպարսիս իմ, ողորմած. ջնջ-
ջեա զյանցանս իմ, գթած.
մատո մատն այցելութեան,
եւ անդստին իսկ կատարե-
ցայց. վա՛յ քեզ, տէր, քան
զսոսին դիւրագոյն եւ կամ
վա՛յ լինձ պարտաւորիս կա-
րեւորագոյն: Այլ կենդանա-
գրեա, բարեխնամ, քոյինա-
ստեղծ պատկերիս փչումն կըր-
կին ի չունչ նորոգման լուսաւո-
րութեան մաքրական չնորհի՝

զամենամեղս ոգի պաշտպանեալ։

Զ. Մի՛ ածեր, ողորմած, ինձ օր տարաժամ ի համառօտս երբի՝ անթոշակ ապաճեռնուածեամբ ընդ անկատար ուղին հետևել. մի՛ մատուցաներ բաժակ դառնութեան ի ժամ ծաբաւոյ. մի՛ փակեր, գթած, իմ հանդէպ զյաջողուած հոգևոր օգտիս, և մի՛ իբր յանկարծադէպ հինից ասպատակ գիշեր մահուն ինձ պատահեսցէ. մի՛ տապ տօթոյն յանպատրաստ պահուն զարմատս հատեալ ցամաքեցուսցէ, և մի՛ լուսնակաև դիպուածդ հասեալ դաղտնեօք վշասեսցեն. մի՛

պահեսցէ ինձ սառն մեղացս, և մի՛ հոսանք ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն։ Մի հանգիստն մահ բերիցէ, և մի՛ ննջումն ի սատակումն յառաջեսցէ. մի՛ քունն ինձ կորուստ լիցի, և մի՛ նիրհումն ապականութիւն գործեսցէ. մի՛ վախճանն անյարմար ի վերայ իմ արշաւեսցէ, եւ մի՛ չնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ՝ ի խոնարհ լքցի։

Է. Դու ես, տէր, դու գթած, դու բարերար, դու երկայնամիտ, դու ամենակարող, առ ամենայն բան անհասութեան անճառ զօրաւոր. քաւել, փըրկել, կենագործել, լուսաւորել,

վերստին հաստատել, ի ժան-
եաց կերչաց գազանաց և կամ
յատամանց վիշապաց ի կեանս
կորզել, ի խորոց անդնդոց ի
լոյս բերկրութեան ածել, եւ
ի հեղձմանէ ծփանաց մեղաց
ընդ արդարս երջանկաց փա-
ռօք բազմեցուցանել: Ամե-
նայն ոպի քեզ աննկալեալ յու-
սով սպասէ, կարօտեալ քումդ
չնորհաց. եթէ երկնայինք, և
եթէ երկրաւորք, եթէ անկածն
մեղօք եւ եթէ ամբարձեալն
արդարութեամբ, եթէ տէր և
եթէ ծառայ. եթէ տիկին, եւ
եթէ աղախին. և ի ձեռին քո
է չունչ կենդանական բոլորե-
ցուն: Եւ քեզ ընդ Հօր եւ

Հոգւոյդ սրբոյ փառք՝ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք առ Հայրն երկնաւոր, Ցովհան-
նու Գառնեցւոյ ասացեալ:

Որ արարչական զթով կեն-
դանածնես զարարածս քո, և
խնամես քաղցրութեամբ, Աս-
տուած իմ և տէր, որ յայսմ
աւուր ամենազօր հրամանաւ
քով հաներ ի ջուրց զեռունս
չնչոց կենդանեաց եւ զկէտս
մեծամեծս եւ զթռչունս թե-
ւաւորս, եւ աստուածային
օրհնութեամբ քով օրհնեցեր
զնոսա աճել եւ բազմանալ ի
վերայ երկրի:

Արդ, աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն բարերարութեան քո, օրհնեա և զիս զբաստեղծուածս ամենակալ ձեռին քո ծննդաբեր լինել գործոց առաքինութեան։ Եւ զսերմն հոգևոր կենաց՝ զոր անդստին բնաւորեալ ես ի խորս մտաց իմոց, զօրացո զիս աճեցուցանել կենսաբեր խորհրդով ի ձեռն չնորհաց և ողորմութեան քո, զոր տաս ամենայնի և ոչ նախատես, զի դու նոյն ես՝ և ամք քո ոչ պակասին. բանաս զձեռն քո, և լցուցանես զպէտս և զկարիս ամենեցուն յանսպառ գանձուց քոց։ Մի՛ թողուր զիս, տէր իմ, ամուլ

և անբեր գործոց բարութեան. մի՛ անտես առներ զտառապեալս ի քոց խնամոց վասն բազմութեան յանցանաց իմոց։ Ոնարհեցո զունկն քո՝ և լուր լինձ, զի աղքատացայ ի բարեաց. ստուգանեցի կենարար պատուիրանաց քոց, եւ յօժարեցայ հաճել զկամս անձին իմոյ։

Ցարդարեցեր զիս տաճար կենդանի արարչութեան քումն, և ես զանձն իմ պատրաստեցի բնակարան ատելեաց քոց դիւաց։ Պատմուճան լուսազգեստ զգեցուցեր լինձ ի հոգևոր ծննդենէն, և ես արկի զանձամբ հանդերձ խաւարի մեղաց եւ

մահու: Եւ ուր լինէ սիրտ մարմնեղէն խոկալ յօրէնս քո յամենայն ժամ, և ես ամանն խորհրդոյ անօրինութեան յօրինեցի: Կարգեցեր յիս լսելիս ի լուր պատուիրանաց քոց, եւ ես բացի առ հրապոյրս բանսարկուին: Կազմեցեր յիս լեզու գործի օրհնութեան և ես չարաչար վարեալ՝ արարի զէն անիրաւութեան: Սերմանեցեր ի միտս իմ սերմն բարի առաքինութեան, եւ ես փուշս դժնդակ մոլորութեան բուսուցի ընդ այն: Ջբարիսն զոր պարգեւեցեր ինձ չահիլ նուքօք զկեանս, անմտութեամբ իմով վարեալ ի սնոտիս՝ ստացայ

լինձ մահ եւ կորուստ: Տիրական լիշխանութեամբ եւ փառօք պատուեցեր զիս, եւ ես կամաւ մատնեցի զանձն իմ ի ծառայութիւն մեղաց:

Եւ այժմ, առ քեզ ապաւինեալ աղաչեմ, բարեգութ, քաւեա՛ զյանցանս իմ, եւ նորոգեա՛ զիս չնորհօք ողորմութեան քոյ: Ծարաւի եմ առ քեզ, Աստուած իմ, արբո՛ լինձ զջուրդ կենդանարար: Ժանգահար եղէ ցանկութեամբ չարեաց, ա՛րկ զիս ի բովս հալոցաց, եւ սրբեա՛ հրով սիրոյ քոյ: Բաղձանք երկրաւորացս տարագիր արար զիս առ ի քէն, կարկառեա՛ առ իս զաջդ ա-

մենազօր, եւ մատո զիս առ քեզ: Փոխանակ մշանջենաւոր և անանց փառաց, զգիւրեղծական և զապականացուն սիրեցի. մի՛ թողուր զիս ի կամս իմ:

Տեղացին ի վերայ իմ թուռնաւոր նետք աներեւոյթ թըշնամւոյն, լե՛ր լինձ վահան ամրութեան եւ տեղի ապաւինի ապրեցուցանել զիս: Խորհուրդք չարեաց հարին զհոգիս ի հարուածս անողջանալիս, մատիր առ իս զթութեամբ և բժշկեա, ամենահնար: Թշնամիք զանձն իմ պաշարեցին եւ ի լարս խաբէութեան իւրեանց արգելին, զարթո զգօրութիւն քո՝ եւ ե՛կ ի կեցուցանել զիս: Մերկացուցին զիս անպատուութիւնք և վէրս ի վերայ վիրաց յաւելին. զի ոչ զգեցայ զշրահն արդարութեան, և ոչ եդի ի գլուխս իմ զսաղաւարտն յուսոյն փրկութեան. ոչ առի զվահանն հաւատոյ, և ոչ զսուր բանին Աստուծոյ. այլ դու, հզօր և ամենակար, ա՛ռ զվէնն և զասպար քո, և արի՛ յօգնել լինձ. խորտակեա՛ զգօրութիւն հպարտացեալ բռնաւորին, եւ ասա՛ դու ցանձն իմ՝ թէ փըրկութիւն քո ես եմ: Տրտմեալ է անձն իմ մինչև ի մահ, մխիթարեա՛ զծառայս քո: Ապե-

բախտ գտայ առ երախտա-
ւորդ, եւ բարկացուցի զան-
բարկանալի բնութիւնդ, այլ
դու, անյուշաչար, մի՛ հատու-
ցաներ ինձ ըստ անօրէնու-
թեան իմում, այլ ողորմու-
թեամբ քով քաւեա՛ զիս։

Առ քեզ աղաղակեմ ի խո-
րոց անգնդոց՝ յոր ընկղմեալս
եմ, որպէս Յովնան ի փորոյ
կիտին. հա՛ն զիս ի վհէս խա-
ւարի՝ վերաբերեալ ի լոյս կե-
նացդ յաւիտենից։ Խորասուզ-
եալ եմ յանգունդս մեղաց
կորստեան, մատո՛ զձեռդ ամե-
նազօր և փրկեա՛ զիս։


Տանջիմ հանապազ ի խղճէ
մտաց, զի դառնացուցի զը-

քաղցրագութ տէրդ իմ. եւ
յոյզք վարանական խորհրդոց
աններելի տանջանացն՝ պա-
տրաստեալ ինան լինէ, և իբրև
լեռնացեալ ամեհի ալեօք հոգ-
մակոծեն զանձն իմ. բարերար
և անօխակալ՝ հզօր այցելու,
օգնեա՛ լինէ, և հանդարտեցո՛
զմրրկեալ ալիս խռովութեան
մտացս ցօղով գթութեան քոյ։

Բազմութիւն անօրէնութեան
իմոյ որպէս հեղեղք պղտոր-
եալք զարհանազայր գետոց՝
ողողեցին զմեզուցեալս. այլ
դու, մարդասէր, չնչեա՛ զհոգին
քաղցրութեան կամաց քոց, և
ցամաքեցո՛ զհոսանս չարեաց
իմոց. և ողորմութեամբ քով

քաւեա՛ զանօրէնութիւնս իմ,
եւ թուակիւ արա՛ սիրելեաց
անուանդ քումմ սրբոյ. զի ընդ
նոսին փառաւորեցիկ զանո-
խակալ մարդասիրութիւնդ քո,
այժմ և միշտ և յաւիտենից
յաւիտեանս. ամէն։





Ցիտեա՛ զիս, Տէ՛ր, յորժամ գաս արքայութեամբ քով։

ՈՒՐԲԱՔ ԱՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ Ա.ՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Ի խորոց կարդացի առ քեզ, տէ՛ր, տէր, լո՛ր ձայնի իմում։ Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց։ Թէ զանօրէնութիւնս իմ քննես, տէր, տէ՛ր. իսկ ո՞ կարէ կալ առաջի քո, զի ի քէն է քաւութիւն։ Վասն անուան քո համբերի,

տէ՛ր, համբեր անձն իմ բանի
քումմ. յուսացաւ անձն իմ ի
տէր։
Ի պահէ առաւօտու մինչև յե-
րեկոյ, ի պահէ առաւօտու յու-
սացաւ Իսրայէլ ի տէր։
Ի տեառնէ է ողորմութիւն բա-
զում. ի նմանէ է փրկութիւն,
եւ նա փրկեաց զԻսրայէլ յա-
մենայն նեղութեանց նորա։

ՇԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ՀԻ. Քրիստոս Աստուած Աս-
տուածոց, ողորմեա՛։

Անօրէնութեամբ ի մեղս եր-
կնեաց զիս մայր իմ. աղաչեմ
Փրկիչ, ողորմեա՛։
Վիրաւորեալ մեղօք անկանիմ
առ քեզ, Փրկիչ. մի՛ անտես
առներ՝ ողորմեա՛։

Մաքսաւորն հառաչանօք ի
տաճարին էառ զքաւութիւն.
նովին ձայնիւն եւ ես գոչեմ,
ողորմեա՛ լինձ, Աստուած։
Աւազակն աղաղակեր ի խա-
չին՝ յիշեա՛ զիս, տէր. նովին
ձայնիւն եւ ես գոչեմ, ողոր-
մեա՛ լինձ, Աստուած։
Անառակ որդին աղերսանօք
աղաչեր զքեզ, հա՛յր՝ մեղայ
յերկինս և առաջի քո. նովին

ձայնիւն և ես գոչեմ, ողոր-
մեա՛ ինձ, Աստուած:

Շնորհեա՛ մեզ, տէր, ընդ
աղքատաց օրինակին Ղազա-
րու ժուժկալութիւն, զի կա-
մաւոր աղքատութեամբ՝ ար-
քայութեանդ երկնից ընդ նմին
լիցուք արժանի. լու՛ր մեզ և
ողորմեա՛, Քրիստոս Աստուած:
Որ փոխանակ հացին կարօտու-
թեան զհացն անմահութեան
նմա չնորհեցեր. և ընդ մեծա-
տանն անպիտութեան՝ ի գոգն
Աբրահամու զնա ընկալար.
լո՛ւր մեզ և ողորմեա, Քրիս-
տոս Աստուած:
Լուսաւորեա զաչս սրտից ըս-

տանալ մեզ ողորմութեամբ ի
քէն, տէր, զողորմութիւն,
զի մի՛ ընդ մեծատանն հայ-
ցեսցուք ի բոց հնոցին՝ ծագիւ
մատին ջուր ի զովացումն.
լո՛ւր մեզ և ողորմեա՛, Քրիս-
տոս Աստուած:

Զանսկիզբն Աստուած ըզ-
հայրն ամենակալ բարեբանե-
ցէք ընդ զուարթունս երկնից:
Զառ ի հօրէ ծնեալ զՈրդին
միածին բարեբանեցէք հրեշ-
տակային ձայնիւ:
Եւ զնորոգող սուրբ զհոգին
ձայնիւ ցնծութեամբ բարեբա-
նեցէք անլռելի ձայնիւ:

Անակլիզն Աստուած և թա-
գաւոր երկնաւոր, բարեբան-
եալ ի գօրաց անմահից երկնա-
ւորաց, զքեզ օրհնեմք Հայր
անակլիզն:

Յոնարհեցար ի բարձանց վա-
սըն մերոյ փրկութեան՝ արձա-
կիչ կապելոց և բժիշկ հոգւոց
մերոց, զքեզ գովեմք, Որդիդ
մլածնին:

Որ էակիցդ ես ընդ հօր և
փառակից մլածնիդ, բաշխող
պարգեւաց և տուող ողորմու-
թեան, զքեզ բարեբանեմք
սուրբ Հոգիդ ճշմարիտ:

Որ գլոյս աստուածային քո-
բանի ծագեցեր յաշխարհա-

մած խաւարն անգիտութեան.
լուսաւորեա՛ և զմեզ հօր ի-
մաստութիւն:

Որ զհամօրէն դատաստանին
օրինակ նշանակեցեր առ մե-
ծատունն և զղազարոս, ներ-
հակաբար տալով զոր աստ ըն-
կալան.

Վասն որոյ աղաչեսցուք զք-
քեզ, տէր, փրկել զմեզ ի հրոյ
մեղաց և տանջանաց, հանգչիլ
ի գոգ նահապետին արդարոյ:

Որով և մեք ընդ հրեշտակացն
դասուց անբաժանելի սուրբ
երրորդութեանն համաձայնեալ
երգեմք զփառս ի բարձունս:

Ուրախացիր բարձրելոյն հո-

վանացեալ զօրութեամբ, եւ բնակարան սուրբ Հոգւոյն, ո՞ր ով ծնար զբանն Աստուած. բարեխօսեա՛ վասն մեր աստուածածնին Մարիամ:

Փառք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ:

Աղբիւր կենաց բղխեալ յեզեմայ, սուրբ Աստուածածնին, ո՞ր ով արբեցաւ երկիր ծարաւուտ հոգւոյն իմաստիւք. տալ մեզ մաղթեա՛ աղբիւրս արտասուաց, մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

Այժմ եւ մշտ եւ յաւիտեան յաւիտենից, ամէն:

Ինձ ցնծան ստորայինքս ամենայն ի մխիթարսամ քո գալըստեանն. եւ յաւէրժ զուարճանան դասք անմարմնոցն առէից:

Թագաւորք Ադամեանք:

Ի տաճարի սրբութեան քում լո՛ւր, տէր, ձայնի իմում. եւ աղաչանք իմ ժամանեսցեն ի յականջս քո, տէր:

Լուաւ ինձ ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց. եւ աղաղակիմ առաջի նորա մտցէ յականջս նորա, եւ աղաչանք իմ ժամանեսցեն ի յականջս քո, տէր:

Որ լուսատու ես տիեզերաց, Քրիստոս Աստուած, լուսաւորեա՛ զիմ զխաւարային խորհուրդս, և կեցո՛ :

Օրհնեալ ես, տէր, եւ փառաւորեալ է քո անբաւ մարդասիրութիւնդ. զաղաչանս մեր քեզ մատուցանեմք, որ թագաւորդ ես յաւիտենից. ընդունելն մեր արժանի արա, տէր, ընդունիլ ի կեանսդ յաւիտենից :

Աբրահամ ինձ չնորհեա՛ ի յապաչխարութիւն, տէր, զի լուացիւ զմեղս անձին իմոյ որպէս պոռնիկն. աղաչեմ եւ կեցո՛ :

Վաստակեցայ ես ի հեծութեան իմում. լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, արտասուօք իմովք զանկողինս իմ թացի, զի լուացից զմեղս անձին իմոյ որպէս պոռնիկն. աղաչեմ եւ կեցո՛ :

Որ աղբիւրդ ես անապական Քրիստոս Աստուած. զվիրաւորեալ անձն իմ ի մեղաց՝ բժշկեա՛, տէր, բղխմամբ արտասուաց և կեցո՛ :

Զմոլորեալ ծառայս խնդրեա՛, տէր. եւ մի՛ դատապարտեր զիս ի յաւուրն այցելութեան քո, մարդասէր :

Կեցոյց անձն իմ, օրհնեսցէ զքեզ

քեզ. և իրաւունք քո օգնեցեն ինձ:
Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայ քո՝ զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ. եւ մի՛ դատապարտեր զիս ի յաւուրն այցելութեան քոյ, մարդասէր:
Որ մոլորեցայ ի հօտէ քումմէ, հովիւ բարի, խնդրեա՛ զիս զմոլորեալս, եւ արժանաւորեա՛ խառնիլ ի հօտ քո, Քրիստոս, և կեցո՛:

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ:

ԲԱՆ ՀԻ.

Ա. Եւ քանզի օր է օրհնաբանեալ և լուսաւորոգ կշռութեան՝ երկուց ընտրութեանց՝ արարածոցս սասանութեանց՝ յեղանակելոյ յայլ իմն էութիւն երկնաւակենցաղ անփոխադրելի, ամբարձելոցն խոնարհութեան եւ կործանելոցս վերբերութեան, սարսափելի ուրբաթու մեծի պատեքիս. յորում եկն ետես ժամ բարեպատեհ գրել լինձ զայս նուագ ձայնի հեծութեան՝ զուարճախառն երկիւղիւ. ահա ըղձալի համարիմ ասել աստանօր ի քոյոց այտի՝

զոր ընդ իմ կրեցեր, Աստուած
բոլորից:

Բ. Կացեր յատենի քումմ ըս-
տեղծուածոյն իմովս կերպիւ.
ոչ խօսեցար՝ տուիչդ բանի. ոչ
բարբառեցար՝ հաստիչդ լեզ-
ուի. ոչ ձայն արձակեցեր՝ սա-
սանիչդ երկրի. ոչ մռնչեցեր՝
ամեազդեցիկ փողդ մեծու-
թեան. ոչ երախտեօքն քո յան-
դիմանեցեր, և ոչ չարեօք նո-
ցին ըմբերանեցեր. ոչ մատնե-
ցեր ամօթոյ՝ զմատնիչն ըզ-
քեզ տանջանաց մահու. ոչ ի
կապելն զքեզ դիմադարձեցեր,
և ոչ յապտակելն դժուարեցար.
ոչ ի թքնուլն թշնամանեցեր,
և ոչ ընդ կռիւելն երբեք խը-

ռովեցար. ոչ ընդ կատակելն
սրտմտեցար և ոչ ընդ խաղ ար-
կանելն երեսս փոխեցեր. մեր-
կացուցին զզգեստ պատմու-
ճանին իբրև ի տկարէ, և դար-
ձեալ ագուցին իբրև անփրկա-
նաւոր ըմբռնեցելոյ: Եթէ ոչ
էր արբեալ կրկնակի քացախ՝
զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր
հեղեալ մաղձն մթերեալ նախ-
նի դառնութեանն. ճաշակեաց
վհատութեամբ, և արգել ան-
դէն տարակուսանօք. առին
մոլեգնաբար, և դարձեալ մա-
տուցին անպատկառապէս: Գա-
նիւ հարուածոց յետին անար-
գութեան ի մէջ խառնիճաղան-
ջըն ամբոխի գատապարտեցին.

ծուէնը կրկնեցին նախատանաց, և պսակ եդին արհամարհութեան։

Գ. Ոչ ետուն հանդիստ կենդանարարիդ, եթէ ոչ զգործի մահուան կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ, առեր իբրև զհեզ, բարձեր որպէս համբերող, ստանձնեալ իբր զպարտական՝ ըզփայտն վշտաց. որպէս զծաղիկ չուշանաց հովտաց՝ ուսով բերեալ զքէնն կենաց, զի յարհաւրացց գիշերայնոց՝ զիւրակերտս գահաւորակս մարմնեղէն գոյութեանս՝ պահպանեսցէ ի դատապարտութեանն վայրի՝ իբր ի խրախճան խնճոյից։ Հանին

արտաքս իբր զողջակէզ. կախեցին իբր զխոյն սաբեկայ՝ ձգեալ զեղջերացն. տարածեցին ի սեղան խաչին իբր զպատարագ. բևեռեցին որպէս չարագործ. պնդեցին իբր զապըստամբ, զխաղաղութիւնդ երկնաւոր՝ իբր զաւազակ, զանկապուտ մեծութիւնդ՝ իբր ըզտառապեալ, զառ ի քրովբէից պաշտեցեալդ՝ իբր զքամահեալ, զսահմանդ կենաց՝ իբր զարժանաւոր սատակման մահու. զաւետարանիսնկարիչ՝ իբր ըզհայհոյիչ օրինին. զտէր և ըզկատարուածն մարգարէից՝ իբր զհամառօտիչ գրեցելոցն, ըզճառագայթդ փառաց՝ և զկնիք

անքնին խորհրդոց հօր՝ իբր զներհակ ծնողիդ կամաց. զօրհնելոյդ իսկապէս՝ իբր զտարագրեալ. զկապոյ օրինին լուծիչդ՝ իբր զայր ի նզովս գրեալ. զհուրդ ծախիչ՝ իբր զհերքեալ իմն կալանաւոր. զահաւորդ երկնի և երկրի՝ իբր զհաւաստի պատժաւոր. զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ՝ իբր զհողածին ըմբռնեալ։

Դ. Ո՛վ քաղցրութիւնդ եւ երկայնամիտբարերարութիւնդ ողորմածիդ գթութեան, որ վասն ապախտաւոր և անօրինեալ ծառայիս, տէրդ բոլորից, զայս ամենայն կամաւորապէս եւ հաւանողական

հաճութեամբ կատարեալ՝ մարմնոյդ միութեամբ ի քեզ ընկալար. եւ մինչեւ ի քնարան չխրմին տապանի անպակաս ի լրութենէ ամբողջ նոյնութեան Աստուած անքնին՝ զնոյն կըրեալ նախատինս անճառ համբերութեան, յարեար կենդանի ինքնիշխան բարձրութեամբ լուսոյ, աննուազ մարմնով եւ անթերի աստուածութեամբ։ Օրհնալ փառօք, գովեալ գըթութեամբ, բարեբանեալ միչտ ողորմութեամբ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք առ Հայրն երկնաւոր, Յովհաննու գառնեցւոյ ասացեալ։

Էապէս բարի և ամենակալող զօրութիւն Աստուածդ յաւիտենական, որ յայսմ աւուր հրամայեցեր երկրի, եւ եհան զանասունս եւ զսողունս եւ զգազանս ըստ ազգի. և չհանդուրժեալ բնութեամբ բարիդ՝ արարեր զմարդն ի հողոյ ի պատկեր և ի նմանութիւն առաքելապետիդ տիեզերաց, եւ կացուցեր տէր և իշխան ի վերայ բոլորեցունց քո արարածոց և զգուշացուցեր զնա կալ ի պատուիրանի քում, և վայելել զբարիսն՝ զորս ետուր

նմա ձրի եւ առանց փոխարինի ի քումմէ առատասքենէ։

Եւ արդ, տէ՛ր իմ և Աստուածդ իմ, որ զիս հողս անարգութեան այսպիսի անկշռելի բարութեամբ բարգաւաճեցեր, ես ինքնին հրապուրանաց թշնամւոյն կենաց աննայեալ՝ պատուիրանաց կենարարիդ հեստեցի. եւ օտարացայ ինմանութենէ հաստողիդ իմոյ Աստուծոյ։ Եղծի զգեղեցկութիւն կերպարանաց հոգւոյս՝ ազգի ազգի անօրէնութեամբ, և ոչ զարհուրեցայ։

Պերճացուցեր զիս իմացականն մտաք խորհիլ ի չարէն եւ ընտրել զբարին. իսկ ես վար-

եալ անմտութեամբ՝ յօժարեցայ ի չարին։ Ամբարձեր զիս ի նմանութիւն աստուածութեանդ քո անձնիշխան կամօք, և ես ծառայ եղեալ կըրից մարմնոյս հաւասարեցայ անասնոց անբանից։ Թողի ըզլոյս հրամանաց քոց՝ զոր ետուր ինձ առաջնորդել նովաւ զգնացս ոտից իմոց ի ճանապարհ ուղիղ երկնից օթեւանին, և ես ընդ խաւար գնացեալ՝ անկայ ի խորխորատ անդնդեալի կորստեան վըրի։

Այլ դո՛ւ, մարդասէր և երկայնամիտ, մի՛ խափան բարկանար ինձ, և մի՛ ոխս պահեր յաւիտեան. զի ի քեզ անկայ

ես յարգանդէ, և դու ես Աստուած իմ և տէր։ Գթա՛ յիս ի գործս ձեռաց քոց, և նորոգեա՛ զխանգարեալ մեզօք պատկերս բարերարութեան քոյ ի ձեռն աստուածեղէն շընորհաց քոց։ Լուսաւորեա՛ զաչս մտաց իմոց ուղղել ըզշաւիղս իմ ի ճանապարհս օրինաց քոց։ Սանձակոծեա՛ զերկրաքարշ բաղձանս և զանբան կրից բռնութիւն երկիւղիւդ քովք սրբովք։ Վառեա՛ ըզհոգի իմ սիրով աստուածութեանդ քոյ՝ մատուցանել պատարագ օրհնութեան ըստ հաճոյից բարերարութեան քոյ։ Մի՛ թողուր զիս ի ձեռս թըշ-

նամբոյն փրկութեան իմոյ, որ հանդերձեալ է արկանել ի խաւարն արտաքին. այլ լե՛ր այցելու բարեգթութեամբ քով, և փրկեա՛ զիս։

Անկաւ բեկաւ զօրութիւն իմ ի մահաբեր հարուածոց հակառակորդին, եւ մէջք իմ կքեցան ի հող ի ծանրութենէ բեռանցս մեղաց. այլ դու ողորմած, յարո՛ զբազմամեղ անձն իմ, եւ զօրացո՛ զիս թօթափել զչարիս, եւ խոկալ զհրաման օրինաց քոց։ Հարայ ի թուննոյ աներեւոյթ վիշապին, եւ մահ անմեռ կայ առաջի իմ յամենայն ժամ. գթա՛ յիս, օրհնեալ և ամենողորմ, եւ մա-

տո՛ լինձ զդեղթափ ապաքինիչ երկնաձիր չնորհաց քոց, զի կեցից եւ փառաւորեցից զանճառ մարդասիրութիւն քո, այժմ եւ յանվախճան յաւիտեան. ամէն։





Աղաչեա՛ մայր Աստուծոյ զմիածին fո զՈրդի, զի շնորհեսցէ մեզ pus աւազակին զդրախտին փափկու-թիւն։

ՇԱԲԱԹ ԱՒՈՒՐ

ՍԱՂՄՈՍ Ա.ՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Տէր, լուր ազօթից իմոց: ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։ Լո՛ւր ինձ արդարութեամբ քով, եւ մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քումմ, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր ըզկեանս իմ. եւ նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ, եւ սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամենայն գործս քո, յարարածս ձեռաց քոց խորհեցայ, եւ համբարձի առ քեզ զձեռս իմ.

Անձ իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լո՛ւր ինձ, տէր, զի նուազեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո

յինէն. նմանիցիմ այնոցիկ ոյք իջանեն ի գուբ։

Լսելի արա՛ ինձ առաւօտու զողորմութիւնն քո, զի ես ի քեզ, տէր, յուսացայ։

Ծանոյց ինձ ճանապարհ յոր եւ գնացից, զի առ քեզ, տէր, համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց, տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո, տէր, կեցուսցես զիս արդարութեամբ

քով, հանցես ի նեղութենէ
զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատա-
կեա՛ զթշնամիս իմ, եւ կորո՛
զամենայն նեղիչս անձին իմոյ,
զի ես ծառայ քո եմ։

ՇԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ՂՅ. Համբառնամ աւր քեզ,
տէր, զաչս իմ, նայեա՛ յիս զը-
թութեամբդ քով, եւ ողորմեա։
Դու ես յոյս եւ ապաւէն իմ,
զերծո՛ զիս յորոգայթէ մեղաց,
եւ ողորմեա։
Ապրեցուցիչ իմ եւ փրկիչ իմ,

ապրեցո՛ զիս յորոգայթէ մե-
ղաց, եւ ողորմեա։

Բազմութեամբ յանցանօք
ծանրաբեռնեալ է անձն իմ.
միայնոյ քեզ մարդասիրի ա-
ղաչեմ. ողորմեա՛ ինձ, Աս-
տուած։
Իղձմամբ արտասուաց եւ հա-
ռաչանօք սրտի իմոյ անդադար
հայցեմ բազմամեղութեամբ.
քաւեա՛ զիս, Աստուած։
Բազմագութ մարդասէր, չնոր-
հեա՛ զթողութիւն իմոյ յան-
ցանաց, զի աւր քեզ միայն
պաղատիմ. քաւեա զիս, Աս-
տուած։
Աստուած մարդասէր, որ ըզ-

մաքսաւորն. արդարացուցեր
քաւեա՛ զիս զմեղաւորս։
Որ քաղցիւ հանդերձի քո ըզ-
մերձեցեալն ի քեզ բժշկեցեր.
քաւեա՛ զիս զմեղաւորս։
Որ բանիւ հրամանի քո զանդա-
մալոյծն առողջացուցեր. քաւ-
եա՛ զիս զմեղաւորս։

Որ զաղաղակ կնոջն այլազգւոյ
առ ընկալար. փրկիչ, մարդա-
սիրապէս, և զիս ապաչխա-
րութեան արա՛ արժանի զձայն
մեղուցելոյս ընդունող։
Որ հառաչմամբ ձայնի աղախ-
նոյն ոչ լռեցեր, փրկիչ ընդու-
նակ մեղաւորաց, և զիս ա-
պաչխարութեան արա՛ արժա-

նի զձայն մեղուցելոյս ընդու-
նող։
Որ զառաջնապարգեւի քո նըշ-
խար ոչ խնայեցեր ընձեռել
շանն հովուասիրի, եւ զիս ա-
պաչխարութեան արա՛ արժանի
զձայն մեղուցելոյս ընդունող։

Անկանիմ առաջի քո և խընդ-
րեմ զթողութիւն յանցանաց
իմոց, մի՛ անտես առներ, Հայր,
զաղաչանս իմ։
Աղաղակեմ որպէս մաքսա-
ւորն, և հեղում զարտասուս
իմ առաջի քո որպէս պոռ-
նիկն. մի՛ անտես առներ,
Հայր, զաղաչանս իմ։
Յաներևոյթ թշնամւոյն պար-

տեցայ, եւ ի գաղտնի նետից
բանսարկուին վիրաւորեցայ.
մի՛ անտես առներ, Հայր, զա-
ղաչանս իմ:

Անկանիմ առաջի քո, տէր.
բազմամեղիս ողորմեա:
Աղաղակեմ առ քեզ, փրկիչ,
քանանացւոյն ձայն. բազմա-
մեղիս ողորմեա:

Մաքսաւորին հառաչմամբ կար-
դամ առ քեզ, փրկիչ եւ բա-
րերար. բազմամեղիս ողոր-
մեա:

Ողորմեա՛ լինձ, Քրիստոս, ո-
ղորմութեամբդ քովմեծաւ, զի
կարօտ եմ ես չնորհի քոյ եւ

ողորմութեան. ողորմեա եւ
լո՛ւր լինձ բազմամեղիս:
Լո՛ւր, տէր, ձայնի ողբալոյս և
յաւազին պաղատանացս, որ
ամօթով կամ առաջի քո իմ
չարաչար վարուքս, ողորմեա՛
և լո՛ւր լինձ բազմամեղիս:
Ընկա՛լ, տէր, զաղաչանս իմ և
զհառաչանս սրտի իմոյ, որ ա-
ղաղակեմ որպէս կլինն քանա-
նանացի. ողորմեա՛ և լո՛ւր լինձ
բազմամեղիս.

Որ եկիր ի փրկութիւն
մարդկան ծննդեամբ կուսին
Մարիամու. եւ կենդանարար
քո յարութեամբդ հրաւիրեցեր
զմահացեալքս ի յարութիւն

անմահութեան, վասն որոյ ա-
ղաչանօք մօր քո կեցո՛ զմեզ,
վերկիչ:

Փառք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն
սրբոյ:

Որ անապական ծննդեամբդ
քով լուծեր զերկունս նախա-
մօրն. Մարիա՛մ մայր Աստու-
ծոյ, բարեխօսեա՛ առ միածին
Որդին լուծանել զկապանս մե-
ղաց մերոց, և աղաչեա՛ փըր-
կել զանձինս մեր ի փորձու-
թենէ:

Այժմ և ժըղտ և յաւիտեան յաւի-
տենից, ամէն:

Բանն անեղ համագոյ որ ընդ
հօր և սուրբ հոգւոյն երևեալ
ի յերկրի պայծառացան արա-
րածք հզօրին կարողութեամբ
և զմեզ վերագրեաց յորդե-
գրութեան չնորհս:

Ե՛կ. Քրիստոս Աստուած՝
յոյս ապաչխարողաց, չնոր-
հեա՛ զթողութիւն բազում
յանցանաց իմոց:
Առ քեզ բազմագութ, ապա-
ւինեալ կարգամք. մի՛ մերժեր
զմեզ յողորմութենէ քումմէ:
Որպէս զաւազակն աղաղակեմ
առ քեզ, յիշեա՛ և զիս, տէր,
ի քում յարքայութեանդ:

Ջմեղս իմ խոստովան լինիմ առ քեզ, Քրիստոս, որ միայնդ ես բազմագութ թողութեամբ, ողորմեա՛ լինձ, Աստուած։

Դու, տէր, որ ճշմարտութեանց ես սիրող, և քննես զծածուկս գաղտնեաց սրտի իմոյ. ողորմեա՛ լինձ, Աստուած։

Տա՛ր լինձ ցնծութիւն փրկութեան, և հոգւով տէրութեանդ քոյ հաստատեա՛ զիս. եւ ողորմեա՛ լինձ, Աստուած։

Ալիք յանցանաց զիս ալեկոծեն, եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեն։
Արդ զի՛նչ արարից մեղուցեալ

անձամբս, որ չեմ ապրելոց յահագին հրոյն։
Մեղա՛յ քեզ, Քրիստոս որդի Աստուծոյ. չնորհեա՛ զթողութիւն բազում յանցանաց իմոց։

Տէր, որ ի մէջ լերինն ազբերացուցեր զջուրն ի վիմէն։ Տէր, ի սրտէ իմմէ հա՛ն լինձ արտասուս ապաշխարութեան։ Զի կեցից եւ ապաշխարութեամբ ապրեցայց ի հանդերձեալ քոց դատաստանաց։

Մեղուցեալ անձամբ կարդամ առ քեզ, Հայր երկնաւոր, օգնեա՛ լինձ ի նեղութեանս՝ որ մեղօքս եմ մեռեալ, օգնեա՛ լինձ։

Վիրաւորեցայ ես յաներևոյթ թշնամւոյն· բժի՛շկ հիւանդաց, բժշկեա՛ զիս զհիւանդութիւնըս, որ մեղօքս եմ մեռեալ. օգնեա՛ ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ, խնդրող գերելոց, խնդրեա՛ զիս զմոլորեալս, որ մեղօքս եմ մեռեալ. օգնեա՛ ինձ։

Մեղա՛յ քեզ, տէր, քաւեա՛ զիս, և ողորմեա՛ ինձ, Աստուած։

Ոչխար եմ բանաւոր հօտի քոյ, և առ քեզ ապաւինիմ, հովիւ բարի. խնդրեա՛ զիս զմոլորեալս, և ողորմեա՛ ինձ, Աստուած։

Ի ծովու մեղաց ալէկոծեալ եմ՝ և առ քեզ աղաղակեմ, նաւապետ բարի. փրկեա՛ զիս ի վըտանգէս, և ողորմեա՛ ինձ, Աստուած։

Վասն որոյ աղաչեա՛, մայր Աստուծոյ Մարիա՛մ, զմիածին քո զՈրդին, զի չնորհեսցէ ըստ աւազակին ժառանգել վերըստին մեզ զդրախտին վայելչութիւն։

Փառք հօր եւ որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Ցնծա, Մարիա՛մ, արեգականն արդարութեան արևելք. և ա-

զաչեաւ զառ ի քէն զծնեալն Աստուած վասն մեր, զի դարձուսցէ վերստին զմեզ ի զբաղխին ժառանգութիւն:

Այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից, ամէն:

Ցաղթող զօրութեամբ խաչի քո պահեա՛ զմեզ, Քրիստոս Աստուած. որ տարածեցեր զձեռս քո ի նմա, եւ լուծեր զկընիք դատապարտութեան յանցանաց մերոց՝ ապրեցուցանել զմեզ ի պատրանաց թշնամւոյն:

Ի խորոց սրտից խոսք՝ ընդ Աստուծոյ

ԲԱՆ ԽԷ.

Ա. Եւ արդ՝ զինչ զոյ ասել ամաչեցեալոյս յերեսաց մեծիդ ահաւորութենէ, բայց եթէ համրանալ, և հող ի բերան եղեալ լռել ի սրտի, ըստ մարգարէութեանն խրատու, ահա ի բարւոյն կարկառեալ ի յոյս: Իսկ թէ զփականս չարժողութեան չբմանցս բացից, բռնադատեցից՝ խօսել կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնակաւն եղերերգութեանց լացեալ բազմութեան խէթ մատցըս յառաջադրէ:

Բ. Եւ արդ՝ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ կամաւ առ լմահ՝ զնորին գոչումն երկրորդեցից և ես ընդ նմին. մեղա՛յ, տէր, մեղայ, և անօրէնութեանց իմոց լինձէն վկայեմ: Հիւսեալ ընդ նմին զբանս յիսներորդի սաղմոսին, անթիւս գրեմ զպատուոյս սակ անձինս մեղանաց՝ քան զհիւղ երկրի հողմահոս փոշւոյ ընդ օդս ամենայն տարածեցելոյ:

Գ. Մեղայ յերկինս եւ առաջի քո, ընդ անառակ որդւոյն պատկառեցելոյ՝ հայրենի գթոյդ վերստին դարձեալ՝ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն աղերսանաց արտօսրա-

ծին ողբովք գոչման՝ ի տխուր դէմս մատուցեալ առաջի քո տարածանեմ: Հա՛յր գթութեանց, Աստուած բոլորից, չեմ արժանի կոչիլ, եւ ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապաբան վարձկան: Ընկալ զսովեալս տարապրական, պարտականս վճառուց. և զցաւ քաղցոյս լլկանաց նեղելոյս նուաղեցելոյս՝ կենաց քոյ հացիւդ բըժըշկեացես:

Լե՛ր ընդ առաջ քո ողորմութեամբդ՝ ի սկզբնաւորս ապաւինութեան. զգեցո՛, զթած և անխտակալ, անօրինեալս մերպապարտի զնախակապուտ

հանդերձին ծածկոյթ. աւանդակորոյս ձեռացս աղտեղեալ մեղօք՝ զկնիք մատանւոյն հաստատութեան ամէնառատ կամօք մատուսցես. զգարշապարացս թշուառութիւն մերկութեան ոտից՝ պատապարութեամբ աւետարանական համբաւերարկու ոտից կօշկաց եւ յօձին թիւնից միշտ ամբացուսցես: Զգուարթակդ պատրաստ եղինդ երկնայնոյ, որ է միածին որդիդ քո օրհնեալ, խոնարհս մարդասիրութեամբ՝ կարօտեալոյս բարեացն ուրախութեամբ. որ մատուցեալ միշտ և անպակաս ինձ յերջանկութեան յարատեւ զենեալ ի սպանդարանի

անթիւ սեղանոց անսպառութեամբ՝ բոլոր յամենեսին եւ բնաւ յամենայնում, էութեամբ յերկինս և խոհութեամբ ի ըստորինս, աննուազ մարդկութեամբ՝ և անթերի աստուածութեամբ փչրեալ՝ և բաշխի ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ ի նոյն մարմին իւրում գլխոյ. քեզ փառք ընդ նմին՝ հայր ողորմութեան յաւիտեանս. ամէն:

Սղօթք առ Հայրն երկնաւոր, Յովհաննու Գառնեցւոյ ասացեալ:

Աստուած ամենակալ՝ անբաւելի և անճառելի, անաչ-

խատ բնութիւն և անտկարանալի զօրութիւն, որ յայսմ աւուր հանգեար յամենայն գործոց քոց՝ զորս արարեր. և օրհնեցեր զնա և սրբեցեր ամէնիմաստ խորհրդով և կանխագիտութեամբ քով:

Արդ, ես ծնունդս մեղաց, անկեալ կամ յախտ դառնագին ցաւոց հոգեկան վշասուց, զոր չնչեաց յիս հողմն մահածին իչխանին խաւարի, և ոչ գոյ ինձ հանգիստ գժնդակ տանջանացս: Այլ դու, ամենազօր, ապաքինեա՛ զանբժշկելի հիւանդութիւն հոգւոյս, աննահանջելի հրամանաւ քով, և հանգո՛ զիս յանհնարին տանջանացն՝ որով հասեալ կամ ի դրունս մահու, զի ամենայնի կարող ես և հզօր, և չի՛ք քեզ իր անհնարաւոր:

Սէր երկրաւորացս և բաղձանք հեշտալեաց գերեալ գերփեալ զմիտս իմ՝ չարաչար վշտօք ծառայեցուցանեն զիս հանապազօր ի զգալիս և ի նոսխս, և ոչ երբեք տան դուռ և դադար ոգի առնուլ, և խոկալ խորհել զելս ազատութեան յանտանելի կրից կարեաց և դառն աշխատութեանցս: Եւ ահա աղաչեմ զքեզ, բարեբար, որ փրկութիւնդ ես ամենայնի և գիւրիչ վշտաց նեղեալոց, տո՛ւր ինձ գտանել ելս ի

տառապանաց աստի յապատու-
թիւն մշտնջենաւոր կենաց և
անանց հանգստեան յորմէ մեր-
ժեալ են ցաւք և հեծութիւնք:

Սլիք յանցանաց յուզեալք
ի հողմոյ հրապուրանաց բան-
սարկուին բաղխեն զնաւակ
մարմնոյս չինուածոյ, և սպառ-
նան խորասոյզ առնել յան-
դունդս խաւարի անդերծ տան-
ջանաց: Իսկ դու, բարեգութ,
փրկեա՛ զիս ի վշտացս ամե-
նազօր աջովդ չնորհի, հասո՛
ինաւահանգիստն անքոյթ խա-
ղաղութեան երկնային յարկի,
ուր ամբարեալ պահին ամե-
նայն զանձք բարեաց և ան-
զբաղ բերկրութիւնք:

Մի՛ թողուր զիս, տէր Աս-
տուած իմ, ի կամս անձին ի-
մոյ, զի մի՛ ըստ յօժարութեան
ապականեալ բնութեանս ըս-
տորաքարշ եղէց յանցաւորս
և ի անտեսիս. և մի՛ ի բացեայ
առնիր չինէն նահանջելով ըզ-
նպաստս չնորհաց և ողորմու-
թեան քոյ վասն անօրէնու-
թեան իմոյ. այլ ըստ սովորա-
կան մարդասիրութեանդ քոյ ըս-
նայեա՛ յիս ի ստեղծուածս քո՝
որ առ քեզ աղաղակեմ կող-
կողագին հեծութեամբ:

Լո՛ւր լինձ, անոխակալ, գթա՛,
մարդասէր, ներեա՛, անչիշա-
չար, և ողորմեա՛ բազմամեղ
անձին իմոյ ըստ մեծի ողոր-

մութեան քում. արա՛ առ իս
նչան բարի ի փառս անուանդ
քում սրբոյ, և քաւեա՛ զմե-
ղըս իմ ի ձեռն ամենաբաւա-
կան չնորհաց քոց. զի քաղցր
ես դո՛ւ, տէր, եւ զթութիւն
քո անչափ:


Աղաչեմ զքեզ, մարդասէր,
մի՛ մատներ զիս ի ձեռս դժոխ-
որովայն գազանաց, որ բաց-
եալ զկոկորդս իւրեանց՝ խըն-
դրեն կեղեքել զհոգի իմ ա-
մենածախ ժանեօք. հա՛ր ըզ-
նոսա զօրութեամբ բազկի քոյ
ի հարուածս անողջանալիս, և
զերծո՛ զիս զծառայս քո ի
մահաբեր վտանգէս. զի դու
ես փրկութիւն իմ և կեանք,

առ ի քէն է օգնութիւնն իմ
յամենայն ժամ:

Տարակուսեալ վարանիմ
վասն բազմութեան մեղաց ի-
մոց, յորժամ նկարեմ առաջի
աչաց տեսութեան մտացս ըզ-
դատաստանն անաչառ, զմեր-
կապարանոց յանդիմանութիւ-
նըն ամենայն գործոց, զպա-
տիժն սոսկալի մեղաւորաց և
անդարձից, զհուրն անշէջ,
զորդնն անմահ, եւ զդատա-
պարտութիւնն յաւիտենական:

Եւ քանզի ոչ կարեմ լմուա
զօրութեամբ թօթափել յան-
ձնէ զբեռինս մեղաց, և ապա-
տիլ յորժանահաս պատժոցս,
վասն որոյ անձամբ բեկելով

պուչեմ առ քեզ, մարդասէր,
պործակից լե՛ր ինձ ի դառնալ
յետս յանօրէնութեան գնացից
իմոց՝ եւ պիմել առ քեզ յամե-
նայն պօրութենէ եւ ի մտաց,
եւ սրտառուչ պղչմամբ գտա-
նել պթողութիւն եւ պշնորհս,
եւ ողորմութեամբ քով արժա-
նաւորիլ ընդ սուրբս քո մըչ-
տընջենաւոր հանդստեան յար-
քայութեան քումմ յերկինս. եւ
ընդ նոսին փառաւորել անըչ-
ափ պոհաբանութեամբ զա-
մենապօր տէրութիւն քո յա-
մենայն յաւիտեանս. ամէն։



Անապատեք ճանճանչ, ղոդ Աստուածածնա
Ահա ըհէ յերուսն աւյրուսուբ պատանիէ։

Ա Ղ Օ Թ Ք

ՀԱՆԳՍՏԱՆ ԹԱՄՈՒՆ

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր։ Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ի չարէ։ Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն։

Աւուգեա՛, տէր, զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ, և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո։

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած Աստուած իմ։

Սրդ՝ ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ես առ խաղաղութիւնն զիրեր աղաչեացուք, ընկալ, ելից և ողորմեա։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եկեսցէ ի վերայ իմ ողորմութիւն քո, տէր, և փրկութիւն քո ըստ բանի քումմ։

Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք. զի ես ի բանս քո յուսացայ։

Մի՛ ի բացեայ առներ ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան

մինչև յոյժ, զի չիրաւունս քո
յուսացայ։
Պահեցի զօրէնս քո յամենայն
ժամ, յաւիտեան՝ եւ յաւի-
տեանս յաւիտենից։
Ընդայն ես յանդորրու. զի զպա-
տուիրանս քո խնդրեցի։
Խօսէի զվկայութիւնս քո ա-
ռաջի թագաւորաց, և ո՛չ ա-
մաչէի։
Ուրհէի ի պատուիրանս քո
զոր սիրեցի։
Համբարձի զձեռս իմ ի պա-
տուիրանս քո՝ զոր սիրեցի, և
խորհէի յարդարութեան քումմ։
Ցիշեա՛ զբան ծառայի քո յոր և
յուսացուցեր զիս։
Սա մխիթարեսցէ զիս ի խո-

նարհութեան իմում. զի բան
քո կեցոյց զիս։
Ամբարտաւանք անիրաւեցան
յիս յոյժ, այլ յօրինաց քոց
ես ոչ խոտորեցայ։
Ցիշեցի զիրաւունս քո յաւի-
տենից, տէր, և մխիթարեցայ։
Տրտմութիւն կալաւ զիս ի մե-
ղաւորաց, և ոյք թողին զօ-
րէնս քո։
Գովելի են ինձ իրաւունք քո
ի տեղւոջ պանդխտութեան ի-
մոյ։
Ցիշեցի ի գիշերի զանուն քո,
տէր. և պահեցի զօրէնս քո։
Սա եղեւ ինձ ճանապարհ ի
կեանս, զի զարդարութիւնս քո
խնդրեցի։

Զանօրէնս առեալ եւ զօրէնս քո սիրեցի։
Օգնական եւ փրկիչ իմ ես դու, եւ ես ի բանս քո յուսացայ։
Ի բաց եղերուք ինէն չարք. եւ քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ։
Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, եւ կեցո՛ զիս. եւ մի՛ յամօթ առներ զիս ի յուսոյ իմմէ։
Օգնեա՛ ինձ, և ապրեցո՛ զիս. եւ խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ։
Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբք եղեն յարդարութեանց քոց. զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա։
Ծանցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։
Բևեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։
Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո, տէր, ըստ բանի քում իմաստուն արա՛ զիս։
Մտցեն աղօթք իմ առաջի քո, տէր, և բանիւ քո փրկեա՛ զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Յանկացայ փրկութեան քումդ, տէր, եւ օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայ քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ։

Անդ անկցին ամենեքեան ոյք

գործեն զանօրէնութիւն, մերժեսցին և այլ մի՛ կարասցեն հաստատիլ։

Ես ի տէր յուսացայ, ցնծացայց եւ ուրախ եղէց յԱստուած փրկիչ իմ։

Տէր տէր ետ ինձ զօրութիւն և կացոյց զոտս իմ ի հաստատութեան. ի վերայ պարանոցի թշնամւոյն կացոյց զիս, եւ հանզոյց զիս երագ երագ։

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ։

Ասասցէ տեառն՝ ընդունող իմ ես. ապաւէն իմ Աստուած, և ես յուսամ ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ

որսողին, և ի բանից խառվու-
թենէ։
Ի թիկնամէջս իւր ընկալցի ըզ-
քեզ. ի հովանի թեւոց նորա
յուսասցիս։
Որպէս զէն շուրջ եղիցի զքեզ
ճշմարտութիւն նորա։
Ոչ երկիցես դու յերկիւղէ գի-
շերի, և ոչ ի նետէ՝ որ թռչի
ի տուէ։
Ցիրէ որ չրջի ի խաւարի, ի
պայթակղութենէ դիւին ի հա-
սարակ աւուր։
Անկցին ի կողմանէ քումմէ
հազարք և բիւրք ընդ աջմէ
քումմէ, որ առ քեզ լինչ ոչ
մերձեսցին։
Բայց միայն աչօք քովք հա-

յեսցիս դու, եւ վհատուցումն
մեղաւորաց տեսցես. զի դու,
տէր, յոյս իմ ես։
Զբարձրեալն արարեր քեզ ա-
պաւէն. զի ոչ հասցեն առ քեզ
չարք, և տանջանք մի՛ մեր-
ձեսցին ի յարկս քո։
Հրեշտակաց իւրոց պատուի-
րեալ է վասն քո, ի պահել
զքեզ յամենայն ճանապարհս
քո։
Ի բազուկս իւրեանց ընկալցին
զքեզ, զի մի՛ երբեք հարցես
զքարի զոտն քո։
Ի վերայ լժիւ և քարբիւ զը-
նասցես դու. և առ ոտն կո-
խեսցես զառիւծն և զվիշապն։
Քանզի յիս յուսացաւ, և փըր-

կեցից զնա. հովանի եղեց նը-
մա, զի ծանեաւ զանուն իմ:
կարդասցէ առ իս՝ և ես լուայց
նմա. և առ նմա եղէց ի նե-
ղութեան:
Փրկեցից և փառաւոր արարից
զնա. երկայն աւուրբք լցու-
ցից, և ցուցից նմա զփրկու-
թիւն իմ:
Առ քեզ, տէր, հանբարձի զաչս
իմ, որ բնակեալդ ես ի յեր-
կինս:
Որպէս աչք ծառայի ի ձեռն
տեառն իւրոյ. եւ որպէս աչք
աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ:
Այնպէս են աչք մեր առ քեզ,
տէր Աստուած մեր. մինչև ո-
ղորմեսցիս ի վերայ մեր:

Ողորմեա՛ մեզ, տէր, ողորմեա՛
մեզ. զի բազում լցաք ար-
համարհանօք:
Եւս առաւել լցան անձինք մեր
նախատանօք, որք նախատէին
զմեզ. և արհամարհանօք ամ-
բարտաւանից:
Աստուած, յանուան քում կեց
ցո՛ զիս, և ի զօրութեան քում
իրաւ արա՛ զնձ:
Աստուած լուր աղօթից իմոց.
ունկն դիր բանից բերանոյ ի-
մոյ:
Օտարք յարեան ի վերայ իմ.
և հզօրք խնդրեցին զանձն իմ,
եւ ոչ համարեցան զքեզ Աս-
տուած առաջի իւրեանց:
Ահա Աստուած օգնական իմ,

և տէր ընդունող հոգւոյ իմոյ։
Ի դարձուցանել զչարն ի թըշ-
նամիս իմ, ճշմարտութեամբ
քով սատակեա՛ զնոսա։
Ես կամօվք իմովք պատարագս
մատուցից քեզ. եւ խոնա-
վան եղէց անուան քում, տէր,
զի բարի է։
Ցամենայն նեղութենէ իմմէ
փրկեցեր զիս, և ի թշնամիս
իմ եւես ակն իմ։
Օրհնեալ ես դու, տէր Աստուած
հարցն մերոց. գովեալ և առա-
ւել բարձրացեալ յաւիտեան։
Եւ օրհնեալ է անուն սուրբ
փառաց քոց. գովեալ և առա-
ւել բարձրացեալ յաւիտեան։
Օրհնեալ ես ի տաճարի փա-

ռաց սրբութեան քոյ. գովեալ
և առաւել բարձրացեալ յաւի-
տեան։
Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ
արքայութեան քոյ. գովեալ
և առաւել բարձրացեալ յա-
ւիտեան։
Օրհնեալ ես որ նստիս ի քրով-
բէս և հայիս յանդունդս, գով-
եալ և առաւել բարձրացեալ
յաւիտեան։
Օրհնեալ ես ի վերայ հաստա-
տութեան երկնից. գովեալ և
առաւել բարձրացեալ յաւի-
տեան։
Օրհնեցէ՛ք զԱստուած ի սըր-
բութեան նորա. օրհնեցէ՛ք զե-

նա. ի հաստատութեան՝ ի զօ-
րութեան նորա։
Օրհնեցէք զնա ի զօրութեան
նորա. օրհնեցէք զնա ի բա-
զում մեծութեան նորա։
Օրհնեցէք զնա ի ձայն օրհնու-
թեան. օրհնեցէք զնա սաղմո-
սիւք և օրհնութեամբ։
Օրհնեցէք զնա ցնծութեամբ,
գովեցէք զնա ուրախութեամբ։
Օրհնեցէք զնա ի բանս քաղ-
ցրը, գովեցէք զնա ի բարբառ
լսելի։
Օրհնեցէք զնա ի ձայն գոհու-
թեան. ամենայն հոգի՛ք օրհ-
նեցէք զէր։
Արդ արձակեա՛ զծառայս քո,
տէր, ըստ բանի քում ի խա-

ղաղութիւն, զի տեսին աչք
իմ զփրկութիւն քո՝ զոր պատ-
րաստեցեր առաջի ամենայն
ժողովրդոց։
Լոյս յայտնեցար հեթանոսաց,
եւ փառք ժողովրդեան քում
իսրայելի։
Զգեցեր զձեռն քո՝ եւ փըր-
կեաց զիս աջ քո, և տէր հա-
տուսցէ ընդ իմ։
Տէր, ողորմութիւն քո յաւի-
տեան. զգործս ձեռաց քոց
մի՛ անտես առներ։
Տէր, հա՛ն ի բանտէ զանձն իմ.
գոհանամ զանուանէ քումմէ։
Եւ քեզ սպասեն արդարք՝ մին-
չեւ հատուսցես։
Մեծացուսցէ անձն իմ զտէր,

եւ ցնծասցէ հոգի իմ Աստուածով փրկչաւ իմով։

Այլ արար ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրըն, և սուրբ է անուն նորա։

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց. արար զօրութիւն բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից, և քակեաց զգահս հզօրս յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց՝ զկատս եղից բարութեամբ, եւ

զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում, յիշելով զողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ Աբրահամու եւ զաւակի նորա յաւիտեան։

Տո՛ւր զօրութիւն ծառայի քոյ, կեցո՛ զորդի աղախնոյ քոյ, և արա՛ առ իս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու, տէր, օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Մաղմա ։

Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ, և ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ, թագաւո՛ր երկնաւոր. զբազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմ առ քեզ։ Որ երկայնամիտ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զապաւինեալս ի քեզ. այլ պահեա՛ պատուական և սուրբ խաչիւ քով ի խաղաղութեան։

Փաթոց։

Աղաչեսցուք զամենակալն Աստուած, եւ խնդրեսցուք ի նմանէ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան, որ եւ

կեալ պահեսցէ զմեզ յերկիւղական դիւերից, ի դիւական խռովութենէ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր՝ մինչև ի կատարումն ժամանակի ամաց մերոց։ Ամենակալ տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա՛։

Զհանգիստ դիւերից խաղաղութեամբ անցուցանել՝ հաւատով ի տեառնէ խնդրեսցուք։

Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի տեառնէ խնդրեսցուք։

Զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց ի տեառնէ խնդրեսցուք։

Զօրբոյ խաչին մեծ եւ կարող

զօրութիւնն յօդնութիւնն ան-
ձանց մերոց ի տեառնէ խընդ-
րեսցուք:
Եւ ևս միաբան վասն ճշմարիտ
և սուրբ հաւատոյս մերոյ՝ ըզ-
տէր աղաչեսցուք:
Զանձինս մեր եւ զմիմեանս
տեառն Աստուծոյ ամենակա-
լին յանձն արասցուք:
Ողորմեա՛ մեզ տէր Աստը-
ւած մեր, ըստ մեծի ողոր-
մութեան քումմ. ասասցուք ա-
մենեքեան միաբանութեամբ:

Ա. պօՂ+:

Տէր Աստուած մեր, զու
պահեա՛ զմեզ խաղաղու-
թեամբ ի գիշերիս յայսմիկ եւ

ցյամենայն ժամանակի: Ընդ
սուրբ երկիւղ քո բեւեռեալ
պահեա՛ զմիտս և զխորհուրդս
մեր: Որպէս զի յամենայն ժամ
քև պահպանեալ լիցուք յորո-
գայթից թշնամւոյն: Եւ քեզ
հանցուք զօրհնութիւն և զփա-
ռս հօր և որդւոյ եւ հոգւոյդ
սրբոյ. այժմ և միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն.
Աստուծոյ երկրպագեցուք:

Հրեշտակի խաղաղութեան
յանձն արա՛ զանձինս մեր, տէր
զօրութեանց. որ եկեալ պա-
հեսցէ զմեզ անխռովս ի տուէ
եւ ի գիշերի՝ յարթնութեան

եւ ի հանգստեան մերում, զի դու ես արարիչ լուսոյ, եւ հաստիչ գիշերի: Եւ այժմ աղաչեմք զքեզ, տէր Աստուած մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա՛ խաղաղութեամբ անցուցանել, եւ հասանել ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն եւ ի փառաբանութիւն ամենասուրբ երրորդութեանդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս Դ.

Խաղաղութեամբ յայս եւ ի սոյն ննջեսցուք եւ զարթիցուք. զի դու, տէր, միայն

առանձինն յուսով քով բնակեցուցեր զմեզ:

Ի կարդալ իմում լուար ինձ, Աստուած, ըստ արդարութեան, ի նեղութենէ ինձ անդորր արարեր. ողորմեա՛ ինձ և լո՛ւր աղօթից իմոց:

Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խստասիրտք, ընդե՞ր սիրէք զնանրութիւն. և խնդրէք ըզստուածութիւն:

Ծաներ՛ուք զի սքանչելիս արար տէր սրբոյ իւրում. եւ տէր լսիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:

Բարկանայք և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք:

Մատուցէք պատարագս արդարութեան. և յուսացարո՛ւք ի տէր։

Բազումք ասէին թէ ո՛ ցուցցէ մեզ զբարութիւն տեառն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Ի պտղոյ ցորենոյ գինւոյ եւ ձիթոյ խրեանց լցուցեր զմեզ նոսա։

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեացուք և զարթիցուք. զի դու, տէր, միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ածնեցուն։

Եւ ըստ հոգւոյդ հում։

Երկիւղածութեամբ լուարուի։

Սբբոյ աւետարանիս Յհաւսէ Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Փառք քեզ, տէր Աստուած մեր։

Պատմութիւն։

Ասէ Աստուած։

Տէրն ծեր Յհաւս Քրիստոս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հատան ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ

զնա. և որ ատեայ զանձն իւր յաչխարհիս յայտնիկ, ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։

Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. եւ ուր եմն եմ անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա հայրն իմ։

Քաջող։

Փառք եզ տէր Աստուած մեր։

Սուրբ խաչիս աղաչեսցուք զտէր, զի սովաւ փրկեսցէ ըզմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ չնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա՛։

Աղօթ։

Պահպանեա՛ զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քով ի խաղաղութեան. փըրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել ըզքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս։

Անկանիմ առաջի քո, սուրբ Աստուածածին, եւ աղաչեմ

զանարատ զկոյսդ. բարեխօսեա՛ վասն անձանց մերոց, և աղաչեա՛ զմիածինն որդիդ, փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

Մաղթանք զօրաւորք առիւաւոց գիշերայնոյ, ասացեալ արբոյն Գրիգորի Նարեկացւոյ։

ԲՈՆ ԻԲ.

Ի խառոց արտից խօսք ընդ Աստուծոյ։

Ընկալ քաղցրութեամբ, տէր Աստուած հզօր, զգառնացողիս զաղաչանս. մատիր զթութեամբ առ պատկառեալս զմօք. փարատեա՛, ամենազօր-

զե, զամօթական տխրութիւնըս. բա՛րձ յինէն, ողորմած, զանըմբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛, հնարաւոր, ըզմահացու կրթութիւնս. աւարեա՛, միչտ յաղթող, զխաբողին հաճութիւնս. բացատրեա՛, վերնայլին, զմոլելոյն մառախուղ. կնքեա՛, կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս. ցրուեա՛, ծածկատես, զբմբըռնողին չար գտմունս. խորտակեա՛, անքնին, զմարտողին դիմեցմունս։ Տեառնազրեա՛ քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա՛ քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս, զծագրեա՛

քո արեամբդ զմուծ եմոց սեննեկիս. կերպացո զքո նըշանդ ի հետս ելից մաղթողիս. ամրացո՛ քո աչովդ զհանգըստեանս խչտի. մաքրեսցես ի հաղբից զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ արասցես զքո շընորհեալ չունչ մարմնոյս. կայցուսցես չրջափակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես ի դիմի ընդդէմ դիւացն դասուս: Տո՛ւր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց սրբուհւոյ Աստուածածնիդ և

ամենայն ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տեսութեանց՝ զգայարանացս խմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ՝ ի ծփական խառնուածեանց, կենցաղական զբաղմանց. անրջական երազոց. խօլականաց ցնորից. յիշատակաւ քո յուսոյդ՝ անվնասելի պաշտպանեալ: Եւ սփոփեալ վերստին ի ննջմանէ ծանրութեան՝ ամենազգաստ արթնութեամբ, հոգենորոգ զուարթութեամբ ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոյ՝ քեզ ամէնօրհնեալ թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց եր-

կնագումար խմբիւց երդակցեալ յերկինս աճաքել: Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք ընդ առիթս գրիգորի Նարեկացւոյ:

Բաց ևն.

ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի. հօրդ աստուածութեան անքննին ծնունդ. որ տիարանայ առ ի քէն և ո՛չ ինչ, որ ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քո վառաց,

հալին մեղք, հալածին դեւք. ջնջին յանցանք. խզին կապանք. խորտակին չղթայք. կենդանածնին մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութիւնք. տեղի տան տխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախնու խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մռայլն. սպառի աղջամուղջն. վերանայ մուրճն. գնայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիւնքն, եւ թագաւորէ ձեռն քո ամենակար քաւիչդ ամենայնի:

Որ ոչ եկիր կորուսանել զմար-

դկան ոգիս՝ այլ կեցուցանել. թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես յերկինի անճառ, եւ յերկրի անզնին. ի տարը գոյի, կւ յեզրս ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի եւ յամենայնի ամենայն լրմամբ, օրհնեալ ի բարձունս. եւ քեզ ընդ Հօր եւ Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։

Աղօթք հարկաւոր իւրաքանչիւր անձանց հաւատացելոց ի Քրիստոս, զոր արարեալ է սրբոյն Ներսէսի շնորհալւոյ՝ Հայոց Կաթուղիկոսի։

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ, Հայր և

Որդի և սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ, եւ երկիր պագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական սուրբ երրորդութիւն և մի աստուածութիւն, արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի. հալածեա՛ ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան, և լուսաւորեա՛ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս, եւ ընդունել ի քէն ըզխնդրուածս իմ. և ողորմեա։

Հայր երկնաւոր Աստուած ճըշ-
մարիտ, որ առաքեցեր զորդիդ
քո սիրելի ի խնդիր մոլորեալ
ոչխարին, մեզայ յերկինս եւ
առաջի քո. ընկա՛լ զիս որպէս
զանառակ որդին և զգեցո՛ ինձ
զպատմուճանն զառաջինն՝ զոր
մերկացայ մեղօք. եւ ողոր:
Որդի Աստուծոյ Աստուած ճըշ-
մարիտ, որ խոնարհեցար ի հայ-
րական ծոցոյ եւ առեր մար-
մին ի սրբոյ կուսէն Մարիա-
մայ վասն մերոյ փրկութեան.
խաչեցար, թաղեցար և յարեար
ի մեռելոց՝ և համբարձար փա-
ռօք առ Հայր, մեզայ յերկին-
նըս և առաջի քո. յիշեա՛ զիս
որպէս զաւազակն յորժամ գաս

արքայութեամբ քով. և ողոր:
Հոգի Աստուծոյ, Աստուած
ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան
և ի վերնատունն, և լուսաւո-
րեցեր զիս մկրտութեամբ
սուրբ աւազանին, մեզայ յեր-
կինս և առաջի քո. մաքրեա՛
զիս վերստին աստուածայն
հրով քով՝ որպէս հրեղէն լե-
զուօք սուրբ զառաքեալն. և
ողոր:
Անեղ բնութիւն, մեզայ քեզ
մտօք խոով, հոգւով և մար-
մնով խոով. մի՛ յիշեր զմեզս
իմ զառաջինս վասն անուանդ
քոյ սրբոյ. և ողոր:
Տեսող ամենայնի, մեզայ քեզ
խորհրդով բանիւ եւ գործով.

ջնջեա՛ զձեռագիրը յանցանաց
իմոց, և զրեա՛ զանուն իմ ի
գպրութեան կենաց. և ողոր։
Ինձով գաղտնեաց, մեղայ քեզ
կամաւ եւ ակամայ, գիտու-
թեամբ և անգիտութեամբ.
թողութիւն չնորհեա՛ մեղաւո-
րիս, զի ի ծննդենէ սուրբ ա-
ւազանին մինչև ցայսօր մե-
ղուցեալ եմ առաջի աստուա-
ծութեանդ քո զգայարանօք
իմովք, եւ ամենայն անգա-
մօք մարմնոյս. և ողոր։
Ամենախնամ տէ՛ր, զիր պահա-
պան աչաց իմոց զերկիւղ քո
սուրբ ոչ ևս հայել յայրատ, և
ականջաց իմոց՝ ոչ ախորժել
լսել զբանս չարութեան, եւ

բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զա-
տութիւն, և սրտի իմոյ՝ ոչ
խորհել զչարութիւն, և ձեռաց
իմոց՝ ոչ գործել զանիրաւու-
թիւն, և ոտից իմոց՝ ոչ գը-
նալ ի ճանապարհս անօրէնու-
թեան. այլ ուղղեա՛ զչար-
ժուման սոցա լինել միշտ ըստ
պատուիրանաց քոց յամենայ-
նի. և ողոր։
Հուր կենդանի, Քրիստո՛ս,
զհուր սիրոյ քո զոր արկեր
յերկիր՝ բորբոքեա՛ յանձն իմ,
զի այրեսցէ զաղտ հոգւոյ ի-
մոյ, եւ սրբեսցէ զխղճմ-
տացս իմոց, և մաքրեսցէ ըզ-
մեղս մարմնոյ իմոյ, և վա-
ռեսցէ զլոյս գիտութեան քոյ
ի սրտի իմում, և ողոր։

Իմաստութիւն Հօր՝ Յիսո՛ւս,
տո՛ւր ինձ իմաստութիւն, ըզ-
բարիս խորհել և խօսել և գոր-
ծել առաջի քո յամենայն ժամ.
ի չար խորհրդոց ի բանից և ի
գործոց փրկեա՛ զիս. և ողոր:
Կամեցող բարեաց, տէ՛ր կա-
մարար, մի՛ թողուր զիս ի կա-
մըս անձին իմոյ գնալ. այլ
առաջնորդեա՛ ինձ լինել միշտ
ըստ կամաց քոց բարեսիրաց.

և ողոր:

Սրբա՛յ երկնաւոր, տո՛ւր ինձ
զարքայութիւն քո՝ զոր խոս-
տացար սիրելեաց քոց. և զօ-
րացո՛ զսիրտ իմ ատել զմե-
ղըս, և սիրել զքեզ միայն, և
առնել զկամս քո. եւ ողոր:

Ինամա՛ղ արարածոց՝ պահեա՛
նչանաւ խաչի քո զհոգի եւ
զմարմին իմ՝ ի պատարանաց
մեղաց, ի փորձութեանց դի-
ւաց, և ի մարդոց անիրաւաց,
և յամենայն վտանգից հոգւոյ
և մարմնոյ. և ողոր:
Պահապան ամենայնի, Քրիս-
տոս, աչ քո հովանի լիցի ի վե-
րայ իմ՝ ի տուէ և ի գիշերի.
ինստել ի տան, ի գնալ ի ճա-
նապարհի, ի ննջել և ի յառնել,
զի մի՛ երբեք ասասանեցայց.

և ողոր:

Աստուա՛ծ իմ, որ բանաս ըզ-
ձեռն քո, և լնուս զամենայն
արարածս ողորմութեամբ քով,
քեզ յանձն առնեմ զանձն իմ,

զու հոգա՛ եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչեւ յաւիտեան. և ողոր։

Դարձուցիչ մոլորեցելոց, զարձո զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն. և քեւեռեա՛ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենին, եւ զսէր արքայութեանն, զի զղջացայց ի մեղաց և գործեցից զարդարութիւն.

և ողոր։

Աղբիւր անմահութեան, աղբեւրացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարհութեան որպէս պոռնկին, զի լուացից ըզմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. եւ ողոր։

Պարգեւիչ ողորմութեան, պարգեւեա՛ ինձ ուղղափառ հաւատով, և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան քոյ հաղորդութեամբ գալ առ քեզ.

և ողոր։

Բարերար տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցին՝ որ են ի ներքոյ երկնից. և ողոր։

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն,

և հանդչել յուսով բարեաց յո-
թևանս արդարոց՝ մինչև յօր
մեծի գալստեան քոյ. և ողոր:
Դատաւոր արդար, յորժամ
գաս փառօք Հօր դատել զկեն-
դանիս և զմեռեալս, մի՛ մը-
տաներ ի դատաստան ընդ ծա-
ռայի քումմ. այլ փրկեա՛ զիս
ի յաւիտենական հրոյն, և լը-
սելի արա՛ ինձ զերանաւէտ
կոչումն արդարոց յերկինից ար-
քայութիւնդ. և ողոր:
Ամէնողորմ տէր, ողորմեա՛ ա-
մենայն հաւատացելոց ի քեզ,
իմոց և օտարաց, ծանօթից և
անծանօթից, կենդանեաց եւ
մեռելոց. չնորհեա՛ եւ թչնա-
մեաց իմոց և ատելեաց զթո-

ղութիւն որ առիս յանցանացն,
եւ դարձո՛ զնոսա ի չարեացն
զոր ունին վասն իմ, զի ողոր-
մութեան քումմ արժանի եղի-
ցեն. և ողոր:
Փառաւորեալ տէր, ընկալ զա-
ղաչանս ծառայիս քոյ, և կա-
տարեա՛ ի բարի զխնդրուածս
իմ, բարեխօսութեամբ սրբու-
հոյ Աստուածածնին, և Յով-
հաննու Մկրտչին, եւ սրբոյն
Ստեփաննոսի նախավկային, և
սրբոյն Գրիգորի մերոյ լուսա-
ւորչին, եւ սրբոց առաքելոց,
մարգարէից, վարդապետաց,
մարտիրոսաց, հայրապետաց,
ճգնաւորաց, կուսանաց, եւ
ամենայն սրբոց քոց երկնա-

ւորաց եւ երկրաւորաց: Եւ քեզ փա՛ռք եւ երկրպագուԹիւն անբաժանելի սուրբը երրորդուԹեանդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՄաղԹանի:

Վասն սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսուԹեանն, տէր, ընկալ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ:

Քաջող:

Սուրբը ՚ի Աստուածածնէն եւ ՚ի ամենայն սուրբս բարեխօս արասցուք առ հայր ի յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի եւ

զթացեալ կեցուսցէ զարարածս իւր: Ամենակալ տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա՛:

ԱպէՂ:

Ընկա՛լ, տէր, զաղաչանս մեր, բարեխօսուԹեամբ սուրբ Աստուածածնին՝ անարատ ծնողի միածնի որդւոյ քոյ, և աղաչանօք ամենայն սրբոց քոց, եւ որոց այսօր է յիշատակ (կամ եւ աւուրս չնորհիւ): Լո՛ւր մեզ, տէր, և ողորմեա՛, ներեա՛ քաւեա՛ և թող՛ զմեղս մեր: Արժանաւորեա՛ զոհուԹեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ եւ ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս ամէն։

Հայր մեր որ յերկինս։

Մաղթանք։

Զհանգստեան զաղօթս եւ զաղաչանս ընկալ, մարգասէր Աստուած, ի հաճոյս բարերար կամաց քոց. մեր մեզաց եւ բազում յանցանացն թողութիւն շնորհեա՛. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Փառք քեզ, տէր Աստուած մեր, որ պարգեւեցեր զօրս զայս բարեաւ եւ խաղաղութեամբ անցուցանել։

Մարգասէր Աստուած, զաղաչակայ զիշերս որ ի վերայ մեր գալոց է, ի մեզաց փրկեա՛, ի չարեաց ազատեա՛, և ի գործս բարիս առաջնորդեա՛։ Առաւօտու օրհնութեանցն եւ փառաբանութեանցն արժանի՛ արա՛ զամենայն հաւատացեալս անուանդ քումմ արբոյ, և պահեա՛ ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր, տուր զքո խաղաղութիւնդ ամենայն աշխարհի, բա՛րձ զցասումն եւ զպատուհասն ի յարարածոցս։

Ողորմեա՛ հարց և եղբարց մերոց՝ կենդանեաց և հանգուցեալոց։

Ողորմեա՛ զեկեղեցի՛ չինողաց,

երախտաւորաց, պաղատուիլ, սպասաւորաց, և այնոցիկ որք ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցւոյ են հանգուցեալ։

Տէր Աստուած, օգնեա՛ թագաւորացն քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին՝ պահելով ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր, պահեա՛ զառաջնորդս եւ զեղբայրութիւնս մեր ամբողջ և անխռով ի կամս ողորմութեան քո։

Նշանաւ սուրբ և պատուական խաչիւ քով՝ հալածեա՛ զեբևելի և զաներևոյթ թշնամին ի սահմանաց մերոց և ի բնակութենէս մերմէ։

Փրկեա՛ զմեզ ի հրոյն յաւիտենից, և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Օրհնեալք եղերուք ի չնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք, հանգերուք խաղաղութեամբ, և տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Առ սուրբ Աստուածածինն, եւ առ ամենայն սուրբսն Աստուածոյ. յես եկեսցիին ասա՛։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ամենօրհնեալ
զպաղատանըս մեր ընկա՛լ,
ի ճանգստեան ժամուս հասեալ
առ Քեզ գոչեմք անձամբ թախծեալ։

Բանին կենաց բարձող եղեր,
զԱստուած մարմնով պարագրեցեր,
առ բանն Աստուած բարեխօս լե՛ր
ի փորձանաց զմեզ փրկել։

Գովեալ ես դու փայտ փրկութեան,
ամէնօրհնեալ յաղթող նըշան.
ի գիշերիս սուրբ տաղաւարական
ծագեա՛ մեզ զլոյսդ արփիական։

Դողան ի էէն գուգիք խաւարին,
ամենաճրաշ զէն առարչին.
զմեզ պահեա շնորհիւ ոյին
ի գիշերիս աղջամղջին։

Երկոտասան սուրբ առաքեալք,
եօթանասուն աշակերտեալք,
յանճառ լուսոյն լոյս անուանեալք,
որոյն կենաց պտղաբերեալք։

Զնեզ աղաչեմք արտասուագին,
եւ պաղատիմք կողկողագին,
վանիչ լերուք դիւաց գնդին
ոչ մերձենալ առ մեզ չարին։

Էին ընտրեալք բանին կենաց,
գումարք դասուց տեսանողաց,
որք զապագայն ժամանակաց
զուշակեցիք հոգւով շնորհաց։

Ընդ մեզ լերուք աղօթակից
որք Աստուծոյ էք խօսակից,
փրկել զմեզ ի վտանգից
ի յարքունեաեան եւ յերազից։

Թագաւորին երկնաւորի
երկրպագող ի յարգանդի,
մեծ Կարապետ սուրբ ամլորդի,
միչնորդ կենաց եւ օրինի։

Ժամանեա՛ մեզ ի յօգնութիւն,
զի մի՛ մեղաւք ի փորձութիւն.
մաքուր մարմնով լինել ի բուն,
արդար հոգւով վճալ արթուն։

Ի էէն հայցեմք արտասուագին,
նախավկայ Տեառն առաչին,
սուրբ Ստեփանոս բացող գերկին,
տեսող զՅիսուս յաջմէ ծնողին։

Լե՛ր բարեխօս առեմք ոյին
տալ մեզ հանգիստ ի յանկողնին,
արթուն լինել ի յառաւօտին,
բարեբանել զլոյսն անհրին։

Խնդրեմք ի էէն, հայր պատուական,
լուսաւորիչ ազգի մարդկան.
տէր սուրբ Գրիգոր պես Պարթեւեան։
լե՛ր մեզ պարիսպ եւ պահապան։

Ծրնողաբար ի մեզ գրթա՛,
զցրուեալ զորդիս Ռո ժողովեա՛.
յուրախութիւն զմեզ կոչեա՛,
եւ ի բարիս առաջնորդեա՛։

Կենդանարար թագաւորին
դուէ ճշմարիտ զինուոր նրմին,
սուրբ մարտիրոսք վկայ Քրիչին,
որ յաղթեցիր ըզթշնամին։

Հօրըն լուսոյ միշտ մաղթեցէք
զՈրդին ընդ Հօր աղաչեցէք.
Հոգւոյն շնորհօք մեզ օգնեցէ՛ք,
ի բանսարկուէն զմեզ թափեցէ՛ք։

Զիւնափայլեալ երամիկ ընտրեալ
ճգնաւորաց դասք երանելի,
թռչնոց երկնից էք նրմանեալ,
յայրս եւ ի ծերպս բնակեալ։

Ղօղեալ հոգւոյ մեր ի մարմին,
լերո՛ւք պարիսպ ընդդէմ չարին,
զի յաղթեսցուք հակառակին,
խոտակելով ըզգէնս նորին։

Ձրագունիք վառեալ լուսով ի լի,
սուրբ կուսանաց դասք երամի,
արժան եղեալք առագաստին
եւ անթառամ սուրբ պսակին։

Մեզ բարեխօս լերո՛ւք սիրով,
առ տէր Յիսուս աղերսելով,
ի փորձանաց զմեզ փրկելով,
յանէծք հոյն ազատելով։

Ցանեղ լուսոյ աստուածային,
լուսոյ սեղծեալ բանիւ նորին.
զարդարեցայք հոգւով շնորհին
դասք իննեկի զօրք երկնային։

Նախանձամէ զմեզ փութասջիք.
եւ յօգնութիւն առ մեզ հասջիք,
որ յԱստուծոյ հրաման առիք,
ո՛վ ճշմարիտ մեր սիրելիք։

Շնորհատու ազգի մարդկան
տէր մեր Յիսուս աննենական.
զմեզ պահեա՛ միշտ անսասան
ասջի մինչ յօր Ռո գալստեան։

Ողորմութիւն մեզ պարգեւեա՛,
զհիւանդ հոգիս մեր բժշկեա՛.
ի բանսարկուէն ըմպեզ փրկեա՛,
եւ ի չարեաց անփորձ պահեա՛։

Զար իշխանիքն խաւարին
որք ընդ ծառայս Ք՝ մարտնչին.
Ք՝ նշանաւ սրբոյ Խաչին
աներեւոյթ կործանեսցին

Պարգեւիչ՝ բարեաց մարդկան,
ամենառատ յամենեսեան,
պատրաստեցո՛ մեզ անխափան
զպէսս հոգւոյ եւ մարմնական։

Ջուր շրնորհեա՛ ինձ առատաւոյց
զի լրացից զգործս չարեաց,
արժան եղէց Ք՝ հարսանեաց
ընդ իմաստուն սուրբ կուսանաց։

Ոսո բարի՝ իմ տէր Յիսուս,
եւ նաց կենաց սովեալ հոգւոյս,
առաջնորդեա՛ մոլորելոյս,
եւ կերակրեա՛ զմիտս ընդ մարմնոյս։

Սրբեա՛ զհոգիս յաղտոյ մեղաց
ի զանազան չար փորձանաց.
տո՛ւր ինձ գրնալ ըստ Ք՝ կամաց,
զի արժանի եղէց փառաց։

Վ՚իրաւորեաց զիս քննամին,
այլ որ չկամի զկամս մարդկային,
զիս բժշկեա՛ տէր երկնային,
լուսաւորեա՛ լուսով Ք՝յին։

Տրամեալ հոգւոյս լե՛ր ըսփոփիչ,
ցաւած մարմնոյս լե՛ր դարմանիչ,
մոլար մրտացըս լե՛ր ուղղիչ,
ամենառատ բարեաց տրւիչ։

Բամից սրբոց աղաչանաց,
ինձեակ դասուց հրեղէն զօրաց,
առաքելոց Ք՝ սիրողաց։
մարգարէից տեսանողաց։

Ցանկալի հայրապետաց,
եւ երջանիկ վարդապետաց.
արիւնաներկ մարտիրոսաց,
եւ զերազոյն ճգնաւորաց։

Իւսապրսակ սուրբ կուսանաց,
որ վեսպիդ սպասեն փառաց,
եւ ամենայն մսոուր անձանց
նեսեւողաց հոյին կամաց։

Փրկեա՛ զհոգիս ի տանջանաց,
զազրասեսիլ յանիուն որդանց.
լսել տո՛ւր ձայն հո աւետաց
զոր խոսացար հոց սիրողաց։

Քեզ հօրդ փառք միշտ առաքեմք,
զորդիդ ընդ Հօրդդ դաւանիմք,
զՀոգիդ սուրբ բարեբանեմք,
երրորդութիւնդ երկրպագեմք։

ՎԵՐՋ

-23.000-

ՀՀ Ազգային գրադարան
NL0822855

1
878